


ԵՐԵՎԱՆԻ ՄԻՏԻՔԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ

2014 ԹՎԱԿԱՆ N 14-15 (1308-1309) ՆՈՅԵՄԲԵՐ





ԱՊԱԳԱ ԲԺՇԿ

Գլխավոր խմբագիր
ՍԵՂԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԹՈՐՈՍՅԱՆ
 Editor Seda KH. TOROSYAN

Թղթակից
 ԱԻՂԱ ՀԱԿՈՔՅԱՆ

Անգլերեն նյութերի պատասխանատու
 ԱՆԱԶԻՏ ԴԵՄՈՒՐՉՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝
 ԼԻԼԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Լրատվական գործունեություն իրականացնող՝
 Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
 բժշկական համալսարան պետական ոչ
 առևտրային կազմակերպություն:

Գրանցման վկայական N 03U054456, տրված 2000թ:
 Թերթը գրանցված է ՀՀ արդարադատության
 նախարարությունում:

Գրանցման վկայական N 299: Տպագրվում է
 «ԼԵԳԱԼ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ իրատարակչությունում:

Հասցե՝ Երևան 0025, Կոռյունի փ. 2
 Հեռախոս՝ (060) 62-12-46, 2-46,
 E-mail: apagabzhishk@ysmu.am

Ծավալը՝ 56 էջ:
 Տպաքանակը՝ 600 օրինակ:
 Անվճար:

**«ՀԵՐԱՑԻ» ԹԻՎ 1 ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱԶՄԻ
 ՍԵՋ ԱՅՍՕՐ ՄՏՆՈՒՄ ԵՆ 20-ԻՑ ԱՎԵԼԻ
 ԿԼԻՆԻԿԱՆԵՐ ԵՎ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ**

Թերապիայի (գործում է 1920-ից), վիրաբուժության (1920), ակնաբուժության (1929), ֆիզիոթերապիայի և ռեաբիլիտոլոգիայի, սպորտային բժշկության (1960), ալերգոլոգիայի և իմունոլոգիայի (1996), պլաստիկ վերականգնողական և միկրովիրաբուժության (1996), վնասվածքաբանության և օրթոպեդիայի (1997), դիմածնոտային վիրաբուժության և ԼՕՌ (2002), սեքսապաթոլոգիայի (2005), անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի (2010), ընդհանուր և ինվազիվ սրտաբանության (2010), սրտաբանական (2004) կլինիկաները: Այդ կազմի մեջ են մտնում նաև կլինիկական ախտորոշիչ լաբորատորիան (1930), «Հերացի» պոլիկլինիկան (1965), դեղատունը (1965), կլինիկական պաթոլոգիայի լաբորատորիան (2000), ուսանողական հանրակացարանի բուժկետը (2006), թիվ 1 և թիվ 3 ստոմատոլոգիական պոլիկլինիկաները (2006), ռադիոլոգիայի կենտրոնը (2010), անհետաձգելի բուժօգնության ծառայությունը (2010), նյարդավիրաբուժության և գլխուղեղի կաթվածների բուժման մասնագիտացված կենտրոնը (2010), միավորված վիրահատական բլոկը (2012) և կենտրոնական համալիրի բուժկետը:

Կլինիկական հիվանդանոցի ստեղծմանը, նրա պատմությանը, առողջապահության երախտավորներին վերաբերող նյութերի համար փաստագրական հիմք են հանդիսացել Լևոն Հովհաննիսյանի, Վլադիմիր Մարտիրոսյանի, Ստելլա Վարդանյանի, Ռաֆայել Փարսադանյանի հեղինակած աշխատություններում նշված փաստերը: Թողարկման ստեղծման ուղղությամբ մեծ են համալսարանի գրադարանի վարիչ Արմինե Հարությունյանի և խմբագրակազմի աշխատակից Աիդա Հակոբյանի ջանքերը: Թողարկման նյութերը՝ Սեդա Թորոսյանի:

Մի տեսակ անսովոր է նշել շենքի, շինություն, կառույցի, հուշարձանի հորելյանը:

Այս դեպքն ուրիշ է:

Խոսքը վերաբերում է Հայաստանում առաջին պետական հիվանդանոցի շենքի 100-ամյա հորելյանին, քանի որ, ըստ արխիվային փաստաթղթերի, հիվանդանոցը ստեղծվել է ավելի վաղ, փոխել մի քանի հասցե, մինչև նրա համար հատուկ շենքի կառուցումը, որի 100-ամյակը լրանում է 2014 թվականին:

1914 - 2014





ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆԸ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀՐԱՎԻՐԵԼ Է ԵՐԵՎԱՆ

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի և ՀՀ-ում Հնդկաստանի դեսպան Սուրեշ Բաբու Թադիպանենիի հանդիպման ընթացքում քննարկվել են հայ-հնդկական կրթական համագործակցության հարցեր, մասնավորապես անդրադարձ է եղել բարձրագույն կրթության ոլորտում ուսանողների փոխանակման ու գիտակրթական ծրագրերին: Այս համատեքստում նախարարը շեշտել է, որ օտարերկրյա ուսանողների ներգրավումը Հայաստանի կրթական քաղաքականության առաջնահերթությունն է:

Բոլոնիայի գործընթացում Հայաստանի քարտուղարության վերջին զարգացումները ներկայացնելուց հետո ՀՀ ԿԳ նախարարը, օգտագործելով առիթը, Հնդկաստանի կրթության նախարարին հրավիրել է մասնակցելու 2015 թվականին Երևանում կայանալիք Բոլոնիայի գործընթացի նախարարական գագաթաժողովին և քաղաքական ֆորումին: Դեսպան Սուրեշ Բաբու Թադիպանենին նշել է, որ Հնդկաստանում մեծ հետաքրքրու-

թյուն կա Հայաստանի բարձրագույն կրթության նկատմամբ:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև ավարտական փաստաթղթերի փոխճանաչման, կրթության և գիտության ոլորտում երկու երկրների միջև ստորագրվելիք համաձայնագրերին, ինչպես նաև երկու երկրների փոխադարձ համագործակցությանը վերաբերող մի շարք այլ հարցերի:

Հասկանալի է, որ մեծաթիվ հնդիկ ուսանողներ ունեցող մեր կրթօջախին հետաքրքրում են այս հանդիպման ընթացքում բարձրացված բոլոր հարցերը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՄԱԳՂԵԲՈՒՐԳԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ԵՊԲՀ-Ի ՄԻՋԵՎ

ՀՀ կրթության և գիտության նախարարի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էր նաև ԵՊԲՀ ռեկտոր, պրոֆեսոր Մ.Ձ. Նարինյանը, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում հանդիպում է ունեցել ԳԴՀ Սաքսոնիա-Անհալթ երկրամասի գիտության և տնտեսության նախարար Հ. Մյուլդինգի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են բարձրագույն կրթության և գիտության բնագավառում երկու երկրների միջև համագործակցության առնչությամբ մի շարք հարցեր: Նախարարն իր գործընկերոջն է ներկայացրել Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում իրականացվող բարեփոխումները և գերմանացի գործընկերոջը հրավիրել մասնակցելու 2015 թվականին Երևանում կայանալիք Բոլոնիայի գործընթացի անդամ երկրների նախարարական գագաթաժողովին: Կարևորելով Հալլե-Վիտենբերգի Մարտին Լյութերի անվան համալսարանի «Մեսրոպ» հայագիտական հետազոտական կենտրոնի գործունեությունը և շնորհակալություն հայտնելով գերմանական

կողմին կենտրոնին աջակցություն ցուցաբերելու համար՝ նախարարն առաջարկել է մի շարք նոր ծրագրեր՝ մասնավորապես Գերմանիայում գտնվող հայկական մշակութային ժառանգության թվայնացման նախագիծ: Նախարարի գլխավորած պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել նաև Մագդեբուրգի և Հալլեի Մարտին Լյութերի անվան համալսարանների ռեկտորների հետ, որոնց ընթացքում քննարկվել են միջբուհական համագործակցության ընդլայնման հնարավորությունները: Բացի այդ՝ համաձայնագիր է ստորագրվել Մագդեբուրգի համալսարանի և Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի միջև, որով նախատեսվում են երիտասարդ դասախոսների և բժիշկների փոխանակման ծրագրեր: Հայկական պատվիրակությունը հանդիպել է նաև ԳԴՀ Բունդեսբազում կրթական հարցերով հանձնաժողովի ղեկավար կազմի հետ և քննարկել երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

ԷՍՏՈՆԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ: ՄՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀՀ կրթության և գիտության նախարարի պաշտոնական այցով Էստոնիայի Հանրապետությունում գտնվելու օրերին համաձայնագիր է ստորագրվել Հայաստանի և Էստոնիայի միջև կրթության և հետազոտության բնագավառում համագործակցության վերաբերյալ: Համա-

ձայնագրով նախատեսվում է ամրապնդել և զարգացնել միջնակարգ, միջին մասնագիտական, բարձրագույն կրթության և գիտահետազոտական հաստատությունների միջև փոխադարձ հարաբերությունները: Հատկապես նախատեսվում է խրախուսել փոխանակման ծրագրե-

րը՝ աշակերտների, ուսանողների, ուսուցիչների, դասավանդող և գիտական անձնակազմերի համար՝ գիտահետազոտական և կրթական հաստատությունների կուտակած փորձին և ձեռքբերումներին ծանոթանալու նպատակով:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶՅ ՆԱԽԱԳԱՅԻ ՄՈՏ

ՀՀ նախագահի հրավիրած խորհրդակցության ընթացքում, որին մասնակցել են ՀՀ կրթության և գիտության նախարարը և պետական ԲՈւՀ-երի ղեկավարները, ոչ միայն քննարկվել են նախորդ խորհրդակցության ժամանակ տրված հանձնարարականների կատարման ընթացքը, պետական ԲՈւՀ-երին դեռևս մտահոգող խնդիրները, այլև նախարարի կողմից ներկայացվել են ՀՀ նախագահի հանձնարարականների հիման վրա մի շարք ուղղություններով իրականացված աշխատանքներն ու դրանց արդյունքները:

Պետական ԲՈւՀ-երի համար ընդհանրական խնդիրները, որոնց լուծման գործում ուսումնական այդ հաստատությունները պետական աջակցության կարիքն են ունեցել, հիմնականում վերաբերել են ԲՈւՀ-երի գործունեության ոլորտում հավասար մրցակցային պայմանների ապահովմանը, ոլորտում պետական միասնական քաղաքականության մշակմանն ու այդ գործընթացում՝ ոլորտը կարգավորող օրենսդրության արդիականացման աշխատանքներում ԲՈւՀ-երի ներկայացուցիչների ներգրավմանը, ԲՈւՀ-երի կազմակերպարավական կարգավիճակի բարեփոխմանը, բնագիտական և ինժեներական կրթության զարգացման մասին համալիր պետական ծրագրի մշակմանը, բուհական հանրակացարանային համալիրի կառուցման հնարավորություններին, ԲՈւՀ-երին կից գործող ավագ դպրոցների ուսուցիչների համար սոցիալական փաթեթների կիրառմանը, ռազմական և քաղաքացիական ԲՈւՀ-երի միջև համագործակցու-



թյան զարգացմանն ու մի շարք այլ թեմաների:

Նախարարի ղեկույցից հետո ղեկավարները ներկայացրել են իրենց ղեկավարած ուսումնական հաստատությունների առաջնահերթ խնդիրները, ձեռքբերումները և զարգացման ծրագրերը: Խորհրդակցության ավարտին նախագահ Սերժ Սարգսյանը հանձնարարել է ՀՀ ԿԳ նախարարին և ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարին՝ ամփոփել բարձրացված խնդիրներն ու դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները քննարկել համապատասխան գերատեսչությունների հետ և ղեկույցել արդյունքների մասին՝ վստահեցնելով, որ բարձրացված բոլոր խնդիրները և դրանց հնարավոր լուծումները հանգամանորեն կքննարկվեն, և ղեկավարների խորհուրդը կտեղեկացվի արդյունքների մասին:

140 ՄԼՆ ԴՐԱՄ՝ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽՅԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ՀՀ կառավարությունը վերջերս կայացած նիստում որոշում է ընդունել կառավարության պահուստային ֆոնդի հաշվին 140 միլիոն դրամ տրամադրել Հայաստանի երիտասարդական հիմնադրամին՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին կրթաթոշակներ հատկացնելու նպատակով:

Նշենք, որ Հայաստանի երիտասարդական հիմնադրամը, սկսած 2011 թվականից, իրականացնում է «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար համակարգում չընդգրկված, բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվություն ունեցող առաջին և երկրորդ

կուրսի ուսանողներին կրթաթոշակների տրամադրում» ծրագիրը, որի արդյունքում 2011 թվականին կրթաթոշակ են ստացել 600, 2012 թվականին՝ 750, 2013 թվականին՝ 810, իսկ 2014 թվականին՝ 776 ուսանողներ: Հաշվի առնելով սոցիալապես անապահով խավերի համար վերոնշյալ ծրագրի արդյունավետությունը և կարևորությունը, վճարովի ուսուցման համակարգում ուսանողների ներգրավվածության մեծ ծավալը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունն առաջարկել է Հայաստանի երիտասարդական հիմնադրամի միջոցով իրականացնել ծրագիր՝ կրթված օգնելու ծանր սոցիալական պայմաններում գտնվող, բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսա-



նողներին: Վերոնշյալ ուսանողները, դիմելով Հայաստանի երիտասարդական հիմնադրամ և համապատասխանելով որոշակի չափանիշերի, մրցութային կարգով կստանան ուսման վարձի փոխհատուցում: Ծրագրի իրականացումը նպաստում է կրթության մատչելիությանը, արժևորում է կրթված լինելու գաղափարը՝ ինչը դրական ազդեցություն է ունենում երիտասարդ սերնդի ապագան կերտելու գործում:



ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈւՂԵՐՁ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ

2014 թվականը յուրօրինակ հոբելյանական տարի է բժշկական համալսարանի համար, քանի որ նշում ենք համալսարանական կլինիկայի 100-ամյակը:

Շատ չեն 100-ամյա կենսագրություն ունեցող կլինիկաները, որոնք իրենց

ստեղծման առաջին օրվանից առ այսօր համարվել և համարվում են լավագույնը և շարունակում են պատվով կրել առաջինը լինելու իրավունքը:

Մեր կլինիկայի պարագայում առավել ևս կարևորվում է առաջինը լինելու հանգամանքը ոչ միայն այն պատճառով, որ կլինիկան հանդիսանում է առաջին պետական հիվանդանոցը Հայաստանում, այլև այն պարզ պատճառաբանությամբ, որ այստեղից են սկսել իրենց բժշկական կենսագրությունը նաև մեր այն երախտավորները, ովքեր հետագայում հիմնեցին մասնագիտական կլինիկաներ, կենտրոններ, հիվանդանոցներ, բժշկական դպրոցներ:

Անվերապահորեն կարելի է ասել՝ առողջապահության բնագավառի երախտավորների հիմնական մասը իր ողջ կենսագրությունը կապել է այս կլինիկայի հետ: Անունների թվարկումը մեզ շատ հեռուն կտանի, ուղղակի նշենք, որ մինչև այսօր էլ առաջին հիվանդանոցը ամենաառաջինների շարքում է:

Այս հոբելյանը հնարավորություն է ընձեռում շնորհավորել առաջին հիվանդանոցի անձնակազմին՝ երախտագիտությամբ հիշելով նաև բոլոր նրանց, ովքեր բարի անուն ու հիշատակ թողնելով՝ առաջին հիվանդանոցը բժշկագիտության բնագավառում դարձրին պատմական, մասնագիտական, կրթական, ճարտարապետական արժեք:

Երախտավորների ավանդները այսօր շարունակում է նրանց ստեղծած բարոյական արժեքներով դաստիարակված երիտասարդ սերունդը, որը մեծ պատասխանատվություն է կրում առաջին հիվանդանոցի վարկանիշի բարձրացման ուղղությամբ:

Շնորհավորում են բոլորին և բոլորիս, քանի որ բժշկական կրթություն ստացած բոլոր սերունդները անցել են առաջին հիվանդանոցի դպրոցը:

ՄԻՔԱՅԵԼ ԶԱԽԱՐԻ ՆԱՐԻՄԱՆՅԱՆ
ԵՊԲՀ ռեկտոր

ՊԱՏՎԱԽՆԴՐՈՐԵՆ ԿՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

Մեկդարյա հորեյան նշել՝ նշանակում է մեծ պարտավորվածություն ունենալ պահպանելու հին ավանդույթները և կազմելու հետագա գործունեության նոր ծրագրեր, որոնք հիմք կտան վստահ լինելու, որ լավագույն ավանդույթները ոչ միայն շարունակվում են, այլև՝ ստեղծվում են նորերը:

Ավանդույթները հնարավորություն են տալիս տեղյակ լինել առաջին հիվանդանոցում ծավալված մեր երախտավորների գործունեությանը: Փաստերի մեջ խորանալու դեպքում նկատում ենք, որ մեր անվանի մասնագետներից յուրաքանչյուրը դպրոց է հիմնադրել, ուղղություն է ստեղծել, զարգացրել իր բնագավառը: Նրանց մեջ եղել են գիտական մտքի հսկաներ, կազմակերպչական գործի հմուտ վարպետներ, հայրենասիրությամբ տոգորված մեծ անհատականություններ, որոնց նվիրական աշխատանքի արդյունքում ունենք այն, ինչը կարող է հպարտության զգացման հիմք հանդիսանալ:

Երբեմնի առաջին հիվանդանոցն այսօր իր անվանումը որպես առաջին հիվանդանոց ոչ միայն պահպանել է, այլև դրան ավելացվել են «Յերացի», համալսարանական կոչումները: Ստացվում է՝ «Յերացի» համալսարանական թիվ 1 կլինիկա. անվանումներ, որոնցից յուրաքանչյուրը տիտղոսի հնչեղություն ունի:

Լինել առաջինը 100 տարի՝ նշանակում է այսուհետև ևս լինել առաջինը:

Կոչվել մեր մեծանուն բժշկապետի անվամբ՝ սա նույնպես նշանակում է լինել առաջինը, քանզի նրա անվամբ կոչվելու պատվին արժանանալը արդեն նշանակում է լինել առաջինը:

Կոչվել համալսարանական կլինիկա՝ նշանակում է լինել ամենաառաջինը: Աշխարհում լավագույն կլինիկաները համալսարանական կլինիկաներն են, այն պարզ պատճառաբանությամբ, որ այստեղ աշխատում են ոչ միայն շարքային բժիշկներ, այլ գիտական աստիճաններ ունեցող գիտնական-բժիշկներ, ովքեր իրենց բնագավառի հմուտ գիտակներն են՝ տեղյակ իրենց մասնագիտության բոլոր նրբություններին և այդ ուղղությամբ գիտական նվաճումներին:

Չամենատեղ այսօրվա առաջին հիվանդանոցը նախկինի հետ՝ բնականաբար հնարավոր չէ այն առումով, որ այսօր առաջին հիվանդանոց ասելով հասկանում ենք 20-ից ավելի կլինիկաներ, որոնցից յուրաքանչյուրը նեղ մասնագիտացմամբ իր գործն է անում՝ առողջապահական բարձրակարգ մասնագիտացված օգնություն ապահովելով մեր ազգաբնակչությանը: Շնորհավոր մեկդարյա հորեյանդ, մեր բոլորի կլինիկական կրթության դարբնոց:

ԱՐՄԵՆ ՄԻՔԱՅԵԼԻ ՄԻՆԱՍՅԱՆ
ԵՊԲԳ կլինիկական աշխատանքների գծով պրոռեկտոր





ԵՊԲՀ «ՀԵՐԱՑԻ»


ԹԻՎ 1

ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ 100-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ

2014 թվականը
Երևանի պետական
բժշկական համալսարանի
կլինիկական համալիրի
100-ամյա հոբելյանի, իսկ
պատմական առումով ավելի
ստույգ՝ թիվ 1

հիվանդանոցի այսօրվա
շենքի հիմնադրման
100-ամյակի տարին է.
շենք, որի ստեղծման
պատմությունը
արժանի է պատմական
անդրադարձի:

Այդ նպատակադրմամբ՝
մինչ կլինիկական
հիվանդանոցի շենքի
կառուցման մասին մեր ասելիքը,
արժե ներկայացնել այն
բուժաստատության ստեղծման
պատմությունը, որի համար
կառուցվում էր այսօրվա՝
100-ամյա կենսագրություն
ունեցող այն շենքը, որն
այսօր էլ գործում է նույն
նպատակադրմամբ, ինչին կոչված
էր իր հիմնադրման օրվանից:



Հայաստանի պետական արխիվում
պահպանվող այս փաստաթուղթը
ներկայացնում է Երևանի
քաղաքային հիվանդանոցի նոր
շենքի նախագիծը՝ կազմված 1914
թվականին

ՄԻՆՉԵՎ ԱՌԱՋԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՅԻ ԲԱՑՈՒՄԸ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Անդրկովկասը 1849 թվականին ենթարկվեց վարչական նոր բաժանման: Ստեղծվեցին Թիֆլիսի, Քութայիսի, Դերբենդի, Շամախիի և Երևանի նահանգները: Նախկին Հայկական մարզի փոխարեն ստեղծվեց Երևանի նահանգը, որտեղ բնակվում էր 650.000-ից ավելի մարդ: Մինչև առաջին հիվանդանոցների կազմակերպումը նահանգի բնակչությունը զուրկ էր ստացիոնար բուժօգնությունից՝ չհաշված այն եզակի դեպքերը, երբ այս կամ այն ճանապարհով տեղի բնակիչներին բուժման էին ընդունում ռուսական բանակի զինվորական հոսպիտալում:

1857 թվականին Երևանում հիմնվեցին առաջին դեղատները:

1880 թվականի փետրվարի 6-ի կառավարական հրամանագրով հաստիքներ են տրամադրվում գյուղական

բժիշկներ և մանկաբարձուհիներ պահելու համար:

1880 թվականին Երևանի ողջ նահանգում աշխատում էին 10 բժիշկ և 5 մանկաբարձուհի:

1892 թվականին սահմանազատվեցին գյուղական և գավառական բժշկի պարտականությունները:

Այսպիսով՝ սկիզբ դրվեց գյուղական առողջապահությանը Երևանի նահանգում:

Նահանգում բժշկական գործը ղեկավարում էր նահանգային բժիշկը, որն ուներ օգնական, Երևանում՝ քաղաքային բժիշկը և 1 մանկաբարձուհի, իսկ գավառներում՝ գավառային բժիշկը և 1 մանկաբարձուհի:

Ինչպես վկայում են Հայաստանի պատմության կենտրոնական արխիվի ֆոնդերում պահված նյութերը՝ 1880-ականներին Երևանում հասունանում է բժշկական հիմնարկ ստեղծելու անհրաժեշտությունը:

ԵՐԵՎԱՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՅԻՎԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Երևանում առաջին բուժարանի և հիվանդանոցի կազմակերպման նախաձեռնությունը պատկանում է Լևոն Տիգրանյանին: Թե ինչպիսի դժվարությունների է հանդիպել Տիգրանյանն այդ գործում՝ վկայում են Հայաստանի կենտրոնական արխիվում պահվող «Երևանի բուժարանի և հիվանդանոցի կազմակերպում» մեծածավալ փաթեթի փաստաթղթերը:

Մինչ այդ բուժհիմնարկների կազմակերպումը՝ Երևանը զուրկ էր որևէ բուժարանից: Եվ ինչպես նշել է Երևանի նահանգապետը՝ 12.000-անոց բնակչությունը չուներ բժշկասանիտարական որևէ հիմնարկություն չքավոր դասակարգի համար, քանի որ չքավորները միջոցներ չուներին բժշկին տուն հրավիրելու:

Հայաստանում պետական բժշկության սկզբնավորումը նախապես փաստորեն կապված էր համաճարակների դեմ կազմակերպված կարանտինների հետ:

Ահա ինչու՝ քաղաքային դուրման մի շարք որոշումներ է ընդունում փողոցների և հրապարակների մաքրման և սանիտարական կանոնները խախտողներին պատժելու վերաբերյալ, 1879 թվականին ընդունելով «պարտադիր որոշում»՝ Երևան քաղաքի բնակիչների կողմից ժողովրդի առողջությունը պահպանելու վերաբերյալ: Նույն թվին Երևանի քաղաքային դուրմայի մի քանի անդամներ հատուկ նամակով դիմում են քաղաքագլխին՝ նշելով քաղաքային դուրմայի արտակարգ նիստ գումարելու և սանիտարական հարցը քննելու անհրաժեշտությունը, քանի որ «գարունը բացվելուց հետո հակասանիտարական վիճակը կարող է Երևանում շատ հեշտությամբ առաջ բերել համաճարակ»:

Մի քանի տարի տևող գրագրություններից հետո, վերջապես, 1880 թվականի սեպտեմբերի 19-ին Երևանի քա-

ղաքային վարչության կողմից հիմնվում է առողջապահական հանձնաժողով, որի անմիջական նախաձեռնողը եղավ բժիշկ Լևոն Տիգրանյանը:

Այս հանձնաժողովը հիմնականում իր գործունեությունը նպատակաուղղել է քաղաքի սանիտարական վիճակի բարելավմանը:

Ըստ այս հանձնաժողովի կանոնադրության՝ «... Երևանի առողջապահական հանձնաժողովն արգելում է կտուրներից քերած ձյունը թափել փողոցները և պահանջում է ձյունը անձեղ (լցնել) բակերը, իսկ բազարի խանութների կտուրներից քերած ձյունը տանել, անձեղ հրապարակի առվի մոտ, որպեսզի պակաս ցեխ գոյանա քաղաքի փողոցներում և բազարում, որ քաղաքի ապակառությունը նվազի»:

ՆԱԽԱԳԱՐ ԱՌՈՂՋԱՊԱՀՄԱԿԱՆ ՀՄՆԱՍԺՈՂՈՎԻ՝
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲԺՇԿ
ԼԵՎՈՆ ՏԻԳՐԱՆՅԱՆ
(«ՊՍԱ» 1881թ., ԹԻՎ 7)

Պարզունակ պատկերացում չկազմելու համար այս լուսավոր մտավորականի, համարձակ քաղաքացու և հայրենասեր անհատի մասին՝ նշենք, որ Լ. Տիգրանյանը հանդես է եկել դասախոսություններով, համարձակ հոդվածներով, որոնք վերաբերել են Երևանի բնական դիրքին, Սևանա լճի և նրա շրջակայքի ազդեցությանը քաղաքի կլիմայի վրա, Երևանի շրջակայքի հրաբխային ծագման նշանակությանը, Մասիսից և Արագածից փչող քամիների ազդեցությանը Արարատյան դաշտի վրա և նմանատիպ բազմաթիվ ու բազմազան այլ թեմաների՝ ընդհուպ մինչև Երևանի բնակչության ծնելիության, մահացության, բնական աճի հարցերը: Տիգրանյանին մեծապես մտահոգել է քաղաքի ծառապատման հարցը: Այս առնչությամբ քաղաքային խորհրդում կայացած քննարկման արդյունքում ժողովականները որոշում են կայացրել. «Երկրորդական նպատակին գումար տրամադրել չարժե»:

Խոսելով Նորքի ճանապարհի



անբարեկարգ վիճակի մասին՝ նա հուժնորով գրում է, որ նորքեցիները չպետք է հույսը դնեն քաղաքի վարչության վրա, քանի որ Նորքի ճանապարհը այն ժամանակ կբացվի «... Երբ քաղաքի իրավասուները, մանավանդ քաղաքագլուխը, պարտավորված կլինեն օրը մեկ անգամ գնալ Նորք: Բայց որովհետև անկարելի է դնել նրանց վրա այդպիսի մի պարտավորություն, ուրեմն և նորքեցիք ոչինչ չպետք է հուսան Երևանի քաղաքային վարչությունից»: («Պսակ» 1881թ., թիվ 21):

Տիգրանյանը Նորքի բնակիչներին խորհուրդ է տալիս վերցնել «ամենաազնիվ գործիքները»՝ քլունգն ու բահը և սեփական ուժերով կարգավորել իրենց թաղամասի ճանապարհը:

Չմոռանանք, որ Տիգրանյանը հանձնաժողովի նախագահի պարտականությունը կատարել է առանց որևէ վարձատրության՝ էնտուզիազմով: Սակայն նրա աշխատանքի, առաջարկվող ծրագրերի նկատմամբ տեղական իշխանությունների քար անտարբերությունը ի վերջո մարում է նրա աշխատանքային եռանդը, և նա հրաժարվում է հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարելուց՝ իրագործելով իր ծրագրերի միայն մի չնչին մասը:

1884 թվականի փետրվարի 21-ին քաղաքային դուման որոշում է ընդունում դրամ բաց թողնել հիվանդանոց կազմակերպելու համար և հաստատում է այդ գործի կազմակերպական հանձնաժողով՝ Լևոն Տիգրանյանի նախագահությամբ, ով խստորեն քննադատում է Թիֆլիսի քաղաքային վարչությունից ստացված բուժարանի հրահանգը, որը պետք է ընդօրինակվեր Երևանի քաղաքային վարչության կողմից: Երևանի բժիշկների կողմից կազմվում են բուժարանի գործունեության համար մի քանի կանոնադրության նախագծեր, սակայն բժշկական ժողովում հաստատվում է Տիգրանյանի ներկայացրածը:

Նրա առաջարկած կանոնադրության մեջ տեղ էին գտել այնպիսի կետեր, որոնք նախատեսում էին ձրի օգնություն անհետաձգելի հիվանդությունների դեպքում, աղքատ հիվանդներին օգնություն՝ 30 տոկոս զեղչով, հիվանդների ընդունելության կատարում ամեն օր կոնկրետ ժամերի, այսպես կոչված՝ «աղքատների բժիշկների» կողմից...

Տիգրանյանի և քաղաքային վարչության կազմած կանոնադրությունների նախագծերը քննարկվում են Երևանի նահանգային վարչության բաժանունների միատուն: Տիգրանյանը առաջարկ է մտցնում, որպեսզի մինչև հիվանդանոցի բացումը աշխատավարձ ստացող բժիշկներն առանց հիվանդներից վճար պահանջելու այցելեն նրանց տները:


ԲՈՒԺԱՐԱՆԻ ԵՎ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԲԱՅՈՒՄԸ ԶԳՉԳՎՈՒՄ Է ՄԻ ՔԱՆԻ ՏԱՐԻ

Եվ սա ինքնին հասկանալի է, քանի որ իշխանությունները չէին կարողացնում բավարարել անգամ ամենաչնչին պահանջները, այն է՝ դրամ բաց թողնել «3 նստարան, 1 ջրաման, 2 բաժակ, 1 թեյնիկ, 1 կաթսա գնելու և 3 սենյակ վարձակալելու համար»:

Առաջին քաղաքային բժիշկը Գևորգ Տեր-Կարապետյանն էր:

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

ԼԵՎՈՆ ՏԻԳՐԱՆՅԱՆ (1842-1906)



Ծնվել է Երևանում: Միջնակարգն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Թիֆլիսում: 1859-ին մեկնել է Սանկտ Պետերբուրգ, որտեղ հայագետ Կարապետ Եոյանի օգնությամբ լրացրել է ուսման պակասը: Տարիներ անց ընդունվել է Սանկտ Պետերբուրգի ռազմաբժշկական ակադեմիան, այնուհետև տեղափոխվելով Դորպատ՝ 1875-ին ավարտել է համալսարանի բժշկական ֆակուլտետը: Վերադառնալով Սանկտ Պետերբուրգ՝ աշխատել է Նադեժդինյան ծննդատանը: 1879-ին վերադարձել է Երևան և աշխատել որպես Երևանի քաղաքային բժիշկ:

1889-ին ցարական իշխանությունը նրան արտաքսել է Դորպատ, որտեղից անցել է Գերմանիա և Ֆրանսիա, որոշ ժամանակ զբաղվել բժշկությամբ, իսկ 1893-ին վերադարձել է հայրենիք:

Չայ բժշկության պատմության մեջ Լ. Տիգրանյանն առաջինն է առաջ քաշել կանխարգելիչ բժշկության գաղափարը: Նրա ղեկավարությամբ 1880-ին ստեղծվել է առողջապահական մշտական հանձնաժողով, 1881-84 թթ. հրատարակել է Դայաստանի առաջին բժշկական հանդեսը՝ «Առողջապահական թերթը», որը տարածվել է ոչ միայն Երևանում, այլև՝ հայաբնակ բազմաթիվ քաղաքներում: Հրատարակել է «Մարդակազմություն» աշխատությունը, որը երկար տարիներ դասագիրք է եղել հայկական դպրոցների համար: Ջբաղվել է բժշկական տերմինաբանության հարցերով, գրել է «Անատոմիական բառարան» և «Բառարան բժշկական բույսերի» լատիներենից հայերեն և ռուսերեն: Թարգմանել է Դյուգո Պոլի «Բժշկարանը», որը հրատարակվել է 1892-ին, գրել է «Դորպատի համալսարանը և նրա հայ ուսանողները» աշխատությունը: Լ. Տիգրանյանը բժշկի և առողջապահության կազմակերպչի իր տաղանդով շատ բանով է նպաստել Դայաստանի առողջապահության գործի զարգացմանը:

ՆՈՐՔԻ ԾԱՆԱՊԱՐՅՈՒՄ



Այնուհետև մարզին տրամադրվում է նաև մարզային բժշկի հաստիք:

Եթե Գևորգ Տեր-Կարապետյանը առաջին պետական բժիշկն էր Հայկական մարզում, սակայն չունեի համապատասխան կրթություն, ապա Լոռու-Մելիքյանն առաջին դիպլոմավոր բժիշկն էր, ով պաշտոնավարում էր Հայաստանում: Մատենադարանում պահվում են Լոռու-Մելիքյանի նամակները, որոնք փաստացի վկայությունն են ինչպես այդ ժամանակ Հայաստանում տիրող հակասահմարական վիճակի և համաճարակների, այնպես էլ՝ նամակների հեղինակի հակահամաճարակային գործունեության մասին: Նրա նամակներից շատ բան է պարզվում այդ տարիներին Հայաստանում տարածված հիվանդությունների և համաճարակների մասին՝ ծաղիկ, մալարիա, ժանտախտ, խոլերա...

Տեսնելով, որ իր ծրագրերը չեն իրականացվում՝ Լ. Տիգրանյանը հատուկ նամակով դիմում է իշխանությանը՝ համաձայնելով անվճար ընդունել Երևան քաղաքի աղքատ բնակչությանը: Հետևելով նրա օրինակին՝ նման ցանկություն են հայտնում նաև մի շարք բժիշկներ:

Ինչպես և պետք էր սպասել՝ Տիգրանյանի հասարակական ակտիվ գործունեությունը, տեղական իշխանությունների հասցեին մամուլում չափազանց խիստ տոնով գրված նրա հոդվածները աննկատ չմնացին, և իշխանությունները որոշեցին նրան հեռացնել ասպարեզից: Տիգրանյանին մեղադրելու պատրվակ ծառայեց մի երիտասարդի կողմից Երևանի գիմնազիայի տնօրեն Բրաժմիկովի մատակ հասցնելը: Բրաժմիկովը վերին աստիճանի հայատյաց մարդ էր և ամենուր ցինիկ արտահայտություններով վիրավորում էր հայ երիտասարդների ազգային արժանապատվությունը: Ապտակը պատճառ է դառնում դատական գործ բացելու, թե իբր հայ երիտասարդությունը կազմակերպված ջոկատներով պատրաստվում է ապստամբել ցարական Ռուսաստանի դեմ: Սրան հաջորդում են աքսորները: Աքսորականների թվում չէր կարող չլինել նաև Լևոն Տիգրանյանը:

Հարկադրական հեռացումը Հայաստանից ստիպում է նրան լինել Դորպատում, այնուհետև Գերմանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի մի շարք քաղաքներում: Սակայն հայրենիքի կարոտը Հայաստան է վերադարձ-

նում Տիգրանյանին, ով 1894 թվականին 4 տարի ժամկետով ընտրվում է Երևանի քաղաքագլուխ: Սակայն 8 ամիս անց հրաժարվում է այդ պաշտոնից և օժտված լինելով հայրենի ժողովրդին ծառայելու վեհ ձգտումներով, չնայած բազմաթիվ դժվարություններին և տգիտության խավարին՝ մեծ խանդավառությամբ իրականացնում է ժողովրդին օգնելու իր մեծ ու բարի ցանկությունը՝ բոլոր հնարավոր միջոցներով:

Հայաստանում պրակտիկ բժշկության կազմակերպման գործում լուրջ դերակատարում է ունեցել 1910 թվականին փետրվարի 4-ին **Երևանում հիմնադրված բժշկական ընկերությունը**, որն իր շուրջը համախմբելով նահանգի բժիշկներին, բավականին ակտիվ գործունեություն է ծավալում գիտական և պրակտիկ բժշկության տարբեր բնագավառներում: Քանի որ Հայաստանում չկար որևէ բժշկական գիտական հիմնարկ, ընկերությունը փաստորեն դառնում է նահանգի բժշկական մտքի կենտրոնը:

Բացի զուտ գիտական հարցերի քննարկումից՝ Երևանի բժշկական ընկերության նպատակն է եղել օժանդակել ժողովրդի բժշկասանիտարական սպասարկման գործի կազմակերպմանն ու բարելավմանը: Շնորհիվ այն բանի, որ ընկերության անդամների թվում կային ժողովրդին ծառայելու ազնիվ զգացումներով տոգորված բժիշկներ, վերջիններս պրոֆիլակտիկ բնույթի արժեքավոր միջոցառումներ էին ձեռնարկում:

1910-14 թվականներին ընկերությունն ունեցել է 60 միստ, որոնց ընթացքում քննարկել է (18 դեկտեմբեր, 1919թ.) Երևանում համալսարան հիմնադրելու հարցը՝ բժշկական ֆակուլտետով:

Հայ բժշկության պատմության մեջ խոշոր իրադարձություն էր նաև Երևանում **առաջին բժշկական ամսագրի հրատարակումը** 1881 թվականին:

ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՀԻՄՆԱՐԿԸ

Շուրջ 10 տարի ձգձգվելուց հետո հայ առաջավոր բժիշկների նախաձեռնությամբ առաջին անգամ Երևանում 1890 թվականին բացվում է բուժարան, հետագայում՝ 3 տարի

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (1865-1935)



Երևանում գիմնազիան ավարտելուց հետո մեկնել է Խարկով և ընդունվել համալսարանի բժշկական ֆակուլտետը, իսկ հետագայում ուսումը շարունակել է Մոսկվայի համալսարանում, որն ավարտել է 1891-ին: Մինչև 1893-ը որպես վիրաբույժ աշխատել է Մոսկվայի նահանգի զեմստվոյական հիվանդանոցում, իսկ 1894-ին տեղափոխվել է Հայաստան և Դամարլու (այժմ՝ Արտաշատ) գյուղի հիվանդանոցում աշխատել որպես վիրաբույժ: 1895-ին Երևանի քաղաքային վարչության հրավերով տեղափոխվել է Երևան, նշանակվել քաղաքային հիվանդանոցի գլխավոր բժիշկ և աչքի հիվանդությունների ու վիրաբուժական բաժանմունքների վարիչ: Քանի որ այդ բաժանմունքները Հայաստանում առաջինն էին, իսկ ազգաբնակչությունը խուսափում էր ստացիոնար բուժօգնությունից, Հովհաննիսյանը դիմում է անսովոր քայլի. նա ամձամբ սկսում է որոնել հիվանդներին, նրանց համոզում վիրահատվել հիվանդանոցային պայմաններում, իսկ հիվանդանոցից դուրս գրվելուց հետո տալիս է որոշակի պարգև, վճարում ծանապարհածախսը: Կարճ ժամանակ անց՝ սկսվում է վիրաբուժական հիվանդների հոսքը դեպի հիվանդանոց:

1911-ին Երևանում բացել է իր սեփական 10 մահճակալանոց վիրաբուժական հիվանդանոցը, նրան կից՝ ամբուլատորիա, որտեղ շարունակել է իր վիրաբուժական գործունեությունը: Խորհրդային իշխանության որոշման համաձայն՝ նրա վիրաբուժական հիվանդանոցը, որը գործել է մինչև 1923-ը, ազգայնացվել է, իսկ բժիշկը առողջության վատացման պատճառով ստիպված թողել է բժշկական ու հասարակական գործունեությունը: 1927-ին նշվել է նրա բժշկական գործունեության 35-ամյա հոբելյանը, որտեղ անվանի վիրաբույժը մեծարվել է որպես Հայաստանում վիրաբուժության հիմնադիր:



անց, բուժարանին կից բացվում է նոր՝ 12 մահճակալանոց հիվանդանոց, որի մահճակալների թիվը 1908 թվականին հասնում է 40-ի: Երևանում ստեղծված քաղաքացիական առաջին բուժհիմնարկը՝ քաղաքային հիվանդանոցը, անշուշտ, չափազանց խղճուկ էր իր կահավորմամբ, առավել ևս իր գործունեությամբ, սակայն, որպես երևույթ, շատ կարևոր հանգամանք էր, որը կարող էր էականորեն բարելավել բժշկական օգնության դրվածքը և որակը Երևանի գավառում և գավառական կենտրոնում՝ Երևան քաղաքում:

Երկար տարիներ (մինչև 1907 թ.) հիվանդանոցի վարիչն է եղել բժիշկ Յովհաննես Յովհաննիսյանը, ով հետագայում եղել է առաջին հիվանդանոցի գլխավոր բժշկի՝ Սպանդարատ Կամսարականի տեղակալը:

Բուժարանը բացվեց մասնավոր մի տան մեջ, իսկ անձնակազմի կազմում էին վարիչը, բժիշկը, ֆելդշերը և մանկաբարձը: Այս հիմնարկությունը բացվել էր Երևան քաղաքի ինքնակառավարման համակարգում և, համաձայն «ուստավի», այստեղ կարող էին ընդունվել բոլորն առանց բացառության՝ անկախ կոչումից, տարիքից, սեռից: Բուժարանը վճարովի էր, հիվանդը խորհրդատվության համար վճարում էր 40 կոպեկ, իսկ չունևորները սպասարկվում էին անվճար:

Այս բուժարանի հաջողությունը քաղաքային վարչություններին դրդեց բացել նաև հիվանդանոց:

1893-ի փետրվարի 1-ին բացվեց ոչ մեծ հիվանդանոց՝ 12 մահճակալով, սակայն հետագայում այդ թիվն ավելացավ. մինչև 15՝ 1899-ին, մինչև 26՝ 1903-ին, մինչև 29՝ 1905-ին և 35-40՝ 1908-ին:

Սախապես այդ հիվանդանոցն ուներ թերապևտիկ և վիրաբուժական բաժանմունքներ: Հետագայում՝ հիվանդանոցի ընդլայնման ընթացքում ավելացավ 5 մահճակալ՝ վնասերական հիվանդություններով հիվանդ կանանց համար: Բացի այդ՝ հիվանդանոցում սկսեցին ընդունվել նաև հոգեկան հիվանդներ: Հասկանալի է՝ մեծ փոքրաթիվ մահճակալային ֆոնդը հնարավորություն չէր տալիս սպասարկել բոլոր դիմողներին, դրա համար բուժման կարիք ունեցողները հերթագրվում էին...

Բացի այդ՝ բացակայում էին ամենատարրական հիգիենիկ պահանջներին բավարարման հնարավորությունները:

Հիվանդանոցի վիճակը հասավ ծայրահեղ դրության մահճակալների թվի ավելացման պատճառով: Հիվանդանոցի տնօրեն Յովհ. Յովհաննիսյանի զեկուցագրում՝ ուղղված քաղաքային վարչությանը 1898-ին՝ հանդիպում է այսպիսի միտք, որը լիովին ներկայացնում է հիվանդանոցի անտանելի վիճակը. «Հերթապահ սենյակը միաժամանակ հանդիսանում է և՛ վիրահատարան, և՛ բժիշկների աշխատասենյակ, և՛ դիակների պահպանման համար՝ մերտվեցկոյ (мертвецкой)»: Իրերի մեծ ընթացքը հրամայական պահանջ էր դնում հիվանդանոցը տեղափոխել առավել ընդարձակ շինություն:

Քաղաքում համապատասխան շենքի բացակայության պատճառով և նոր շինություն սկսելու համար միջոցների բացակայությունը հարկադրեց քաղաքային ինքնակառավարմանը 1902-ին վարձակալել առավել ընդարձակ մի բնակելի տուն՝ «Ամիրյան փողոց, 22-24» հասցեում և հարմարեցնել հիվանդանոցին: Այդ երկհարկանի շենքի առաջին հարկում տեղակայվեցին ամբուլատորիան, լաբորատորիան, դեղատունը, բժիշկների աշխատասենյակները, սպասարանը և հաշվառման բաժինը: Բացի այդ՝ 4 սենյակներ առանձնացվեցին որպես ակնաբուժական կլինիկա՝ կույրերի հանդեպ ռուսական կայսրուհի Մարիա Ալեքսանդրովնայի ցուցաբերած հովանավորությամբ:

1 հիվանդասենյակ առանձնացված էր հոգեկան հիվանդների համար: 2-րդ հարկում տեղակայված էր 2 վիրահատարան, 1 նախավիրահատարան և 9 հիվանդասենյակ, որոնցից՝ 5 վիրաբուժական՝ 16 մահճակալով, 2 թերապևտիկ՝ 10 մահճակալով, 2-ը՝ 10 մահճակալով՝ վնասերական հիվանդությանը կից հիվանդների համար: Հարևան շենքում տեղակայված էին տարբեր ծառայողական սենյակներ:

Չնայած տեղափոխությանը նոր առավել ընդարձակ շենք՝ այնուամենայնիվ, շենքի վիճակը և անհարմարությունները նրանում մնում էին բավականին անհանգստացնող:

ՄՊԱՆԴԱՐԱՏ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ (1876-1942)
Առաջին հիվանդանոցի առաջին գլխավոր բժիշկը



1922-ի մարտին Երևանի բժշկական դպրոցի բազայի վրա հիմնվում է Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը: Դեկան է նշանակվում առողջապահության հմուտ կազմակերպիչ, բժիշկ Սպանդարատ Կամսարականը: Ուսումնական գործընթացը կազմակերպվում էր մեծ դժվարություններով. դասախոսությունների ու գործնական պարապմունքների համար չկային լսարաններ, լաբորատորիաներ, կլինիկական հիվանդանոցներ, բժշկական սարքավորումներ ու գործիքներ, դասագրքեր, իսկ պրոֆեսորադասախոսական կազմը բաղկացած էր ընդամենը 6 հոգուց: Բժշկական ֆակուլտետի հիմնարկման ու կայացման գործում նշանակալի ծառայություններ են ունենում առժողովոմ Սեմյոն Լազարը, լուսժողովոմ Ալբանազ Մռավյանը, համալսարանի ռեկտոր Դավիթ Յովհաննիսյանը, ինչպես նաև խորհրդահայ բժիշկների ավագ սերնդի ներկայացուցիչներ, ֆակուլտետի առաջին դասախոսներ Վահան Արծրունին, Սպանդարատ Կամսարականը, Գրիգոր Արեշյանը, Լևոն Յովհաննիսյանը, Արշակ Դակոբյանը, Համբարձում Քեչեկը, Աբգար Իսահակյանը, Գրիգոր Սեդնիկյանը, Փայլակ Դակոբյանը, Եղիշե Շեկ-Յովսեփյանը և ուրիշներ: Բժշկական ինստիտուտը ևս զերծ չի մնում անհատի պաշտամունքի ծանր հետևանքներից: 1937-ին մի խումբ անվանի դասախոսների և հմուտ ղեկավարների ներկայացվում են անհիմն ու մտացածին մեղադրանքներ, ոմանք էլ դառնում են ստալինյան ոճրագործ քաղաքականության զոհ: Այդ մեքենայությունների հետևանքով ընդհատվում է Գ. Միրզա-Ավագյանի, Գ. Յովհաննիսյանի, Ս. Կամսարականի, Ս. Բաղդասարյանի, Ա. Շահվերդյանի և ուրիշների բեղմնավոր գործունեությունը:

Հիվանդանոցի բժիշկների կողմից կազմված հիվանդանոցի վիճակի մասին հաշվետվության մեջ նշվում է. «Ամբողջ հիվանդանոցում, այդ թվում նաև վիրահատարանում չկան ջրագծեր, տրանսբանական է, որ այն չկա նաև լողասենյակում: Լուսավորությունը իրականացվում է կերոսինե լամպերով, չափազանց անհարմար է օդափոխության վիճակը, ջեռուցումը իրականացվում է երկաթյա վառարաններով: Հոգեբուժական բաժանմունքը միաժամանակ հանդիսանում է դիակների պահպանման վայր: Հիվանդասենյակները ցածր են, փոքր և մութ: Կլոզեթ (զուգարան) հասնելու համար հիվանդները պետք է անցնեն սառը պատշգամբով մինչև նույնպիսի սառը կլոզեթը: Հիվանդանոցում բացակայում է իզոլյատոր: Վարակիչ հիվանդություններ նկատելու դեպքում, որքան էլ ծանր լինի հիվանդի վիճակը, նման սենյակի բացակայության պատճառով նրան չեն ընդունում: Վնե՛րական հիվանդությամբ հիվանդների հիվանդասենյակի դուռը բացվում է դեպի ընդհանուր միջանցք, և քանի որ վնե՛րական բաժանմունք ընդունվում են կանայք հասարակաց տներից, ապա և նրանց նկատմամբ այլ հիվանդների վերաբերմունքը լինում է չափազանց ոչ հանդուրժողական»:




տրանսպորտ, ընդգծված վերաբերմունքը հիվանդանոցի կարիքների և բժիշկների հետաքրքրությունների նկատմամբ: Թե ինչից է երևում նման բարեհաճ վերաբերմունքը՝ դժվար է նկատել:

Նույն զեկուցագրում նշվում է, որ Երևանի քաղաքային ինքնակառավարման վարչությունը 1 հիվանդի համար ծախսում է 1 ռուբլի, երբ նույն ժամանակահատվածում Մոսկվայում նույն նպատակով ծախսվում է 5 ռուբլի 22 կոպեկ, Պետերբուրգում՝ 4 ռուբլի 21 կոպեկ, Օդեսայում՝ 3 ռուբլի 1 կոպեկ:

Այսպիսով՝ Երևան քաղաքում 1914 թվականի տվյալներով գործում էին քաղաքային հիվանդանոցը, աչքի հիվանդությունների բուժարանը, բանտի հիվանդանոցը, հոգեկան հիվանդությունների խնամատարության տունը: Բացի այդ՝ իրենց մասնավոր հիվանդանոցներն ունեին Տեր-Ավետիսյանը և Հովհ. Հովհաննիսյանը՝ վիրաբուժական բաժանմունքներով: Երևանի նահանգում չկար ծննդաբերական ոչ մի մահճակալ:

ԳՐԻԳՈՐ ԱՐԵՇՅԱՆ (1881-1957)



1909 թվականին Կիևի համալսարանի բժշկական ֆակուլտետն ավարտելուց հետո աշխատել է նույն համալսարանի մանկաբարձության և գինեկոլոգիայի կլինիկայում: 1919-ին Արեշյանին հրավիրել են Հայաստան, որտեղ Երևանի քաղաքային հիվանդանոցում հիմնադրել է մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունք:

Նա պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի հիմնադիրներից է: Ստեղծել է մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոնը 1923-ին, որը ղեկավարել է մինչև կենսաթոշակի անցնելը:

1930-35 թթ. եղել է Երևանի բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետի ղեկանը:

ԱՆԴՐԵԱՍ ԱՐԶՈՒՍԱՆՅԱՆ (1876-1931)




Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետից 1926-ին հրավիրվել է Երևան և պետական համալսարանի բժշկական ֆակուլտետում հիմնադրել նյարդաբանության և հոգեբուժության ամբիոնը ու մինչև կյանքի վերջը ղեկավարել է այն: Նրա ջանքերի շնորհիվ հանրապետական կլինիկական հիվանդանոցում հիմնադրվել է Հայաստանում առաջին նյարդային հիվանդությունների բաժանմունքը: Երևանի բժշկական ինստիտուտում նշանակվել է նրա անվան թոշակ:



ԱՌԱՋԻՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՀԻՎԱՆՊԱՆՈՑԻ ՇԵՆՔԻ ԿԱՌԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՅԱՆ ԱՐԾՐՈՆՆԻ
(1857-1947)



1920-ին հրավիրվել է Երևան, նշանակվել հանրապետության Կարմիր խաչի ընկերության փոխնախագահ, ապա՝ նախագահ, միաժամանակ զբաղվել քիթ-կոկորդ-ականջի հիվանդությունների ամբուլատոր բուժման հարցերով: 1922-ին ակտիվորեն մասնակցել է Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի հիմնադրման աշխատանքներին՝ կազմակերպելով և ղեկավարելով մարդու նորմալ անատոմիայի ամբիոնը:

ՀԱՍԲԱՐՁՈՒՄ ՔԵՉԵԿ
(1872-1948)



1897-ին Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը ավարտելուց հետո աշխատել է Դոնի Ռոստովի քաղաքային հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքում, ապա նշանակվել Նևինոմիսկ կայսրանի հիվանդանոցի վարիչ:

1923-ին ընտրվել է Երևանի համալսարանի բժշկական ֆակուլտետի վիրաբուժության ամբիոնի վարիչ, 1925-ին՝ համալսարանի բժշկական ֆակուլտետի ղեկան՝ պաշտոնավարելով 2 տարի: Մինչև կենսաթոշակի անցնելը եղել է ֆակուլտետի վիրաբուժության ամբիոնի վարիչը:

1931-ին ստեղծված արյան փոխներարկման կայանի առաջին ղեկավարն էր, իսկ 1925-37 թթ.՝ Երևանի բժշկական ընկերության նախագահը:

Երևանի քաղաքային դումայի 1893 թվականի որոշմամբ գործող միակ բուժհաստատությանը՝ Երկայիս Բյուզանդի փողոցի վրա գտնվող ամբուլատորիային կից ստեղծվում է ստացիոնար բաժանմունք: Այն չափազանց փոքր էր. ուներ ընդամենը 12 մահճակալ՝ 7-ը տղամարդկանց, 5-ը՝ կանանց համար: Սա, իհարկե, չէր կարող բավարարել քաղաքի պահանջները, և իշխանությունները որոշում են մինչև առանձին շենքի կառուցումը վարձակալել մասնավոր տներ, միաժամանակ սկսել նոր շենքի կառուցումը:

Ի դեպ՝ քաղաքի ճարտարապետ Ստուպաչևսկին նախագծում է շենքը, սակայն, միջոցների բացակայության պատճառով նախագիծը մնում է թղթի վրա: Համաձայն Երիվանի քաղաքային հիվանդանոցի 1908 թվականի հաշվետվության ռուսերեն հրատարակության՝ այդ տարի Նազարովյան փողոցի 2 տներում հիվանդանոցն ուներ 70 մահճակալ. բացի վիրաբուժականից, թերապևտիկից, մանկաբարձականից, կային նաև հոգեբուժական և ակնաբուժական բաժիններ:

Քաղաքային դուման 1906 թվականին մի քանի նիստ է հրավիրում՝ օրակարգում ունենալով մեկ հարց՝ հիվանդանոցի կառուցումն ու դրա համար գումար գտնելը:

Եվ ահա, "Эриванская объявление" թերթի առաջին էջերում սկսեցին տպագրվել հողատարածքներ աճուրդով վաճառելու մասին հայտարարություններ, որից գոյացած հասույթն ուղղվելու էր հիվանդանոցի կառուցմանը: Այդ տարի վաճառվեց նաև անգլիական այգու մի հատվածը: Սակայն, դարձյալ փողը չբավականացրեց:

Հիվանդանոցի ստեղծմամբ մտահոգ՝ իր օգնությունն առաջարկեց Նիկոլայ Շուստովը, որի օրինակին հետևեցին այլ բարերարներ ևս:

Դուման, ոգևորված այս և այլ նվիրատվություններով, որոշում է 100 մահճակալով հիվանդանոց կառուցել՝ նախագծի համար հատկացնելով 1.000 ռուբլի: Ճարտարապետի ընտրությունը կանգ է առնում Պողոս Զուրաբյանի՝ նույն ինքը՝ Պավել Զուրաբովի վրա, ով արդեն հայտնի էր Թիֆլիսի Արամյան և Զուբալով հիվանդանոցների նախագծերով: Վերջապես, 1914 թվականին, Երկայիս Աբովյան 54 հասցեում դրվում է քաղաքային հիվանդանոցի հիմքը:

Վայրը հրաշալի էր ընտրված՝ աղմուկից հեռու, խաղաղ վայրում, շրջապատված այգիներով ու բանջարանոցներով, իսկ հեռվից լսվում էր Գետառի քչքչոցը:

1916 թվականի սկզբին արդեն կանգուն էր երկհարկանի հիվանդանոցի շենքը, իսկ ամռանը սկսվեցին ներքին հարդարման աշխատանքները:

1917 թվականին, երբ առաջին աշխարհամարտը դեռևս ընթացքի մեջ էր, ու Երևանում տեղակայված էին կովկասյան ճակատում կռվող բազմաթիվ զորամասեր, հիվանդանոցի արդեն շահագործման պատրաստ շենքը անցնում է Ելիզավետպոլի գնդի տրամադրության տակ: Սակայն, որպես





կամուրջ գետառի վրա

զինվորական հոսպիտալ, այն քիչ է ծառայում, քանի որ նույն տարվա նոյեմբերին տեղի ունեցած բուլշևիկյան հեղաշրջումից հետո ռուսական զինուժը սկսում է տարերայնորեն լքել մեր տարածաշրջանը:

Յաջորդ տարին 1918 թվականն էր՝ հայոց համար հիշարժան ու բեկունճալի թվական: Հռչակվում է Հայաստանի անկախ հանրապետությունը, գաղթականներով լեցուն, համաճարակներից շնչասպառ երկրում բուժփնճարկներն առավել քան անհրաժեշտ ու կարևոր էին: Նույն տարում հիվանդանոցում բացվում են վիրաբուժական, մանկաբարձագինեկոլոգիական և թերապևտիկ բաժանմունքները, և շենքը սկսում է գործել ըստ նշանակության:

Հայաստանի խորհրդայնացումից հետո, բարեբախտաբար, հիվանդանոցը չի տրվում այլ գերատեսչության և գործում է առողջապահության ժողովմատի կազմում:

Այսպիսին էր գործերի դրվածքը նահանգի միակ՝ Երևանի քաղաքային հիվանդանոցում, որը անվանակոչված էր առաջին քաղաքային հիվանդանոց. հիվանդանոց, որի պաշտոնական բացումը կայացավ 1919 թվականին




դեկտեմբերի 1-ին:

1919 թվականին Արեշյանը ներկայացրեց մի նախագիծ, մանկաբարձաֆելդշերական դպրոցի՝ 15 մահճակալով ծննդաբերական բաժանմունքի համար: Այդ բաժանմունքի պաշտոնական բացումը նախագծվեց առաջին հիվանդանոցին կից, որը քաղաքային ինքնակառավարումից անցել էր բուժսանիտարական գլխավոր վարչության ենթակայության ներքո: Ի կատարումն այս ծրագրի՝ որոշվեց շատ արագ առաջին հիվանդանոցին ավելացնել կառույց, որտեղ անհրաժեշտ էր գոյություն ունեցող բաժանմունքներին ավելացնել նաև մանկաբարձական բաժին:

1920 թվականի փետրվարի 11-ին բացվեց մանկաբարձաֆելդշերական դպրոց: Ըստ հաստիքի այդ բաժանմունքում պետք է լինեին 40 մահճակալ՝ 25 ծննդաբերական և 15 գինեկոլոգիական: Սակայն մինչև շենքի կառուցումը մահճակալների իրական թիվը տեղի բացակայության պատճառով չէր գերազանցում 20-ը: Բաժան-

ՀՈՎՆԱՆ ԳԱՐՐԻԵԼՅԱՆ (1876-1946)




1904 թվականին Մոսկվայի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետն ավարտելուց հետո աշխատել է Մոսկվայում, Բաքվում, որտեղ բժշկական ֆակուլտետում հիմնադրել է մանկաբուժության ամբիոնը և այն ղեկավարել մինչև 1936-ը:

1926-ին մանկաբուժության ամբիոն է ստեղծել նաև Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետում և 10 տարի միաժամանակ ղեկավարել այդ երկու ամբիոնները:

1936-ին տեղափոխվել է Երևան՝ շարունակելով ղեկավարել բժշկական ինստիտուտի մանկաբարձության ամբիոնը, միաժամանակ երկար տարիներ գլխավորել է թիվ 1 հիվանդանոցի մանկաբուժական բաժանմունքը: Գաբրիելյանը համարվում է հայկական մանկաբուժական դպրոցի հիմնադիրը:

ԳԱՄՊԱՐ ՄԵԼՔՈՆՅԱՆ (1881-1952)



Օդեսայի համալսարանի բժշկական ֆակուլտետը ավարտելով 1908-ին՝ աշխատել է հոսպիտալային վիրաբուժության կլինիկայում: Ապա տեղափոխվել է Թիֆլիս: 1920-ին հրավիրվել է Երևան և նշանակվել քաղաքային թիվ 1 հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքի վարիչ: Միաժամանակ համատեղության կարգով զբաղեցրել է հիվանդանոցի գլխավոր բժշկի տեղակալի պաշտոնը: 1936-ից մինչև կյանքի վերջը ղեկավարել է հոսպիտալային վիրաբուժության ամբիոնը:



մունքը տեղակայված էր 4 հիվանդասենյակներում, որոնցից երկուսում կային 8-10 մահճակալ, երկուսում՝ մեկական: Ըստ հաստիքային ցուցակի՝ 1 վարիչ, 2 բժիշկ, 2 մանկաբարձ և 4 մայրապետ:

1930-ական թվականներին որոշվում է շենքի վրա ավելացնել նաև երրորդ հարկը, ինչը, ճիշտ է, ճաշակով է արվում և չի խաթարում ընդհանուր ճարտարապետական տեսքը, սակայն, ըստ երևույթին, հաշվարկները սխալ են կատար-



Վիրահատում է Ռ. Պարոնյանը

ՌՈՒԲԵՆ ԳՅԱՆՁԵՑՅԱՆ (1885-1954)



Միջնակարգ կրթությունն ավարտելուց հետո մեկնել է նախ Գերմանիա, ապա՝ Ֆրանսիա և ընդունվել Սոմպելիեի համալսարանի բժշկական ֆակուլտետը, որն ավարտել է 1913-ին: Այնուհետև աշխատանքի անցել Բաքվի նավթահանքերի հիվանդանոցում:


1930-ին տեղափոխվել է Երևան, 1933-35թթ. եղել է սամիտարական ֆակուլտետի թերապիայի, իսկ 2 տարի անց՝ հոսպիտալային թերապիայի ամբիոնի վարիչ՝ այդ պաշտոնում մնալով մինչև կյանքի վերջը:

Նա 1938-41թթ. միաժամանակ եղել է բժշկական ինստիտուտի պրոռեկտորը, իսկ 1944-45թթ.՝ ռեկտորը:



Ռ. Յուլյանի համայցը

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԻՐՉԱ -ՎԱԿՅԱՆ (1879-1938)



1924-ին Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետում հիմնադրել և ղեկավարել է տեղագրական անատոմիայի և օպերատիվ վիրաբուժության ամբիոնները:

1933-36թթ. ղեկավարել է բժշկական ինստիտուտի հոսպիտալային վիրաբուժության ամբիոնը: Նա եղել է Հայաստանում արյան փոխներարկման գործի կազմակերպիչներից մեկը: Գիտնականը հրաժարվել է Աղասի Խանջյանի քաղաքական սպանությունը որակել որպես ինքնասպանություն և դարձել է ստալինյան բռնությունների զոհ:



Վիրահատում է Ա. Թովմասյանը

վում, և տասնամյակների անց կառույցը սկսում է նստվածք տալ: 1970-ական թվականներին այն ամրացվում է, բայց դա արվում է չափազանց տգեղ, և ոչ ակնահաճո պատկերն այսօր էլ տեսանելի է Աբովյան փողոցից:

Քաղաքային հիվանդանոցի տեղն ու դիրքը 1920-30-ական թվականներին Ալեքսանդր Թամանյանին թելադրում են մայրաքաղաքի առողջապահական ավանը տեղադրել գլխավոր հատակագծի հենց այս հատվածում, և մնացած շենքերի նախագծումը հարմարեցնել հիվանդանոցի շենքի հետ: Հետագայում ստացվում է առողջապահական համալիր, որի սիրտը, ասես, դառնում է սև տուֆից կառուցված պատկառելի առաջնեկը: Տասնամյակներ շարունակ թիվ 1 հիվանդանոցը, որը, ի դեպ, նախկինում կրում էր Լենինի անունը, Երևանի գլխավոր բժշկական կենտրոնն էր, գործում էր թե՛ որպես շտապօգնության, թե՛ որպես հանրապետական հիվանդանոց:



Համբարձում Քեչեկը
առաջին հիվանդանոցի
կոլեկտիվի հետ՝
հիվանդանոցի բակում

1920-ԱՎԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

Սովետական կարգեր ստեղծվելուց հետո Երևանի առաջին հիվանդանոցի պատմության մեջ սկսվում է զարգացման բոլորովին նոր շրջան:


1920 թվականին ստեղծվեց ժողովրդական առողջապահության կոմիսարիատ, որի ապարատում աշխատանքի են հրավիրվում բժշկական գործի այնպիսի եռանդուն գործիչներ, ինչպես Գրո Տեր-Հակոբյանը (բուժական բաժնի վարիչ), Գրիգոր Արեշյանը (մայրության և մանկության պահպանության բաժնի վարիչ), Եղիշե Շեկ-Յովսեփյանը (վարչակազմակերպչական բաժնի վարիչ), Ներսես Հակոբյանը (զորասանիտարական բաժնի վարիչ) և ուրիշներ: Առողջապահության ժողովրդական կոմիսարիատի համակարգում կարևոր բնագավառներ էին ղեկավարում Լևոն Յովհաննիսյանը, Քրիստափոր Փիրունովը, Աբգար Իսահակյանը, Գասպար Մելքոնյանը, Հարություն Միրզավազյանը և ուրիշներ: Վերոհիշյալ բոլոր բաժնիների վարիչները և առաջատար մասնագետները հետագայում դարձան Հայաստանում բժշկական գիտության ամխոն գործիչներ՝ ընտրվելով Երևանի բժշկական ինստիտուտի ամբիոնի վարիչներ, պրոֆեսորներ:

Այն, որ առաջին հիվանդանոցի բացումը թելադրված էր ժամանակի հրամայականով, երևաց հիվանդների շարժի հանգամանքում՝ այդ բաժանմունքի գոյության հենց առաջին 4 ամիսների ընթացքում:

Երևանում գործող միակ կլինիկական ախտորոշման լաբորատորիան, ֆիզիոթերապևտիկ և ռենտգեն կաբինետները գործում էին առաջին հիվանդանոցում: 20-ական թվականների սկզբներին ծանր էր վիճակը Հայաստանում: Լավ դրության մեջ չէր մաս հանրապետական առաջին հիվանդանոցը:

Ըստ բժշկության որոշ պատմաբանների, ովքեր ակնհայտորեն հակված էին ամեն ինչի սկիզբը և բարեկարգումը կապել Հայաստանում Խորհրդային կարգերի ստեղծման հետ, ներկայացնում են հետևյալ պատկերը. «Սովետական իշխանության առաջին 5 տարիների ընթացքում բուժական գործը, ինչպես մաս առողջապահության ցանցը, համարյա նորից ստեղծվեց: Եղած հիվանդանոցները, փոքր բացառությամբ, քայքայվել էին, բժշկական անձնակազմը ցրվել, շենքերը օգտագործման համար դարձել ոչ պիտանի: Այդ իրավիճակում բուժական գործի կենտրոնը դարձավ հանրապետական հիվանդանոցը, որը կոչվեց Լենինի անվամբ: Վերջինս, բացի բուժօգնություն ցույց տալուց, մաս բժշկական միջնակարգ դպրոցի և Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի բազա հանդիսացավ ուսանողների գործնական պարապմունքները կազմակերպելու համար: Սակայն եղած պայմանները չափազանց անմխիթարական էին: Հիվանդանոցում եղած պինդատներն ու անոթաբռնիչները ժանգոտ էին, դանակներն ու մկրատները՝ հին, կտրում էին մեծ դժվարությամբ: Նույնիսկ ախտահանիչներ և եռացնող հարմարանքներ չունենալու պատճառով մինչև 1924 թվականը վիրակապությունները ստերիլ նյութերով չէին կատարվում...»:

Հավանաբար մեղք գործած չեն լինի, եթե առարկեն այդպիսի պատմաբաններին: Եվրոպայի, Ռուսաստանի ճանաչված համալսարանների շրջանավարտները, ովքեր այդ տարիներին կազմում էին առաջին հիվանդանոցի բժշկական կազմի կորիզը, հազիվ թե հանդուրժեին այդպիսի իրավիճակ: Թեև հասկանալի է, որ սուղ էին պայմանները, ծանր՝ ժամանակները:



Խարկովի համալսարանի բժշկական ֆակուլտետը 1909-ին ավարտելուց հետո վերադարձել է իր ծննդավայր՝ Թիֆլիս, և աշխատանքի անցել Միխայլովյան հիվանդանոցում: 1910-ին բռնկված խղերայի համաճարակի ժամանակ ակտիվորեն մասնակցել է հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման աշխատանքներին: 1917-ին Թիֆլիսում շուրջ 2 տարի բուժակնների և մանկաբարձ-բուժակների դպրոցներում դասավանդել է դեղաբանություն, որից հետո աշխատանքի է անցել Նախիջևանում՝ որպես մահամզային բժիշկ, իսկ 1919-ին տեղափոխվել է Երևան և մշակակվել քաղաքային հիվանդանոցի գլխավոր բժիշկ ու ներքին հիվանդությունների բաժանմունքի վարիչ: Լ. Յովհաննիսյանն ակտիվ մասնակցություն է ունեցել Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի ստեղծման աշխատանքներին, հիմնադրել է ներքին հիվանդությունների պրոպեդևտիկայի ամբիոնը, որը ղեկավարել է մոտ չորս ու կես տասնամյակ:

1931-ին ընտրվելով Երևանի բժշկական ինստիտուտի տերմինաբանական հանձնաժողովի նախագահ՝ զգալի աշխատանք է կատարել հայկական բժշկական տերմինաբանության զարգացման գործում: Նա ավելի քան 20 մենագրությունների, բառարանների հեղինակ է, որոնցից հատկապես հիշարժան են ներքին հիվանդությունների դիագնոստիկային, նրանց մասնավոր ախտաբանությանը, ներքին հիվանդությունների կլինիկայում հոգեկան և սոմատիկ ոլորտների փոխհարաբերությանը, սրտային հիվանդի հոգեբանական կերպարի մասին մենագրությունները և դասագրքերը: Բարձրարժեք է հատկապես նրա «Հայաստանի բժշկության պատմություն» հինգ հատորանոց աշխատությունը, որից, ի դեպ՝ բավականին նյութ ենք վերցրել «ԱՊՊԱԳԱ ԲԺՇԿԻ» այս թղարկումը ստեղծելիս:



ՄՏԵՂԾՎԵՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐՏԱՇԵՍ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄՅԱՆ (1885-1949)



1925-ին հրավիրվել է Երևան և նշանակվել Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի ֆակուլտետային թերապիայի ամբիոնի վարիչ: 1936-37թթ. եղել է բժշկական ինստիտուտի պրոռեկտոր, իսկ 1938-ին կարճ ժամանակով նշանակվել է ինստիտուտի ռեկտորի պաշտոնակատար: Գիտնականը ղեկավարել է Հայաստանի բժիշկների գիտական ընկերությունը, 24 տարի եղել է բժշկական ինստիտուտի թերապիայի ամբիոնի վարիչ, թերապևտների համամիութենական գիտական ընկերության վարչության անդամ: Նրա անունով է կոչվել Երևանի կենտրոնական փողոցներից մեկը և քաղաքային թիվ 1 կլինիկական հիվանդանոցի թերապևտիկ բաժանմունքը:

ԱՐՇԱԿ ՀԱԿՈՒԲՅԱՆ (1886-1960)



Բեռլինի համալսարանի բժշկական ֆակուլտետի շրջանավարտը 1919-ին եկել է Երևան և աշխատանքի անցել զինվորական հոսպիտալում: 1922-ին Ա. Հակոբյանը Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի կազմում հիմնադրել է ֆիզիոլոգիայի ամբիոնը, որը ղեկավարել է մինչև 1936-ը, իսկ 1924-ին Երևանի թիվ 1 կլինիկական հիվանդանոցում՝ նյարդային հիվանդությունների առաջին բաժանմունքը: 1936-ից նա ղեկավարել է բժշկական ինստիտուտի նյարդային հիվանդությունների ամբիոնը:

Պատմական նշանակություն ունեցավ 1922-ի նոյեմբերը. Երևանի նորաստեղծ պետական համալսարանում ստեղծվեց բժշկական ֆակուլտետ, որը 1926-27 ուստարում տվեց իր առաջին 32 շրջանավարտները, ապա 1930-ին առանձնացվեց և նրա բազայի վրա ստեղծվեց բժշկական ինստիտուտը:

1923-ի նոյեմբերի 3-ին Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդը որոշեց Երևանի քաղաքային կլինիկական հիվանդանոցին կից հիմնադրել դպրոց՝ միջին բժշկական պերսոնալի պատրաստման համար:

Երևանի համալսարանում բժշկական ֆակուլտետ հիմնելու արդյունքում դպրոցի սխեման արմատական փոփոխության ենթարկվեց: Միջին բժշկական աշխատողների դպրոցում մնաց միայն մանկաբարձական բաժինը՝ երկու և կես տարի ուսման տևողությամբ՝ վերանվանվելով մանկաբարձական դպրոց:

1923-ի աշնանը լրիվ ավարտվեց կլինիկական հիվանդանոցի շենքի շինարարությունը, որի ծննդաբերական և գինեկոլոգիական բաժանմունքները դարձան հիվանդանոցի հիմնական բազան:

Թեև հիվանդանոցի շենքը, որի շինարարական աշխատանքները սկսվել էին առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արտաքուստ թվում էր ավարտված, սակայն դեռևս շենքում չկար կոյուղի և կենտրոնական ջեռուցման համակարգ, բաժանմունքներում երեկոյան խմելու ջուր չէր լինում, ուստի ստիպված էին լինում վիրահատության համար դուրսերում ջուր բերել: Նույնիսկ վիրահատման սրահում ջեռուցումը կատարվում էր թիթեյա վառարանի միջոցով, որի պատճառով էլ լինում էր ջերմության խիստ տատանումներ և ծուլի:



Էլեկտրական լուսավորումը չափազանց թույլ էր, բավարար չափով չէր լուսավորվում վիրահատության դաշտը: Գիշերները՝ անհետաձգելի վիրահատությունների ժամանակ, ստիպված էին լինում օգտվել նավթի լամպերից:

Վիրահատման սրահը փոքր էր, անհարմար, չէր համապատասխանում ժամանակի պահանջներին, որի պատճառով էլ, բնականաբար, հարց է առաջանում կառուցելու նոր և ընդարձակ վիրահատման սրահ:

Չափազանց ծանր էր վիրահատման՝ հատկապես շտապ ու անհետաձգելի վիրահատման կարիք ունեցող հիվանդների վիճակը, մանավանդ, եթե նրանք հեռավոր շրջաններից էին, ովքեր հիմնականում գալիս էին հանրապետական հիվանդանոց:

Ճանապարհների և տրանսպորտի բացակայության պայմաններում, ձմռան բքին և սառնամանիքին դժվարանում էր հիվանդների շտապ տեղափոխումը՝ ասիա այն դժվար հարցերից մեկը, որը հաճախ ծառանում էր հիվանդների առաջ: Ինչ խոսք՝ նման վիճակը հիվանդի համար երբեմն ունենում էր ողբերգական վախճան: Հարցը ամենայն սրությամբ դրվում էր մանկաբարձագինեկոլոգիական հիվանդների դեպքում :

Քիչ չէին դժվարությունները նաև բժշկական ֆակուլտետի ուսանողների համար: Միակ հիվանդանոցը, որ կարող էր բժշկական ֆակուլտետի ուսանողների համար հանդիսանալ ուսումնական բազա՝ Երևանի հանրապետական հիվանդանոցն էր, որը կարիք ուներ վերանորոգման և վերափոխումների: Այս հիվանդանոցում, բուժական աշխատանքներից բացի, բժշկական ֆակուլտետի ուսանողության հետ պետք է տարվեին նաև մանկավարժական աշխատանքներ, նրանց համար պետք է կարդային դասախոսություններ, տրվեին գիտելիքներ բժշկական բազմաթիվ կլինիկական առարկաների գծով: Հաշվի առնելով այս ամենը՝ հիվանդանոցի գլխավոր բժիշկ Ս. Կամսարականը 1921- ին դիմում է առժողովմաստ՝ խնդրելով կատարել կոնկրետ գործո-

ղութուններ՝ հիվանդանոցն այդ դրութիւնից դուրս բերելու համար: Եւնելով հիվանդանոցի ղեկավարութեան պահանջից՝ առժողովմատը արագացրեց հանրապետական հիվանդանոցի շէնքի շինարարական աշխատանքները՝ մինչև շինարարութեան լրիվ ավարտը փակելով նրա բաժանմունքները:

Առժողովմատի 1922-ի հունիսի 12-ի հրամանի համաձայն՝ հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքի անձնակազմը՝ բաժնի վարիչ Գ. Յ. Մելքոնյան, անհրաժեշտ գույքով տեղափոխվեց Երկրորդ հիվանդանոց:

Հանրապետական հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքը հանդիսանում էր համալսարանի բժշկական ֆակուլտետի ուսանողության համար ուսումնական բազա, և այդ բաժանմունքի թեկուզ ժամանակավոր փակվելն էլ ավելի սրեց առանց այն էլ վիրահատական աշխատանքների ծանր դրութիւնը: Մոտ 1.5 տարի չէր գործում Հայաստանի ամենամեծ ու առաջավոր վիրաբուժական բաժանմունքը:

Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ առաջին հիվանդանոցը վերադարձել է իր շէնքը՝ 1922-ին:

1930-40-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

Թվերի ու փաստերի լեզվով

Ժողովմունքները և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը 1935 թվականի մարտի 4-ին որոշում ընդունեցին բժշկական աշխատողների աշխատավարձը բարձրացնելու և առողջապահության ներդրումներն ավելացնելու մասին:

1940 թվականին Երևանի բժշկական ինստիտուտն ավարտեցին 89 ուսանողներ: 1939-40 ուստարում բժշկական ինստիտուտ ընդունվեցին 265 ուսանողներ: Այդ նույն ուսումնական տարում Երևանի բժշկական ինստիտուտի բոլոր կուրսերում սովորողների թիվը հասնում էր 1110-ի, որից 1053-ը հայեր էին: Բժշկական ինստիտուտի 1110 ուսանողներից հայկական սեկտորի բուժարո-ֆիլակտիկ ֆակուլտետում սովորում էին 625, ռուսական սեկտորի բուժարո-ֆիլակտիկ ֆակուլտետում՝ 214 և սանիտարահիգիենիկ ֆակուլտետում (հայերեն) 192 ուսանողներ: 627 ուսանողներ կամ 58%-ը ապահովված էին հանրակացարանով: 1942 թվականի նոյեմբերի 15-ի տվյալներով 1100 ուսանողից 954-ը կամ 86.7%-ը ստանում էր թոշակ:

Բժշկական ինստիտուտն ուներ 35 ամբիոնների վարիչներ, որոնցից 19-ը պրոֆեսորներ էին, իսկ 15-ը՝ դոցենտներ: Բացի այդ՝ բժշկական ինստիտուտի ամբիոններում աշխատում էին ևս 1 պրոֆեսոր, 11 դոցենտ, 14 ավագ դասախոս ու ասիստենտ և 73 դասախոս:

1940 թվականին Երևանի բժշկական ինստիտուտի պահպանման համար տրամադրվել էր 4990.6 հազար ռուբլի:

Էվակոհոսպիտալների համար կադրեր պատրաստելու գործին ակտիվ մասնակցություն էին ունենում Երևանի բժշկական ինստիտուտի պրոֆեսորները և մյուս դասախոսները:

Հայրենական պատերազմի առաջին տարում ռազմաճակատ մեկնելու պատճառով առաջին հիվանդանոցի բժիշկների թիվը պակասեց 16.2%-ով:

Սակայն 1942 թվականին Երևանի բժշկական ինստիտուտը տվեց 224 շրջանավարտ: Բացի այդ՝ ֆաշիստական զորքերի կողմից օկուպացված տարածքներից Հայաստան էվակուացվեցին ոչ քիչ թվով բժիշկներ, որի հետևանքով բժիշկների թիվը նախապատերազմյան տարվա մակարդակից ավելացավ 6.4%-ով:


Ձինվորական հոսպիտալներում անձնվիրաբար ծառայում էին հանրապետության վիրաբույժների առաջատար ուժերը:

Հոսպիտալների աշխատանքներին մեծապես նպաստում էին մեր երախտավորների՝ Լ. Հովհաննիսյանի, Ս. Մելիք-Աղանյանի, Ռ. Գյանջեցյանի, Ա. Մեհրաբյանի, Հ. Հարությունյանի, Բ. Մելիք-Մուսայանի, Վ. Ավագյանի, Գ. Միրզոյանի և ուրիշների բարձրորակ մասնագիտական կոնսուլտացիաները:

Պատերազմի տարիներին հանրապետությունում տեղակայված էին զգալի թվով էվակոհոսպիտալներ, որտեղ այլազգի բժիշկների հետ անձնուրաց աշխատանք էին կատարում նաև մեր կլինիկայի բժիշկները:

Խոսելով Հայաստանում հետպատերազմական տարիներին և ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյակի ընթացքում վիրաբուժության հաջողությունների մասին՝ անհրա-

ԳՐԻԳՈՐ ՏԵՐ-ՀԱԿՈՒԲՅԱՆ (ԳՐՈ) (1887-1969)



Մուսկվայի համալսարանն ավարտած և նույն համալսարանի նյարդային հիվանդությունների կլինիկայում աշխատող արդեն ճանաչված մասնագետը 1914-ին վերադարձել է Երևան և ստանձնել հոգեբուժական հիվանդանոցի գլխավոր բժշկի պաշտոնը:

1930-37թթ. եղել է բժշկական ինստիտուտի հոգեբուժության ամբիոնի վարիչը: Հաշվի առնելով նրա ծառայությունները և գիտամանկավարժական բեղմնավոր գործունեությունը՝ առանց ատենախոսության պաշտպանության նրան շնորհվել է բժշկական գիտությունների թեկնածուի աստիճան և պրոֆեսորի կոչում: Գրոն առողջապահության գործի և հոգեբուժական ուղղության հիմնադիրներից է Հայաստանում:

ՀՐԱՅԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ (1904-1979)



Ավարտելով Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը, միաժամանակ աշխատել է 1-ին հիվանդանոցի ռենտգեն կաբինետում: 1936-ին նշանակվել է 1-ին կլինիկական հիվանդանոցի օրդինատոր: 1937-ին ընդունվել է ասպիրանտուրա: Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերին մեկնել է ռազմաճակատ: 1957 թվականին ստացել է պրոֆեսորի կոչում:



Ժեշտ է նշել ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, պրոֆեսոր Ռ. Յոլյանի, պրոֆեսորներ Ս. Շարիմանյանի, Ռ. Պարոնյանի, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ի. Գևորգյանի խոշոր ծառայություններն այդ գործում:

Առաջին հիվանդանոցի բազայի վրա հանրապետությունում անցանկյունքաց զարգացում ապրեց նյարդային վիրաբուժությունը, որի հիմնադիրը համարվում է գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ս. Շարիմանյանը:

Այդ տարիներին ակնաբուժության հիմնական կենտրոն էր հանդիսանում հանրապետական հիվանդանոցի ակնաբուժական բաժանմունքը՝ 80 մահճակալով:

Արյան փոխներարկման ուղղությամբ նշանակալի էին պրոֆեսոր Հ. Քեչեկի կատարած աշխատանքները, ով Հայաստանում առաջինը իրականացրեց արյան փոխներարկումը՝ ականավոր հեմատոլոգ, պրոֆեսոր Ա. Բաղդասարովի կողմից:

Սովետական Հայաստանում քիթ-կոկորդ-ականջի հիվանդությունների գծով առաջին մասնագետ-բժիշկը Վահան Արծրունին էր: Այդ հիվանդությունների բուժման առաջին կաբինետը բացվեց 1922 թվականին Երևանի քաղաքային ամբուլատորիայում: Բժշկագիտության այդ բնագավառի զարգացմանը, ինչպես նաև մասնագետների պատրաստմանը մեծ չափով նպաստեց Երևանի բժշկական ինստիտուտում քիթ-կոկորդ-ականջի հիվանդությունների ամբիոնի բացումը 1938 թվականին:

Հայաստանում ռենտգենյան առաջին ապարատը տեղադրվեց Երևանի առաջին հիվանդանոցում՝ պրոֆեսոր Համբարձում Քեչեկի նախաձեռնությամբ:

Սակայն հանրապետությունում ռենտգենոլոգիայի լայնորեն կիրառումը և զարգացումը պետք է կապել բժիշկներ Բ. Ֆանարջյանի և Վ. Աբգարովի հետ, ովքեր Գերմանիայում մասնագիտանալուց հետո վերադարձան Երևան և ամբողջովին նվիրվեցին այդ կարևոր գործին: Հատկապես Բ. Ֆանարջյանը անգնահատելի ծառայություններ մատուցեց այդ ասպարեզում՝ երկար տարիների ընթացքում պատրաստելով ռենտգենոլոգների բազմաթիվ կադրեր:

Հայաստանում դատական բժշկության գիտական հիմքերը դրվեցին Երևանի համալսարանի բժշկական ֆակուլտետում 1927 թվականին կազմակերպված դատաբժշկական ամբիոնում: Այդ գործում զգալի ավանդումնեցան պրոֆեսոր Ե. Շեկ-Յովսեփյանը և դոցենտ Ա. Յովսեփյանը:

Հայաստանում գիտական վիրաբուժության առաջին հիմնադիրներից էր բազմավաստակ պրոֆեսոր Համբարձում Քեչեկը, ով, առանց չափազանցության, կարելի է ասել, մեր կլինիկայում ստեղծեց այն դպրոցը, որով անցան Հայաստանի ավագ և միջին սերնդի համարյա բոլոր վիրաբույժները:

Այդ դպրոցի հիմնալի ներկայացուցիչներից նախ և առաջ պետք է նշել գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ս. Շարիմանյանին, ով հետագայում շարունակելով իր ուսուցչի լավագույն ավանդույթները, հսկայական գործ կատարեց վիրաբույժների նոր սերնդի պատրաստման շնորհակալ գործում: Տեսական և պրակտիկ ունակություններով Ս. Շարիմանյանը իրավամբ համարվում էր Խորհրդային Միության առաջնակարգ վիրաբույժներից մեկը, երկար տարիներ նա նշանակալի գործ է կատարել մեր հանրապետությունում՝ վիրաբուժության տարբեր մասնաճյուղերի առաջընթացի համար: Ս. Շարիմանյանին է պատկանում նաև մեզ մոտ նեյրովիրաբուժության ստեղծման պատիվը: Երկար տարիներ Ս. Շարիմանյանը ղեկավարում էր Հայաստանի վիրաբուժական գիտական ընկերությունը:

Ցավոք հնարավոր չէ «ԱՄԱԳԱ ԲԺՇԿԻ» մեկ թողարկման շրջանակներում գրել մեր բոլոր երախտավորների մասին: Մեր խոնարհումը բերելով նրանց հիշատակին, ում մասին չենք նշել կավելացնեինք, որ թե՛ նշվածները, թե՛ վերջիններս իրենց գործունեությամբ նպաստել են առաջին հիվանդանոցի ստեղծմանը, զարգացմանը:

**ՌՈՒԲԵՆ ՅՈՒՅԱՆ
(1894-1955)**



Սանկտ Պետերբուրգի ռազմաբժշկական ակադեմիան ընդունված, Կիևի համալսարանի բժշկական ֆակուլտետը 1919-ին ավարտած, Օդեսայում վերապատրաստված Ռ. Յոլյանը վերադառնում է Երևան և նշանակվում Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի վիրաբուժության ամբիոնի ասիստենտ, ապա՝ դոցենտ: 1947-ին նրա անմիջական ղեկավարությամբ Երևանում հիմնադրվել է արյան փոխներարկման և հեմատոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտը:

**ՍԵՂՐԱԿ ՇԱՐԻՄԱՆՅԱՆ
(1898-1989)**



Խարկովի համալսարանի բժշկական ֆակուլտետն ավարտելուց հետո՝ 1926-ին տեղափոխվել է Երևան և աշխատանքի անցել պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի ֆակուլտետային վիրաբուժության կլինիկայում: 1928-ին գործուղվել է Ղափան: 1930-ին վերադառնալով Երևան՝ սկսել է ծավալել գիտամանկավարժական աշխատանքներ: 1940-ին ընտրվել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի ընդհանուր վիրաբուժության ամբիոնի վարիչ և մինչև 1973-ը անընդմեջ ղեկավարել այն: Հայրենական մեծ պատերազմի տարիներին՝ գիտամանկավարժական գործունեությանը զուգահեռ, եղել է Երևանի նյարդավիրաբուժական էվակոհոսպիտալի առաջատար նյարդավիրաբույժը և մի քանի հոսպիտալների խորհրդատու վիրաբույժ:

Èàœ² ÜÏ² ðÛ°ð² è² æÆÛ
 ÐÆì² Û² ÛàòÆò´
 î² êÛ² ØÛ² Î Û°ðÆ
 î² Ô°ØàãÂÛ² Ø´



ПРОФ-КОМ МЕДФАКА ГБОУ ВПО С.С. РАФМЕ
 1928-29 А.К. Г.Д.

ԲԱՐԴՈՂԻՍԵՆՍ
 ՖԱՆԱՐՁՅԱՆ
 (1898-1976)



1925 թվականին Երևանի պետական համալսարանի կողմից Թիֆլիսից հրավիրվել է բժշկական ֆակուլտետում դասախոսելու, ապա մեկնել է Գերմանիա՝ ռենտգենաբանության նվաճումների ծանոթանալու և կատարելագործվելու նպատակով: 1926-ին Բեռլինից վերադառնալուց հետո հիմնադրել է ռենտգեն-ռադիոլոգիական բաժանմունքը և բժշկական ֆակուլտետի ուսանողների համար կարդացել դասախոսություններ: 1936-ից եղել է Երևանի բժշկական ինստիտուտի ռենտգենաբանության ամբիոնի վարիչ:

ԳԱՐԵԳԻՆ ՄԻՐՁՈՅԱՆ
 (1902-1990)



Ավարտելով Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը՝ իր բժշկական գործունեությունը սկսել է հանրապետական կլինիկական հիվանդանոցի նյարդային հիվանդությունների բաժանմունքում որպես օրդինատոր, իսկ 1931-ին նշանակվել է բժշկական ինստիտուտի նյարդային հիվանդությունների ամբիոնի ասիստենտ: 1958-ին զբաղեցրել է բժշկների կատարելագործման ֆակուլտետի նյարդաբանության և նյարդավիրաբուժության ամբիոնի վարիչի պաշտոնը, իսկ 1961-76թթ.՝ ղեկավարել բժշկական ինստիտուտի նյարդավիրաբուժության ամբիոնը: Եղել է հանրապետության գլխավոր նյարդաբանը:



1924 ԹՎԱԿԱՆ. ՏԱՍ ՏԱՐԻ ԱՆՑ...

Ըստ արխիվային փաստաթղթերի


ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻՆ ՀԱՏԿԱՑՎԵԼԻՔ ՀՈՂԱՄԱՍԵՐ

Հանձնաժողովը՝ նախագահությամբ կլինիկական հիվանդանոցի գլխավոր բժիշկ Սպանդարատ Կամսարականի, անդամակցությամբ նույն հիվանդանոցի տնտեսական մասի վարիչ Հովհաննես Հովհաննիսյանի և կոմունալ տնտեսության ներկայացուցիչ Գուրգեն Գարուզյանի, շրջելով հիվանդանոցին հատկացվելիք հողամասերը, կազմեց սույն արձանագրությունները.

Ասատուր Մարգարյանի այգի: Ունի 2.352 քառակուսի սաժեն տարածություն, սահմանները. հարավից՝ հիվանդանոցի հողամասը, արևելքից՝ Բրաժնիկովի հողամասը, հյուսիս-արևելքից և հյուսիս-արևմուտքից՝ Աբովյանի փողոցը և Նորքի ճանապարհը: Պտղատու ծառեր՝ մեծ և փոքր. ծիրան՝ 82, տանձ՝ 116, դեղձ՝ 178, խնձոր՝ 45, նուշ՝ 10, սերկևիլ՝ 16, շլոր՝ 41, գիլաս՝ 40, դամբուլ՝ 19, հոն՝ 15, ֆնդուղ՝ 1, փշատ՝ 21, թուփ՝ 9, հաղարջ՝ 35 հատ, խաղող՝ 6 թառնա: Ընդամենը՝ 634 հատ, ոչ պտղատու ծառեր՝ 164 հատ: Այգու մեջ կան մի հին շենք, գոմ և դարմանանոց:

Բրաժնիկովի նախկին այգի: Ունի 672 քառակուսի սաժեն տարածություն: Սահմանները. արևելքից՝ Գետառչայ գետը (անգամ Երևանող հոսող Գետառչի անունը թուրքացվել է, ինչպես մեր հազարավոր տեղանուններ, գետերի ու լեռների անուններ) հյուսիս-արևմուտքից՝ Նորքի ճանապարհը, արևմուտքից՝ Մարգարյանի այգին: Պտղատու ծառեր. դեղձ՝ 84, սերկևիլ՝ 8, գիլաս՝ 4, շլոր՝ 4, դամբուլ՝ 6, տանձ՝ 4, բադամ՝ 6, խնձոր՝ 1, թթենի՝ 15, հաղարջ՝ 20 հատ: Ընդամենը՝ 152 հատ, ոչ պտղատու ծառեր՝ 12 հատ: Այդ այգում կա մի շենք, որը կոմունալ տնտեսությունից ընդունել էր շինարարական հանձնաժողովը, որի մասին կա համապատասխան արձանագրություն:

Վ. Պետրոսյանի տան շենքը: Ունի 6 սենյակ, 2-ը՝ տախտակյա, 4-ը՝ հողե հատակով, 4 միջանցք, 1 հացատուն, 1 ամբար՝ հատակը պո-



լած, առաստաղը՝ թաղով շինած, 1 ներքնատուն, 1 գոմ, 1 մարագ, դարմանանոց: Տունն ունի բալկոն, շենքի տանիքը հողից է, շենքը հին է և կարիք ունի հիմնովին վերանորոգման: Այգին ունի 1200 քառակուսի սաժեն տարածություն: Սահմանները. հյուսիս-արևմուտքից՝ Աբովյան փողոցը, հարավ-արևմուտքից՝ ճանապարհ, հյուսիս-արևելքից՝ հիվանդանոցի բակը, հարավ-արևելքից՝ ճանապարհ այգիների միջով դեպի Գետառչայ: Պտղատու ծառեր. գիլաս 12, դեղձ՝ 45, խնձոր՝ 11, ծիրան՝ 14, շլոր՝ 23, ֆնդուղ՝ 3, բալ՝ 4, տանձ՝ 3, բադամ՝ 2, պոպոք՝ 20, թուփ՝ 6 հատ: Ընդամենը՝ 142 հատ, ոչ պտղատու ծառեր՝ 47 հատ:

Եղբայր Վարդանյանների այգի: Ունի 1992 քառակուսի սաժեն տարածություն: Սահմաններ. հարավ-արևմուտքից՝ ճանապարհ համալսարանի և այգու միջև, արևելքից՝ Գետառչայ գետը, հյուսիսից՝ հիվանդանոցի հողամասը, արևմուտքից՝ Պետրոսյանի այգին, որի մոտով անցնում է ճանապարհ: Պտղատու ծառեր. թթենի՝ 6, սերկևիլ՝ 6, շլոր՝ 5, դեղձ՝ 68, ծիրան՝ 51, գիլաս՝ 4, դամբուլ՝ 14, բալ՝ 11, խնձոր՝ 2, փշատ՝ 2, պոպոք՝ 8 հատ: Ընդամենը՝ 177 հատ, ոչ պտղատու ծառեր՝ 5 հատ:

**ՊԱՐԹԵՎ ՄԱՐԳԱՐՅԱՆ
(1898-1980)**



Եղել է պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի առաջին ուսանողներից: Գործուղվել է Էջմիածին, որից հետո վերադարձել է Երևան և նշանակվել մանկաբարձագինեկոլոգիական կլինիկայի օրդինատոր, ապա զբաղեցրել բժշկական ֆակուլտետի մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոնի ասիստենտի պաշտոնը, որով և սկսվել է նրա գիտամանկավարժական գործունեությունը և տևել մինչև 1973-ը:


1939-ին գիտնականը նշանակվել է բժշկական ինստիտուտի բուժկանխարգելիչ ֆակուլտետի դեկան, 1943-45թթ.՝ ՀԽՍՀ առժողովմի տեղակալ: 1954-63թթ. դեկավարել է սամիտարական ֆակուլտետի դեկանատի աշխատանքները:

**ԲԱԳՐԱՏ ՍԱՅԱԴՅԱՆ
(1902-1975)**



Պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի առաջին շրջանավարտներից էր: 1930-ից աշխատանքի է անցել առաջին հիվանդանոցի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքում՝ որպես օրդինատոր, իսկ հետագայում նշանակվել բժշկական ինստիտուտի մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոնի ասիստենտ: 1952-53թթ. և 1963-70թթ. եղել է Երևանի բժշկական ինստիտուտի մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոնի վարիչը: Բ. Սայադյանը Հայաստանում կազմակերպել է մանկական գինեկոլոգիական ծառայություն: Հեղինակ է 50-ից ավելի գիտական աշխատությունների:

**ՎԱԶԳԵՆ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ
(1910-1973)**



ՎԼԻՆԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՅԳԻՆԵՐԻ ԱՃՈՒՐԴ

<p>Հիվանդանոցի կառավարչին՝ Ալի Մահամադ օղլուց, քաղաք Ալավերդի</p> <p>ԴԻՄՈՒՄ</p> <p>Ցանկանում եմ վերցնել 1-ին հիվանդանոցի, համաձայն ձեր հայտարարության, երկու դեպքում ալյուրի կապալով: Պայմանների մասին կարող եմ խոսել աճուրդի ժամանակ, և մուծում եմ հիսուն ռուբլի՝ այգու աճուրդին մասնակցելու համար:</p>	<p>Երևանի առաջին կլինիկական հիվանդանոցի տնտեսական վարչությանը՝ քաղաքացի Սուրեն Մարգարյանից, հասցե՝ Աբովյան փողոց, 1925թ, ապրիլի 6</p> <p>ԽՆԴԻՐ</p> <p>Սրանով հայտնում եմ, որ համաձայն ձեր հայտարարության՝ ցանկանում եմ վերցնել հիվանդանոցին պատկանող և կից գտնվող այգիները կապալով և առաջարկում եմ 300 ռուբլի կապալավարձ: Պայմանների ձևակառուցման և պարտավորումների մասին կայանաավորվենք աճուրդի ժամանակ:</p>	<p>Առաջին հիվանդանոցի գլխավոր բժշկին՝ քաղաքացի Բարսեղ Եղիազարյանից 1925թ, ապրիլի 19</p> <p>ԴԻՄՈՒՄ</p> <p>Համաձայն ձեր հայտարարությանը՝ սրանով հայտնում եմ, որ ցանկանալով վերցնել կապալով հիվանդանոցի գտնվող այգիները, դնում եմ իմ թեկնածությունը՝ առաջարկելով կապալավարձ 250 ռուբլի: Փոխադարձ պարտավորությունների մասին կայանաավորվենք աճուրդի ժամանակ:</p>
--	---	---

Միջնակարգ կրթություն ստանալուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1931-ին ավարտել է նրա բազայի վրա հիմնադրված բժշկական ինստիտուտը, որից հետո զբաղեցրել է ֆակուլտետային վիրաբուժության կլինիկայի օրդինատորի պաշտոնը: 1933-ին ընդունվել է ասպիրանտուրա, որն ավարտելուց հետո ասիստենտի պաշտոն է զբաղեցրել ֆակուլտետային վիրաբուժության, ապա՝ ընդհանուր վիրաբուժության ամբիոնում: 1936-ին գործուղվել է Մոսկվա, ուսումնասիրել թոքերի քաղցրահամայն վիրահատական բուժման մեթոդները և վերադառնալով Երևան՝ սկսել գործնական աշխատանքում կիրառել ձեռք բերած գիտելիքներն ու փորձը: Հայաստանում առաջին անգամ թոքի քաղցրահամայն բրոնխների լայնացման ժամանակ հեռացրել է թոքը, ինչպես նաև յուրահատուկ եղանակով թոքերի էփինոլոկի բուշորը հեռացրել է իր ֆիբրոզ թաղանթի հետ միասին և խուլ կերպով կարել մնացորդային խոռոչը: 1956-73թթ. ղեկավարել է բժշկական ինստիտուտի մանկաբուժության, սանիտարական և ստոմատոլոգիական ֆակուլտետների վիրաբուժության ամբիոնը:

1955 թվականին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: Ուսումնասիրություններ է կատարել վիրաբուժության տարբեր ճյուղերի՝ այդ թվում վիրահատությունների ժամանակ ցավազրկման, սրտային վիրաբուժության, աղիքների, պլաստիկ վիրահատությունների և այլնի ուղղությամբ, ապացուցել, որ հաստ աղիքից արհեստական ստամոքսի ստեղծումն ավելի քիչ է խանգարում մարսողական պրոցեսի նորմալ ընթացքին: Մեծամուն գիտնականը պարգևատրվել է «Կարմիր աստղի», «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշաններով և բազմաթիվ մեդալներով:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Առաջին լենինյան կլինիկական հիվանդանոցին պատկանող այգիների աճուրդի մասին, 19 ապրիլի, 1925թ, Երևան

Աճուրդը սկսվեց ժամը 12.00-ին՝ նախագահությամբ գլխավոր բժշկի տեղակալ Լ. Հովհաննիսյանի, մասնակցությամբ առժողովմատի ներկայացուցիչ Ս. Գաբայանի, տեղկոմի ներկայացուցիչ բժիշկ Բաղդամյանի, քարտուղար՝ տնտեսական մասի վարիչ Հ. Հովհաննիսյանի:

Աճուրդին մասնակցեցին քաղաքացիներ՝ Ալավերդուց Մահամադ օղլին, Սուրեն Մարգարյանը, Բարսեղ


Եղիազարյանը, Գևորգ Սուրջյանը: Աճուրդը հայտարարվեց 400 ռուբլուց: Սկզբում ցանկացող չեղավ, բայց աճուրդը փակվելու ժամանակ առաջարկվեցին հետևյալ գները՝ 405 ռուբլի որպես գումար, և սկսվեց աճուրդը ու վերջացավ 510 ռուբլիով, որը առաջարկված էր քաղ. Գևորգ Սուրջյանի կողմից: Աճուրդը այս գումարով հայտարարվեց փակված, այգիները մնացին հիշյալ Գևորգ Սուրջյանի վրա:



Ըստ արխիվային փաստաթղթերի


ԱՌԱՋԻՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԳԼԽԱՎՈՐ ԲԺԻՇԿ ԱՊԱՆԴԱՐԱՏ ԿԱՄԱՐԱԿԱՆԻՆ

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ (1910-2000)




Սոսկվայի 2-րդ բժշկական ինստիտուտի ֆակուլտետային վիրաբուժության ամբիոնում վերապատրաստվելուց հետո, 1935-ին նշանակվել է օպերատիվ վիրաբուժության և տեղագրական ամատոմիայի ամբիոնի, ինչպես նաև օրթոպեդիայի և վնասվածքաբանության ամբիոնի ասիստենտ: 1951-ին գիտնականը նշանակվել է հոսպիտալային վիրաբուժության ամբիոնի ասիստենտ, մեկ տարի անց՝ դոցենտ: 1960-62թթ. և 1969-71թթ. եղել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի ռեկտորը:

ՍՈՎՐԱՏ ՀՈՎԿԱՆՆԻՍՅԱՆ (1920-1996)




1937-41թթ. սովորել է Երևանի բժշկական ինստիտուտում: Ձրացրվելուց հետո՝ 1946-ին, շարունակել է աշխատել Երևանի 1-ին կլինիկական հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքում: Ընտրել է նյարդավիրաբուժի մասնագիտությունը և խորացել կենտրոնական և ծայրամասային նյարդային համակարգի հիվանդությունների ախտորոշման և բուժման ուղղությամբ: Ղեկավարել է նյարդավիրաբուժական կլինիկան: 1952-57թթ. եղել է օրթոպեդիայի և վնասվածքաբանության գիտահետազոտական ինստիտուտի տնօրենը: 1962-ին Ս. Հովհաննիսյանը նշանակվել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի ռեկտոր, որը ղեկավարել է մինչև 1966-ը:



1924 թվական

Կենտրոնական վարչություն, նկատի ունենալով, որ հիվանդանոցի նայրապետ Կաբավ Պետրոսյանը ֆիզիկապես թույլ է, և դրա պատճառով նրա համար դժվար է տանից հասնել հիվանդանոց, որը շատ հեռու է, խնդրում ենք նրան հիվանդանոցում հատկացնել ապրելու տեղ: Կարելի է նույնիսկ նրան տեղավորել այնպիսի սենյակում, որում ապրում են նաև ուրիշները:



1925 թվական

Առժողկոմատին ենթակա բոլոր հիմնարկների վարիչներին

Սրանով առաջարկվում է ձեզ՝ այսուհետև ձեզ ենթակա հիմնարկի համար նոր աշխատակիցներ վերցնելիս, ինչ որակի էլ պահանջը վերաբերվի՝ սկսած բժշկից մինչև բանվոր, ոչ մի դեպքում այդպիսիք չհրավիրել դրսից կամ թե չպահանջել աշխատանքի միջնորդ բյուրոյից ու արհմիությունից, այլ անմիջապես այդպիսիք ստանալու համար դիմել կոմիսարիատի վարչակազմակերպչական բաժնին:

ԱՌԺՈՂԿՈՄ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐԻՉ

**Քաղվածք առժողկոմատի
ապրիլի 17-ի հրամանից**

Առաջին հիվանդանոցի գլխավոր բժիշկ Սպանդարատ Կամսարականին առաջարկվում է ընդունել առաջին հիվանդանոցը բժիշկ Գրիգոր Արեշյանից և անցնել իր պարտականությունների կատարմանը ս.թ. ապրիլի 26-ից: Առաջին հիվանդանոցի գլխավոր բժիշկի ժամանակավոր պաշտոնակատար բժիշկ Գրիգոր Արեշյանին առաջարկվում է հանձնել հիվանդանոցը բժիշկ Կամսարականին և անցնել իր ուղղակի պարտականությունների կատարմանը նույն թվից:

Առաջին կլինիկական հիվանդանոցի մանկաբարձական բաժանմունքի վարիչ բժիշկ Գրիգոր Արեշյանին և օրդինատոր բժիշկ Գաբրիել Զարությունյանին՝ անցնել իրենց պարտականությունների կատարմանը:

Ի նկատի ունենալով, որ առայժմ բացված է միայն հիվանդանոցի մանկաբարձական բաժանմունքը, այդ բաժանմունքի վարիչ Գրիգոր Արեշյանին՝ ժամանակավորապես անցնել գլխավոր բժիշկի պարտականությունների կատարմանը այդ բաժնի վերաբերմամբ:

Երկրորդ հիվանդանոցի գլխավոր բժիշկին առաջարկվում է հանձնել մանկաբարձական բաժանմունքի գույքը՝ կայքը և գործիքները 1-ին կլինիկական հիվանդանոցի մանկաբարձական բաժանմունքի վարիչին՝ կազմելով արձանագրություն, որը ներկայացնել կոմիսարիատ:

Առաջին կլինիկական հիվանդանոցի գլխավոր բժիշկ Ս. Կամսարականը մնում է շինարարական հանձնաժողովի մեջ՝ որպես անդամ: Նրան առաջարկվում է հոգ տանել հիվանդանոցի շուտափույթ վերազինման և կահավորության մասին:

1925 թվական

**Առողջապահության
ժողովրդական կոմիսարիատի
1925թ. սեպտեմբերի
1-ի հրամանից.**

Կաթնային ֆերմայի կառավարիչ ընկեր Զրաչյա Զայրապետյանին, ով վերադարձել է Դիլիջանից, ուր գտնվում է ֆերման, մտցնել առաջին հիվանդանոցի շտատի մեջ՝ սույն թվականի օգոստոսի 27-ից:

**1924 թվական
Հանրապետության
դատախազի գրությունը
առժողկոմատին**

Սրան կից ուղարկելով Երևանի առաջին հիվանդանոցի շենքում ապրող 6 անձանց դիմումը՝ դատախազական բաժինը հաղորդում է, որ համաձայն բնակարանային դեկրետի թիվ 7 հոդվածի՝ որևէ շենքի հիմնական վերանորոգման դեպքում կենվորները դուրս են հանվում այն պայմանով, որ շենքը նորոգելուց հետո նրանք նորից զետեղվեն նախկին բնակարաններում, եթե միայն ցանկանան այդ: Տվյալ դեպքում, երբ գավգործկոմը, համաձայն նույն դեկրետի թիվ 11 հոդվածի, հիշյալ շենքը վերանորոգում է հատկապես հիվանդանոցի համար, խնդրատուները, լինելով բանվորներ կամ ծառայողներ, զրկվում են իրենց նախկին բնակարաններից: Գավգործկոմը, համաձայն դեկրետի թիվ 11 հոդվածի ծանոթության, պարտավոր է հիշյալների տրամադրել որևէ շենք կամ բնակարան:

Սակայն նկատի առնելով Երևանում գոյություն ունեցող բնակարանային ճգնաժամը, ինչպես և գավգործկոմից անկախ մի շարք այլ պատճառներ՝ դատախազական բաժինը միակ հնարավոր ելքը ներկա դեպքում համարում է այն, որպեսզի առժողկոմատը բաց թողնի մի փոքր գումար, որով հնարավոր լինի նորոգելու գավգործկոմի կողմից հատկացված որևէ մի շենք, ուր և զետեղելու են խնդրատուներին:

**Դատախազական բաժնի
վարիչ՝ ԱԶԱՐՅԱՆ**

**ՀԽՍՀ աշխատանքի
ժողովրդական կոմիսարիատից**

Բաժինս խնդրում է հետաձգել Ձեր պահանջը կոշիկների վերաբերյալ քաղաքացի Միքայել Զիրոյանից, քանի որ այդ գործը քննվում է կոմֆլիկտային բաժնում:

**Կոմֆլիկտային բաժնի վարիչ՝
ԱՎԱԼՅԱՆ**

**պատասխանատու
քարտուղար՝
ՆԱԶԱՐՅԱՆ**



Միջնակարգ կրթություն ստանալուց հետո ընդունվել է Երևանի պետական բժշկական ինստիտուտ, որն ավարտել է 1947-ին: Ինստիտուտն ավարտելուց հետո քիթ-կոկորդ-ականջի մասնագիտության գծով ընդունվել է կլինիկական օրդինատուրա, որն ավարտելուց հետո 1949-ին գործուղվել է Կիրովական (այժմ՝ Վանաձոր): 1952-ին վերադառնալով Երևան՝ մինչև 1959-ը աշխատել է հանրապետական հիվանդանոցի քիթ-կոկորդ-ականջի հիվանդությունների կլինիկայում: 1959-ին Զ. Նարիսյանովը նշանակվել է հանրապետության առողջապահության նախարարության 4-րդ գլխավոր վարչության պետ: 1960-ին նշանակվել է հանրապետության առողջապահության նախարար՝ այդ պաշտոնում մնալով շուրջ 15 տարի: Այդ տարիների ընթացքում նրա ղեկավարությամբ բժշկագիտության և առողջապահության կազմակերպման բնագավառում հանրապետությունում լուրջ դրական տեղաշարժեր են կատարվել՝ ստեղծվել են նոր մասնագիտական բաժանմունքներ, շարք են մտել շրջանային և քաղաքային հիվանդանոցներ և պոլիկլինիկաներ: Նրա ջանքերի շնորհիվ Երևանում հիմնադրվել են սրտաբանության և բժիշկների կատարելագործման ինստիտուտները: 1975-ին նա նշանակվել է Ն.Բ. Զակոբյանի անվան ընդհանուր հիգիենայի և պրոֆեսիոնալ հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն և մինչև 1987-ը ղեկավարել է այն:



Հայրենի
Լեւինյան կլինիկական հիվանդանոցի
անշնական կազմի
1924թ. 15 Տարրի.

Ըստ արխիվային փաստաթղթերի

Նոյեմբերի 25-ի հրամանից՝ ուղղված առաջին կլինիկական հիվանդանոցի վարիչին՝ աշխատավորների արհմիության Հայաստանի կենտրոնական վարչության Երևանի աշխատանքի պալատից՝

Մեր ունեցած տեղեկություններով՝ Ձեզ մոտ աշխատանքի ընդունված մի աշխատակից՝ գործավարի պաշտոնով, որը ոչ արհմիության անդամ է և ոչ էլ միջնորդ բյուրոյում ցուցակագրված: Ի նկատի ունենալով, որ միությունն ունի ցուցակագրված մի շարք գործազուրկներ, նույնպես միջնորդ բյուրոյում ցուցակագրված կան հարյուրներով գործազուրկ միության անդամներ՝ կենտրոնական վարչությունը խնդրում է ձեզ՝ հեռացնել նրան:

Երևանի գլխավոր ինժեներ Բունինից «Լեւինի» անվան հիվանդանոցի գլխավոր բժիշկ Ս. Կամսարականին

Համաձայն Ձեր խնդրանքի՝ ուսումնասիրվել է հիվանդանոցի ջրամատակարարման ցանցի վիճակը, որի առիթով Ձեզ տեղեկացնում եմ, որ Ձեր հիվանդանոցի ջրագիծը մագիստրալին միացված է տեխնիկական սխալով: Բացի այդ՝ Ձեր ջրագծի ճանապարհին հենց Ձեր կողմից տեղադրված է ջրավազան, որն իր հերթին թուլացնում է ջրի հոսքը, որ Ձեր ջրավազանը բացօթյա է: Առաջարկում ենք Ձեր ջրամատակարարման տարողությունը տեղադրել հիվանդանոցի ձեղնահարկում:

1925 թվական
Առժողկոմատի բուժբաժնի կարգադրությամբ Ձեզ հանձնված հիմնարկության աշխատակիցները հիվանդության դեպքում, որպեսզի իզուր ժամանակ չկորցնեն բուժարան հաճախելու համար, պիտի բժշկական օգնություն ստանան տեղերում, իսկ դեղորայք՝ ձեր ստորագրությամբ՝ որպես ապահովագրվածներ առբաժանմունքին ենթակա 1-ին դեղատնից: Հայտնելով վերոհիշյալը՝ առբաժանմունքը խնդրում է դուրս գրել դեղորայքը խնայողաբար և հարկ եղած դեպքում:

Մուշուհյան և Ահաբեկյան կազմի

Անուն	Գրանցում		Վճարում	Վերջին համար
	Ու	Կ		
Համարաբեկյան Աղաբեկյան Գր. Կ.	39		17.160.000.000	Արհմիության
Կեղեցիկ համարաբեկյան Գր. Կ.	39		17.160.000.000	Զեֆեյի
Կոնստանտինյան Կոստանտին Գր. Կ.	26		11.440.000.000	հավելյալ
Կարաբեկյան Կարաբեկ Կ.	26		11.440.000.000	Վերջին
Կարաբեկյան Գր. Կ.	21	45	9.438.000.000	Վերջին
Կարաբեկյան Կարաբեկ Կ.	21	45	9.438.000.000	Վերջին

Պատմական արժեքավոր այս փաստաթղթում ռոճկացուցակում, մեր երախտավորների անուններն են՝ սեփական ձեռագրով, ստորագրությունները, ինչպես նաև՝ աշխատավարձերի չափերը...

С. С. Р. А.
ГЛАВВРАЧ . *Արխիվ*
БОЛЬНИЦ.

Необходимо бронировать по две койки в каждом отделении зверенной Зам больницы за П/отделом Медпомощи Застрахованным для больных, прибывающих из уездов.

НАРКОМЗДРАВ *Արխիվ*
ЗАВ. П/ОТД. МЕДИ. ЗАСТ. *Արխիվ*
СЕКРЕТАРЬ *Արխիվ*

Հայաստանի Հանրապետության առողջապահության կոմիսարիատից
Անհրաժեշտ է Ձեր ղեկավարած հիվանդանոցի յուրաքանչյուր բաժնում ունենալ երկուսական ազատ մահճակալ գավառներից եկող հիվանդների համար:

ՀԵՏԱՔՐՔԻՐ ԴԵՊՔԵՐ, ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

ՀԱՏՎԱԾՆԵՐ Ռ. ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆԻ «ՄԱՐԴԻԿ ԾԵՐՄԱԿ ԽԱԼԱԹՈՎ» ԳՐՔԻՑ

ԳՐԻԳՈՐ ԱՐԵՇՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Արժանի անունը կրող պուրակին կից, մեծ գրողի արձանից քիչ ձախ, կառուցված են բժշկական հիմնարկների մի քանի գեղեցիկ շենքեր:

Նրանցից մեկը՝ Երևանի 2-րդ կլինիկական ծննդատունը, կրում է պրոֆեսոր Գրիգոր Արեշյանի անունը: Շուրջ 5 տարի է անցել, երբ նշանավոր պրոֆեսորն այլևս չի բացում այդ շենքի դուռը: Արդեն մարել են ժողովրդի հոգսերով բաբախող նրա սրտի զարկերը, բայց երևանցիները, տրադիցիոն կերպով, շարունակում են բուժական այդ հիմնարկն անվանել «Արեշյանի ծննդատուն»:

Երևանի բնակչության զգալի մասն այս ծննդատանն է իր առաջին ճիչն

արձակել, նրա պատուհանից առաջին անգամ ժպտացել արարատյան պայծառ արևին: Ո՞վ գիտե, այս հողվածն ընթերցողներից քանի՞սն են թարթացել հնուտ մանկաբարձ Արեշյանի ձեռքերին, դժվարին ծննդաբերությունից հետո կյանք ստացել նրա ջերմ հոգատարությամբ: Որքան հոգատար էր Արեշյանը հիվանդների, մոր ու մանկան վերաբերյալ, այնքան պահանջկոտ էր՝ մարդկանց առողջությանը հսկող մասնագետների նկատմամբ, այնքան հետևողական էր նա բուժփիմնարկի կարգ ու կանոնի համար:

... Բաժանմունքի վերանորոգման ձգձգման հարցում առանձնապես անհոգ էր այդ գործում շինարասեն-

յակի պետը: Եվ ահա մի օր, տաք վեճից հետո, Արեշյանը շինգրասենյակի պետին խիստ տոնով հանկարծ հարցրեց.

- Երևանում ես ծնվել, այո՞, իսկ ո՞ր թվականին:

Իմանալով պետի ծննդյան թվականը, նա արագ գնաց ծննդատան արխիվ և այնտեղից բերեց հնամաշ մի մատյան:

- Ահա՛ ձեր անուն-ազգանունը: Այս ձեռքերս են ձեր ծնունդը ընդունել՝ հենց այս սենյակում: Այժմ ցրտից վերարկուդ չես հանում, իսկ կծնվե՞իր այս ցրտում: Դե զգա ծննդկանների ու երեխաների վիճակը և վերանորոգիր ջեռուցումը...

ՌՈՒԲԵՆ ՅՈՒՅԱՆԻ ՄԱՍԻՆ

«Վիրաբույժը պետք է ունենա արժվի սուր աչք, առյուծի սիրտ և կանացի նուրբ ձեռքեր: Դուք հենց այդպիսին եք, սիրելի բժիշկ, ձե՛զ են պարտական աշխարհում ամենաթանկագին բանի՝ կյանքի համար»,- կարդում ենք հիվանդանոցում պահվող՝ հիվանդների տպավորությունների մի հին գրքում: Պրոֆեսոր Ռ. Յոլյանին նվիրված այսպիսի շատ ջերմ տողեր կարելի է գտնել այս հիվանդանոցի հին մատյաններում: Մնում են մատյանները, մնում են նրա թողած տասնյակ արժեքավոր աշխատությունները, բայց արդեն չկա հայ նշանավոր վիրաբույժը:

- Մեր բախտով վիրաբույժներս նման ենք արտիստներին: Խաղում ենք



մեր դերն ու առհավետ գնում աշխարհից: Մահվանից հետո օբսիդանում է վիրաբույժի սուր դանակը, ինչպես որ այլևս չի հնչում արտիստի հզոր ձայնը,- սրտաբաց զրուցում էր Ռուբեն Յոլյանը մի օր. ես որոշակի թախիծ նկատեցի նրա ձայնում, նրա խորունկ աչքերում:

- Այժմ այլ են հնարավորությունները, պրոֆեսոր,- նկատեցի ես,- արտիստի արվեստը մնում է կինոժապավենի, ծայնասկավառակների վրա: Մեծ հնարավորություններ ունի այժմ նաև բժիշկը: Նա իր վիրաբուժական մեթոդները կարող է մանրամասն գրի առնել, գրքեր հրատարակել:

- Իսկ ո՞րն է կարևոր՝ փրկել, ահա, այս հրաշալի մարդկանց կյանքը, թե՞ գրքեր թողնել սերունդների համար,- մի ձեռքը պարզելով դեպի կողքի հիվանդասենյակները, իսկ մյուսով ցույց տալով սեղանին թափված կիսատ աշխատությունները՝ հարցիս հարցով պատասխանեց պրոֆեսորը:

- Երկուսն էլ՝ և՛ սա, և՛ նա:

- Վիրաբույժին, որպես բացառություն, երկու կյանք պետք է տրվեր. մեկը՝ վիրահատելու, մյուսը՝ աշխատություններ գրելու համար,- կատակով ավարտեց Յոլյանը մեր զրույցը:





**Քաղվածք առողջապահության
ժողովումատի 1924թ. փետրվարի
11-ի թիվ 17 հրամանից**

Երևանի առաջին կլինիկական հիվանդանոցը վերանվանվեց Լենինի անվան կլինիկական հիվանդանոց ս.թ. փետրվարի 7-ից:

Տեղեկանք՝ քաղվածք Հայաստանի Արտգործկոմի փետրվարի 7-ի արձանագրությունից:

Հայաստանում էտրիդային կարգերի հաստատումից հետո հեղկոմի դեկրետով ստեղծված ՀՍԽՀ առողջապահության ժողովրդական կոմիսարիատի ենթակայության տակ բացվում են մի քանի խոշոր բուժիմնարկներ՝ այդ թվում Վ.Ի.Լենինի անվան հանրապետական կլինիկական ինստիտուտը:

Վերջինս 1937 թվականին վերակազմվել է Վ.Ի.Լենինի անվան հանրապետական առաջին կլինիկական հիվանդանոցի, իսկ ՀՍԽՀ առողջապահության ժողովրդական կոմիսարիատը 1946 թվականին՝ ՀՍՍՀ առողջապահության նախարարության:

1970 թվականին Աջափնյակ թաղամասում շահագործման է հանձնվում Հանրապետությունում խոշորագույն բուժամալիք, ուր տեղափոխվում է Վ.Ի.Լենինի անվան հանրապետական կլինիկական հիվանդանոցը, իսկ Աբովյան փողոցի վրա գտնվող հիվանդանոցի հին մասնաշենքում գործում է Երևան քաղաքի առաջին կլինիկական հիվանդանոցը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻՆ ԱՈՐԵՆԹԵՐ
ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԸ**

1918-ին Երևանի քաղաքային հիվանդանոցը տեղափոխվել է ընդարձակ, նորակառույց, սակայն դեռևս ոչ լրիվ ավարտուն շենք, որը հետագայում պիտի կոչվեր Վ. Ի. Լենինի անվան կլինիկական ինստիտուտ, ապա՝ Երևանի Վ. Ի. Լենինի անվան հանրապետական հիվանդանոց, ապա՝ Երևանի 1-ին քաղաքային հիվանդանոց, ապա՝ ԵՊԲՀ «Հերացի» հիվանդանոցային համալիր:

1920-ին այս հիվանդանոցի բակում բացվել է երկհարկանի 20 մահճակալով հոգեբուժական հիվանդանոց, որը 1925-ին ունեցել է 25, իսկ 1929-ին՝ 75 մահճակալ:

1921-ի ապրիլի 11-ի դրությամբ Երևանի հոգեբուժական հիվանդանոցի գլխավոր բժիշկը եղել է Դմիտրի Մալյուժենկոն (Մալյուժենկո):

1926-ին այդ բազայի վրա կազմակերպվել է Երևանի համալսարանի բժշկական ֆակուլտետի նյարդային և հոգեկան հիվանդությունների միացյալ ամբիոնը, որի վարիչն էր Անդրեաս Արզումանյանը, իսկ հոգեբուժության ասիստենտը՝ Գրիգոր Տեր-Հակոբյանը՝ Գրոն:

1926-ին այստեղ կազմակերպվել է նաև հոգեկան հիվանդների ամբուլատոր օգնություն, որով հիմք է դրվել ապագա դիսպանսեր ծառայությանը:

1930-ին Երևանի հոգեբուժական հիվանդանոցը տեղափոխվել է Իջևան:

1936-ին Երևանի 1-ին քաղաքային հիվանդանոցի նյարդային հիվանդությունների բաժանմունքին առընթեր բացվել է 25 մահճակալով հոգեբուժական բաժանմունք, որը ղեկավարել է պրոֆեսոր Գրոն:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԻՆԱՍՅԱՆ



ՖՈՏՈՐՔԵԿՏԻՎԸ ՈՐՄԱՅԵԼ Է ՀԵՏԱԶԵՐԻ ՊԱՀ

Լուսանկարում՝ առաջին հիվանդանոցում նշում են մարտի 8-ը:
Հիվանդների թվում ժամանակին ճանաչված երգիչ Նորայր Մնացականյանն է, ով շնորհավորում է կին աշխատակիցներին... և ենթադրվում է նաև երգ՝ նրանց պատվին:



Նկարներում՝ Երևանի Վ. Ի. Լենինի անվան կլինիկական ինստիտուտի տնօրեն Սողոմոն Գաղակչյանը՝ իր աշխատակիցների հետ հիվանդանոցի բակում (1937թ.) և Երևանի բժշկական ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմը կլինիկական հիվանդանոցի աշխատակիցների հետ (1960-ականներ):

Լուսանկարները մեզ տրամադրել է Նվարդ Մինասյանը: Դրանք տպագրվում են առաջին անգամ:

50 ՏԱՐԻ՝ ԱՌԱՋԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ

ՍԵՂԱ ՀՄԱՅԱԿԻ ՓԱՇԻՆՅԱՆ

Կյանքի 89-րդ տարում իր մահկանացուն կնքեց բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ Սեղա Հմայակի Փաշինյանը, ով ավելի քան կես դար աշխատել է առաջին հիվանդանոցում: Իսկ ավելի մանրամասն՝ անընդմեջ մեծ նվիրումով աշխատել և դասավանդել է Երևանի բժշկական ինստիտուտի ներքին հիվանդությունների թիվ 1 ամբիոնում:

Ս. Փաշինյանը ծնվել է Կիրովական (Վանաձոր) քաղաքում, 1926 թվականին, ծառայողի ընտանիքում: Միջնակարգ դպրոցը գերազանցությամբ ավարտելուց հետո նա մեկնում է Երևան: Սեղայի բարությունը, բնածին գթառատությունը, ուրիշի ցավը զգալու ունակությունը նրան բերում են բժշկական ինստիտուտ: Հայրենական պատերազմի դաժան տարիներին մեծ դժվարություններ և զրկանքներ կրելով՝ նա 1948-ին հաջողությամբ ավարտում է բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը և աշխատանքի է ուղեգրվում իր ծննդավայրը: Երկու տարի աշխատում է Կիրովական քաղաքի պոլիկլինիկայում և կայանում է որպես բանիմաց բժիշկ-թերապևտ: Աշխատանքային առաջին տարիներին դրսևորվեցին ընտրած մասնագիտության նկատմամբ ունեցած մեծ սերը, բնատուր հոգատարությունը և գթասրտությունը, անմնացորդ նվիրումը հիվանդներին բուժելու և կարեկցելու գործին: Սեղան այդ տարիներին ընտրվում է Կիրովականի առողջապահության բաժնի կոմերիտական կազմակերպության առաջին քարտուղար, ՀԼԿԵՄ համագումարի պատգամավոր: Հասարակական ակտիվ աշխատանքը գուցե և գայթակղիչ էր, բայց իրենը չէր: Նա նախընտրում է կայանալ բժշկության և բժշկագիտության ասպարեզում: Իր հետագա մասնագիտական գործունեությունը 1950-56թթ. շարունակում է Երևան քաղաքի թիվ 1 կլինիկական հիվանդանոցում որպես՝ բժիշկ-լաբորանտ՝ վերապատրաստվելով ՀՀ ԱՆ արյան փոխներարկման ԳՀԻ-ում և Ռուսաստանի ԲԳԱ արյունաբանության և արյան փոխներարկման գիտական կենտրոնում: 1956-ին Սեղա Փաշինյանը մրցույթով ընդունվում է աշխատանքի ԵՊԲԻ հոսպիտալային թերա-

պիայի ամբիոնում (ներկայիս թիվ 1 ներքին հիվանդությունների ամբիոն), որպես ասիստենտ, 1980-2004թթ. ամբիոնի դոցենտ և պատասխանատվության մեծ զգացումով կատարում էր իր վրա դրված բժիշկ-մանկավարժի պարտականությունները: Նրան, որպես դասախոսի, կարելի է բնութագրել մի կողմից խստապահանջ՝ իր և ուսանողների նկատմամբ, մյուս կողմից անսահման բարի, ով իր մեծ փորձն ու գիտելիքները սիրով փոխանցում էր երիտասարդ մասնագետներին: Նրա դասախոսությունների շարքը, որը կարդացվում էր բարձր կուրսեցիներին, նվիրված էր բժշկագիտության բարդ, շատ հետաքրքիր բաժիններին, ինչպիսիք են արյան համակարգի, շարակցական հյուսվածքի համակարգային, մասնագիտական հիվանդությունները, պարբերական հիվանդությունը, դասախոսությունները կազմված էին բուժանդակալի՝ օգտագործելով հայրենական և արտասահմանյան բժշկագիտության ուսումնասիրությունների նորագույն տվյալները, ինչը մեծ հետաքրքրություն էր առաջացնում ուսանողության շրջանում: Սեղա Փաշինյանը իր ուրույն ավանդ է ունեցել հայրենական բժշկագիտության զարգացման մեջ: Նա 1970-ին փայլուն պաշտպանել է թեկնածուական թեզը՝ նվիրված այդ տարիներին մեծ տարածում ունեցող լյամբլիոզ հիվանդությանը: Հետագայում հետազոտական ոլորտ է ընտրում պարբերական հիվանդության պատճառագիտությունը, բուժման խնդիրներին վերաբերող գիտական հետազոտությունները:

Ս. Փաշինյանը պրոֆեսոր Արտեմ Այվազյանի հետ մեկտեղ Երևանի թիվ 1 կլինիկական հիվանդանոցում հիմնադրել և շուրջ 20 տարի ղեկավարել պարբերական հիվանդությամբ հիվանդների դիսպանսերային հսկողության կենտրոնը: Կենտրոնում հաշվառված հազարից ավելի հիվանդների մոտ իրականացրել է մեծածավալ հետազոտություններ այդ հիվանդության բուժման տարբեր եղանակների գնահատման, կոլխիցինային բուժման արդյունավետության ակտաբանական հիմքերի բացահայտման ուղղությամբ, որոնց



արդյունքները տպագրվել են բազմաթիվ հոդվածների տեսքով տարբեր պարբերականներում:

Սեղա Փաշինյանը ռացիոնալիզատորական առաջարկի հեղինակ է, որը վերաբերում է արյան շիճուկի միկրոֆիլտրատի օգտագործման արդյունավետությանը պարբերական հիվանդության բուժման համալիրում:

Ս. Փաշինյանը մեծ սեր և հարգանք էր վայելում համալսարանի աշխատակիցների, ուսանողության և բժիշկ-գործընկերների շրջանում: Նրա երկարամյա գիտամանկավարժական աշխատանքը բժշկական համալսարանում բարձր է գնահատվել համալսարանի ղեկավարության կողմից: Նա պարգևատրվել է բազմաթիվ շնորհակալագրերով և պատվոգրերով: Բժշկագիտության մեջ ներդրած գիտական, մանկավարժական և հանրային գործունեության համար Սեղա Փաշինյանը 2000-ին պարգևատրվել է բժշկական համալսարանի հորեյանական «Ոսկե մեդալով»: Անգամ պատվավոր հանգստի անցնելուց հետո էլ նա գնահատված էր մնում մայր-համալսարանի կողմից:

Բժշկական հասարակության, Սեղա Փաշինյանի սաների և հազարավոր ապաքինված հիվանդների հիշողության մեջ միշտ վառ կմնա փայլուն բժշկի, բարձրակարգ դասախոսի, գիտնականի և պարզապես լավ մարդու հիշատակը:

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՅՈՒՇԵՐԻՑ

Խոնարհունով են հիշում 1964-70 ուսումնական տարիներին ինձ դասավանդած պրոֆեսորներին, դոցենտներին, ասիստենտներին: Նրանցից ամեն մեկը իր ավանդն է ներդրել իմ կրթության, հոգեկերտվածքի ձևավորման ու բժիշկ-տեսաբանիս կայացման հարցում: Սակայն, ինչպես գիշերային պարզ երկնքում աստղերն են տարբերվում իրենց պայծառությամբ ու լույսով, այնպես էլ իմ դասախոսներն իրենց մտավոր լույսով, հետազոտական պրպտող մտքով ու գիտակրթական հմտություններով շատ տարբեր էին:

Նրանց մի մասը դասավանդմանը մոտենում էր որպես ամենօրյա աշխատանքային պարտականության, ուստի ուսանողության հիշողության մեջ հետագիծ չէին թողնում:

Այսօր, տարիների հեռվից իմ հիշողության մեջ որպես կենդանի կերպարներ հառնում են նրանք, ովքեր իրենց մարդկային տեսակով, կերպարով, մասնագիտական, ստեղծագործական նվիրումով ոչ միայն բժշկագիտություն էին ուսուցանում, այլև՝ իրենց օրինակով աշխատանքին նվիրվելու, հիվանդին ու նրա հարազատներին հոգեբանորեն հասկանալու, հիվանդության ախտաձևագումն ու ախտազարգացումը վերլուծելու, կանխատեսելու և բուժելու, գործընկերների հետ գործակցելու, շրջապատին անձնական օրինակով մարդու և հայի կենդանի օրինակ ծառայելու ունակություններ էին պատվաստում:

Այլ խոսքով ասած՝ ոչ միայն կրթում էին, այլև՝ դաստիարակում, բառիս ամենալայն իմաստով:

Հիշում են՝ ընդամենը երկու ամսվա ասպիրանտ էի կենսաբանության ամբիոնում, երբ իր մոտ կանչեց ամբիոնի վարիչ երջանկահիշատակ Յարություն (Արտյոմ) Կարապետյանն ու հանձնարարեց հաջորդ օրվանից վարել բուժական ֆակուլտետի գեներալկայի բաժնի դասախոսությունները: Ծիշտ է՝ ես ավարտել էի նաև հեռակա մանկավարժական ինստիտուտ, սակայն դպրոցական մանկա-

վարժությունը և դասավանդման մեթոդիկան մի բան է, բուհական դասախոսությունը, երբ լսարանում նստած են 160-180 ուսանողներ՝ բոլորովին այլ բան:

Ինչևէ՝ ես մտնում եմ այդ տարիների ամենամեծ՝ 7-րդ լսարանը, և մանկավարժական տեսական գիտելիքների փոխարեն ինձ օգնության են հասնում իմ դասախոսների՝ ակադեմիկոս Յ.Խ. Բունիաթյանի և պրոֆեսոր Է. Մխեյանի, մասնավորապես՝ դոցենտ Տատյանա Ստեփանյանի իրավիճակային կերպարները:

Ի դեպ՝ վերջինս սովորեցնում և պահանջում էր մտածել, տրամաբանական վերլուծության ենթարկել նյութը, բացահայտել տարբեր գործառույթների փոխադասման ավորվածությունը: Մենք, ըստ էության, դեռևս 1965-66 ուստարիներին սովորեցինք իրավիճակային խնդիրների և թեստերի առաջադրումը և լուծումը, որն այսօր տարբեր եզրույթների օգտագործմամբ մեզ հրամցվում է որպես եվրոպական կրթական համակարգի նորագույն պահանջ ...

Կլինիկական առարկաների ուսուցման մեր գլխավոր բազաներից մեկը առաջին կլինիկական հիվանդանոցն էր, որտեղ վիրաբուժական բաժանումընթացում սկսեցինք ուսումնասիրել ընդհանուր վիրաբուժություն, որի ամբիոնի վարիչն էր գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ս. Ս. Շարիմանյանը:

... Այդ տարիներին նա 69 տարեկան էր՝ ամբիոնի վարիչի 27 տարվա ստաժով: Նիհար էր, ցածր ու բարակ ձայնով նրա առաջին դասախոսությունը անատոմիկումի առաջին լսարանում առանց միկրոֆոնի ոչ միայն լսելի չէր, այլև տպավորիչ չէր, ժտոր կար լսարանում: Սակայն, երբ կլինիկայում ներկայացանք գործնական պարապմունքի, մասնակցեցինք նրա վարած համայցերին, գրադարանից ստացանք նրա հեղինակած «Ընդհանուր վիրաբուժություն» դասագիրքը, մեր նախնական կարծիքը փոխվեց, ինչպես ասում են՝ 180 աստիճանով: Կլինիկայում նա դրության տերն էր,

հիվանդի շահերը նրա համար առաջին պլանում էին: Վայ այն բժշկին կամ դոցենտին, ով համայցի ժամանակ ծիշտ և հիմնավորված չներկայացներ անամեզը կամ վիրահատության ժամանակ զգոն չէր:

Հիշում եմ մի դեպք. Ամասիայից բաժանմունք էր ընդունվել մի երիտասարդ կին՝ ախտորոշման ճշտման և բուժման ուղեգրով: Հիվանդին ներկայացնելիս պալատի բժիշկը որոշ փաստարկներ նշելուց հետո տվեց իր եզրակացությունը՝ հնարավոր է, որ հիվանդի մոտ առկա է հղիություն:

- Իսկ ի՞նչ հետազոտություն եք կատարել՝ հաստատելու կամ ժխտելու ձեր կարծիքը:

- Առայժմ ոչ մի, դեռ չեն հասցրել:

- Մի՞թե 4 օրը քիչ էր՝ մտածելու և հետազոտելու համար: Հիվանդը ձեր հարազատը լինե՞ր՝ այդպես կվարվե՞իք: Գոնե Կացոնի ռեակցիան դրե՞լ եք:

Շփոթված բժիշկը գուցե առանց մտածելու՝ հարց տվեց՝ իսկ ինչու՞ Կացոնի ռեակցիան...

Հաջորդ օրն իմացանք, որ այդ բժիշկն ազատվել է աշխատանքից: Ի դեպ՝ այդ կնոջ որովայնում էխինակոկի մեծ բուշտ էր եղել:

Կլինիկայում նրան տեսնելու առաջին օրվանից ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ս.Ս.Շարիմանյանը մեզ համար դարձավ իսկական բժշկի կերպար, որը «այրվում էր մոմի նման՝ հիվանդներին լույս տալու համար»: Կյանքում անվանի մասնագետը չափազանց սկզբունքային էր, ազնիվ ու շիտակ մտավորականի կերպար:

Նրա անձի նկատմամբ բարեհոգի սիրո դրսևորումներ էին այն սրամիտ պատմությունները, անեկդոտիկ սրամտությունները, որոնք կավայում էին նրա անձի հետ և տարիներ շարունակ փոխանցվում կուրսից կուրս: Հիշենք թեկուզ կետգուտի ստերիլիզացիայի, ֆուտբոլային շատ անմիջական երկրպագուի հետ նրա բուռն գնահատականին համակարծիք լինելու արձագանքը, ավտոտեսուչին ներկայանալու նրա «մի քիչ էլ ես եմ

պրոֆեսոր»՝ թևավոր խոսքի վերածված արտահայտությունը և այլն, և այլն ...

1968 թվականին՝ 4-րդ կուրսում ֆակուլտետային թերապիա էր դասավանդում ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, խորհրդային տարիների ամենահեղինակավոր շքանշանների՝ Լենինի և Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանակիր Տիգրան Մնացականովը: Այն ժամանակ նա 68 տարեկան էր, փոքր ինչ վատառողջ, լսարան էր մտնում դանդաղ, մանրիկ քայլերով: Քանի որ 41 տարեկանում էր Ուզբեկստանից տեղափոխվել Հայաստան, մեր հոգեկերտվածքին այնքան էլ ծանոթ չէր: Երբեք չէր հուզվում, զայրանում, երբ ուսանողները ուշադիր չէին լինում դասախոսության ժամանակ: Ամեն ինչից երևում էր, որ նրանում գերիշխողը ավելի շատ գիտնականն է, քան դասախոսը: Սակայն հիվանդի նկատմամբ նրա ցուցաբերած ուշադրությունը, ախտանիշանային կամ համախտանիշային վերլուծությունը և էփոպաթոզենետիկ բուժումների նշանակումն ու հիմնավորումը մեզ համար եղան չափազանց ուսանելի:

Իր արտիստիկ կեցվածքով, խնամվածությամբ, սեփական անձի ինտելեկտուալ և սոցիալական միջայի ինքնազնահատման ու արժևորման իմաստով պրոֆեսոր Մնացականովի հակապատկերն էր հոսպիտալ թերապիայի ամբիոնի վարիչ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Արսեն Տիգրանի Սիմոնյանը, ով լսարան էր մտնում առինքնող մշտական ժպիտը դեմքին, երիտասարդական առույգությամբ և հնչեղ ձայնով սկսում դասախոսությունը: Ուսանողները համակ ուշադրությամբ լսում էին նրան, գրառումներ կատարում: Նրա միտքը պայծառ էր, տեղեկատվությունը՝ համապարփակ, տրամաբանությունը՝ ճկուն: Մենք նրան ընկալում էինք որպես բժշկագիտության քայլող հանրագիտարան:

Նրա վարած դասախոսությունները և գործնական պարապմունքները ուղեկցվում էին ոչ միայն պրոպեդևտիկայի, ֆակուլտետային թերապիայի, այլև՝ ֆիզիոլոգիայի,

ախտաֆիզիոլոգիայի, կենսաքիմիայի, ֆարմակոլոգիայի և ախտաբանական անատոմիայի տրամաբանական փոխկապակցվածության վերլուծությամբ և ստեղծագործական ընդհանրացումներով: Դեռևս այդ տարիներին նա մեզ համոզում էր, որ պետք է բուժել ոչ թե հիվանդությունը, այլ՝ հիվանդին:

«Բժշկի մասնագիտությունը պահանջում է շարունակական ինքնակրթություն»։ նրա պահանջը այսօր դարձել է գործողության պահանջվող ծրագիր:

1969 թվականի ապրիլին հոսպիտալ վիրաբուժության ամբիոնի վարիչ, ԽՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆեսոր Իվան Քրիստափորի Գևորգյանի նախաձեռնությամբ կազմակերպվեց համալիր դասախոսություն՝ «խոցային հիվանդություն» թեմայով: Դասախոսությանը՝ ըստ մասնագիտությունների մասնակցում էին Ի.Ք.Գևորգյանը, որպես ախտաբան՝ պրոֆեսոր Արտաշես Հայկի Բեգլարյանը, թերապևտիկ մասը ներկայացրեց պրոֆեսոր Ա.Տ.Սիմոնյանը: Տեսնել ու լսել էր պետք, թե բանավիճային ինչ մթնոլորտում էր քննարկվում մեր տաղանդաշատ եռյակի կողմից խոցային հիվանդության ախտազարգացումը, դրսևորումները, բուժման ու կանխարգելման հարցերը: Ուսանողներն այնպես էին տպավորված, որ երկար ժամանակ դեռևս քննարկում և պահանջում էին այլ ամբիոններում ևս նման դասախոսություններ անցկաց-

նել: Մի բան, որն այսօր բոլորովին մոռացության է տրվել:

Օտոռինոլարինգոլոգիայի մասնագիտական գիտելիքների ու հմտությունների ձևավորման ակունքներում էր կանգնած ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Կիմ Հայկի Շուքուրյանը, ով, լինելով արտաքուստ զուսպ ու խստապահանջ, օժտված էր մարդկային և մասնագիտական անուրանալի հատկանիշերով, բարձր արիստոկրատիկ անհատականությամբ, իր առարկայի նկատմամբ սեր ու նվիրում պատվաստելու, բժշկական դեռնթոլոգիայի պահանջները մշտապես հարգելու հատկանիշեր: Օրերից մի օր պրոֆեսոր Կ. Շուքուրյանը և դոցենտ Իլյա Բաբկենի Ազիզյանը հիվանդներ էին ընդունում հեռավոր շրջանից: Դոցենտ Ազիզյանի վրա ոչիլ նկատած ուսանողներս սկսեցինք փոթևոցով ծիծաղել: Շուքուրյանը հանգիստ սաստեց մեզ՝ ցածրաձայն կատակելով՝ «Այդպես էլ է պատահում, բժիշկը երբեմն նաև նման նվեր է ստանում իր հիվանդներից...»:

Պրոֆեսոր Շուքուրյանը օժտված էր նաև կազմակերպչական մեծ ունակություններով, անզիջում սկզբունքայնությամբ, որի ապացույցը եղավ Աջափնյակուն ԼՕՌ կենտրոնի հիմնադրումը:

Անկեղծ ասած՝ շատ դժվար է ընդհատել հիշողություններս, քանի որ դրանք չափազանց շատ են և հիշարժան, սակայն սահմանափակ է նաև հողվածի ընձեռած հնարավորությունը:

Բուժական ֆակուլտետի 4-րդ կուրսեցիները ակադեմիկոս Լ. Ա. Հովհաննիսյանի, պրոֆեսորներ Գ.Հ. Բաղալյանի, Ֆ.Ս. Դրամփյանի և դոցենտ Ս. Գրիգորյանի հետ: Լուսանկարը խմբագրությանն է տրամադրել պրոֆեսոր Ա. Ա. Ենգիբարյանը (նկարում՝ աջից 5-րդը):





ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՌԱՋԻՆ ՅԻՎԱՆԴԱՆՈՑԸ ԴԱՐՁԱՎ ՅԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱ

*Այս մասին են «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻ» ստորև
ներկայացվող հրապարակումները*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՒՅՆ ՀԱՐՑԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՐՐՈՐԴ ՈՐՈՇՈՒՄԸ...

Ուրախալի լուրի առիթով շնորհավորում ենք բոլորին

«ԱՊԱԳԱ ԲԺՇԿ», 2002 ԹՎԱԿԱՆ, ԹՈՂԱՐԿՈՒՄ N 6

Հայտնի է, որ աշխարհի լավագույն հիվանդանոցները, բուժական կենտրոնները համալսարանական կլինիկաներն են, թեկուզ այն պարզ պատճառաբանությամբ, որ կլինիկաներում միաժամանակ բուժմամբ և բժշկագիտությամբ զբաղվող կլինիցիստ դասախոսները ամենաբարձր որակավորում ունեցող բժիշկներն են համարվում: Այսպես է ողջ քաղաքակիրթ աշխարհում, ահա ինչու՝ բժշկական բոլոր ԲՈՒՀ-երն ու ֆակուլտետներն ունեն իրենց կլինիկաները:

Այս գիտակցությամբ, 1995 թվականի մարտի 15-ի թիվ 140 որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, Երևանի Մ. Զեքացու անվան պետական բժշկական համալսարանում ուսումնական գործընթացի և հետդիպլոմային ուսուցման լավագույնս կազմակերպման նպատակով, համալսարանի հարևանությամբ գտնվող բուժհիմնարկների համալիրը՝ Երևանի առաջին կլինիկական հիվանդանոցը, առաջին մանկական կլինիկական հիվանդանոցը, երկրորդ ծննդատունը, աչքի մանկական կլինիկական Երևանի քաղտորհրդի գործկոմի ենթակայությունից հանձնեց Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ենթակայությանը, պահանջելով, ինչպես նաև առողջապահության նախարարության ենթակայության հատուկ պոլիկլինիկական, ընտանիքի, ամուսնության և սեքսուաթուրոգիայի հանրապետական կենտրոնը, որպես կլինիկական բազաներ, հանձնել Մ. Զեքացու անվան պետական բժշկական համալսարանի ենթակայությանը: Նույն որոշմամբ պահանջվում էր նշված հիմնարկների գույքի և շենքերի՝ սահմանված կարգով հաշվեկշիռ-հաշվեկշիռ հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել մեկամսյա ժամկետում: Սակայն սեփականաշնորհման թոհուբոհից չէր կարող վրիպել այնպիսի պատառ, ինչպիսիք հիշյալ բազաներն էին: Սեփականաշնորհման ալիքը բախվեց քաղաքակիրթ աշխարհում ընդունված ձևին և... խորտակեց այն:

2001 թվականի օգոստոսի 6-ի թիվ 703 որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարությունն այդ կլինիկաները հանեց համալսարանի ենթակայությունից և հանձնեց քաղաքապետարանի ենթակայությանը՝ այստեղից բխող իր բոլոր հնարավոր հետևանքներով:

Եվ սկսվեց համալսարանի ռեկտորի՝ Վ. Պ. Հակոբյանի տառապալից, երկարատև, բայց և վերջնական հաղթանակի հավատով համակված խնդրանքների, բացատրությունների շրջանը:

Ընդունելություններ հանրապետության կառավարության և պետական ամենաբարձր պաշտոնյաների մոտ, միջազգային փորձի մանրամասնում նրանց համար: Հաշվի առնելով ամենաբարձր ատյաններից ստացվող մերժողական պատասխանները՝ թվում էր՝ այլևս որևէ շտկում հնարավոր չէ:

Սակայն պարզվեց, որ հարցի լուծումը հնարավոր է միայն հանրապետության նախագահի միջամտությամբ: Համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Վիլեն Պարույրի Հակոբյանի և հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի, ինչպես ընդունված է ասել՝ tete a tete հանդիպման ժամանակ կայացած տևական զրույցի արդյունքում կայացվեց որոշում, որը հույս տվեց հավատալու, որ սեփականաշնորհման խորտակիչ թափին հանրապետությունում դիմակայող ուժ կա:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 23-ի թիվ 425 որոշմամբ Երևանի Մխիթար Զեքացու անվան պետական բժշկական համալսարանը վերակազմավորվեց պետական ոչ առևտրային կազմակերպության, նրա կառավարումը վերապահվեց ՀՀ կրթության և գիտության նախարարությանը, համալսարանի գործունեության առարկան և նպատակը համարվեց կրթական, գիտական, բուժական, կանխարգելիչ, փորձագիտական, խորհրդատվական, ուսումնագիտատարտադրական, հրատարակչական գործունեության իրականացումը և, իր իսկ՝ 2001 թվականի օգոստոսի 6-ի թիվ 703 որոշման մեջ կատարելով լրացումներ ու փոփոխություններ, կարգադրեց մինչև 2002 թվականի հունիսի 1-ը «Համալսարանական առաջին կլինիկական հիվանդանոց» և «Համալսարանական առաջին մանկական հիվանդանոց» դուստր ձեռնարկությունների պարտավորությունները փոխանցել, պահանջները զիջել, գույքը՝ բացառությամբ շենքերի, շինությունների, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի տասնհազարապատիկից ավելի արժողությամբ գույքի, հանձնել «Երևանի Մխիթար Զեքացու անվան պետական բժշկական համալսարան» ոչ առևտրային կազմակերպությանը՝ սեփականության իրավունքով, իսկ շենքերը, շինությունները, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի տասնհազարապատիկից ավելի արժողությամբ գույքը՝ անհատույց օգտագործման իրավունքով:

Այս առիթով է մեր շնորհավորանքը բոլորին և բոլորիս, քանի որ հարցը վերաբերում է միջազգային շրջանակներում մեր ԲՈՒՀ-ի վարկանիշին:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՆԵՐՈՒՄ

«ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ», 2002 ԹՎԱԿԱՆ, ԹՈՂԱՐԿՈՒՄ N 3

Բնականաբար, բժշկական կրթության առաջընթացը կարող է ապահովվել միայն ԲՈւՅ-ի սեփական կլինիկայի գոյությամբ, որին մեր համալսարանի ղեկավարությունը հասավ տրեմաջան և հետևողական աշխատանքի արդյունքում: 2002 թվականի ամռանը ՀՀ կառավարությունը մեր համալսարանին հանձնեց թիվ մեկ կլինիկան: Արդեն երկու տարի է՝ այս հաստատությունը մեր ԲՈւՅ-ի ենթակայության տակ է, որը, կարելի է ասել, արդեն որոշակի ժամանակահատված է, որպեսզի կարողանանք ի մի բերել մեր համալսարանական կլինիկայում առկա խնդիրներն ու ձեռքբերումները: Դրանք ավելի տեսանելի են ֆինանսական տեսանկյունից, ուստի ձեզ ենք ներկայացնում կլինիկաների գծով գլխավոր հաշվապահի տեղակալ Ռուզաննա Մկրտչյանի հետ հարցազրույցը:

- Ի՞նչ կարող եք ասել՝ կլինիկաները աշխատում են օգուտով, թե՞ վնասով:

- Իմ կարծիքով դեռ վաղ է վնաս-օգուտից խոսելը: Սակայն կցանկանայի նշել, որ համալսարանի ղեկավարության հետևողական աշխատանքի շնորհիվ արդեն գրանցվել է բավականին առաջընթաց, այն է՝ կլինիկաների համախառն եկամուտը (թե համեմատելու լինենք 2002, 2003 թվականների արդյունքները) աճել է 42%-ով, որից վճարովի բուժասարկման գծով՝ 46%-ով, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության գծով՝ 38%-ով: Ավելացել է նաև համալսարանական կլինիկաներում բուժված հիվանդների ընդհանուր թիվը: Վճարովի ստացիոնար հիվանդների մասով՝ 18%-ով, ամբուլատոր հիվանդներ՝ 35%, պետական պատվեր՝ 5%:

- Հայտնի է, որ պետությունն այդ կլինիկաների աշխատակիցներին ունի տարիներ շարունակ չվճարված աշխատավարձերի պարտք: Ի՞նչ քայլեր են արվել այս ուղղությամբ, այն է՝ մեր ԲՈւՅ-ը պատրաստ է տարիներ շարունակ պետության չվճարված աշխատավարձերը մարել:

- Պետք է ասել, որ այս մեկ ու կես տարվա ընթացքում համալսարանը վճարել է կլինիկաների աշխատակիցների նախորդ տարիներին պետության չվճարած աշխատավարձերի 70%-ը, որն արդեն մեծ ձեռքբե-

րում է: Իսկ ընթակա աշխատավարձերը վճարվում են ամեն ամիս կանոնավոր, դեռ մի բան էլ ավելին, վճարովի բժշկական սպասարկման գումարներից վճարվում է նաև հավելավճար:

- Կլինիկաները համալսարանին են հանձնվել կիսաքանդ վիճակում, ի՞նչ աշխատանքներ են կատարվել այս ժամանակահատվածում դրանց վերանորոգման ուղղությամբ:

- Բուլոբիս հայտնի է, որ կլինիկաները համալսարանին հանձնվեցին, մեղմ ասած, անմխիթար վիճակում: Վերոհիշյալ ժամանակահատվածում կատարվել են վերանորոգման բավականին մեծ աշխատանքներ, այս գործընթացը շարունակվում է: Ամենավառ ապացույցն օրերս համալսարանական թիվ մեկ կլինիկական հիվանդանոցում ստեղծված «Ներքին հիվանդությունների պրոպեդևտիկայի և սրտաբանության» նորաբաց ամբիոնն է՝ իր բավականին հզոր նորացված սարքավորումներով:

- Ինչպիսի՞ն է համալսարանի վերաբերմունքը կլինիկայի կադրերի հարցում:

- Չնայած մեծ քանակությամբ աշխատակիցներ այս մեկ ու կես տարվա ընթացքում տեղափոխվել են այլ աշխատանքի, սակայն դեռևս կա աշխատակիցների պակասեցման խնդիր այն պարզ պատճառով, որ չափազանց ուռճացված էր կադրային բազան: Հասկանալի պատճառներով այս գործընթացը շատ նուրբ մոտեցումներ է պահանջում, ուստի դեռ հսկայական անելիքներ կան:

- Ինչպիսի՞ն են մեր կլինիկաների արտասահմանյան կապերը:

- Դրանք շատ զովելի հարթության վրա են գտնվում: Գիտենք, որ մեր կլինիկաներից շատերի կուլեկտիվներն իրենց արտասահմանցի գործընկերների հետ լավ փոխհարաբերություններ են պահպանում: Շատ ցանկալի է, որ դրանք էլ ավելի ամրապնդվեն ու ընդլայնվեն:

- Ի՞նչ հեռանկարներ և խնդիրներ կան:

- Անհրաժեշտ է մեր կլինիկաները համալրել արդիական սարքավորումներով, իսկ ամենահեռանկարային հարցն այսօր նորագույն սարքավորումներով վերազինված հզոր ախտորոշիչ կենտրոն ունենալն է:



Ի-յա ԿԼՈՒՆԻՉԵՍԿԱՅԱ ԲՕԼՆԻՑԱ Դ. ԵՐԵՎԱՆ

Լուսանկարը թող տարակուսանքի տեղիք չտա, քանի որ մի ժամանակ առաջին հիվանդանոցի բակում կանգնած էր Վ. Ի. Լենինի արձանը:



Հաջողություններ, հոգսեր, անելիքներ...

«ԱՊԱԳԱ ԲԺՇԿ», 2003 ԹՎԱԿԱՆ, ԹՈՂԱՐԿՈՒՄ N 13/14

Արդեն մեկ տարի է, ինչ համալսարանի կազմում գործում են համալսարանական կլինիկաներ: Ինչ խոսք, մենք դեռ շատ անելիքներ ունենք՝ վերջիններս միջազգային չափանիշերին հասցնելու ուղղությամբ, բայց և արդեն իսկ կարող ենք արձանագրել շոշափելի հաջողություններ: Քայլ առ քայլ վերանայվում է համալսարանական կլինիկաների վերամասնագիտացման հնարավորությունը՝ նպատակ ունենալով մի կողմից պահպանել ողջ մահճակալային ֆոնդը, մյուս կողմից՝ հրաժարվել ֆինանսական տեսակետից ոչ օգտակար և ուսումնական գործընթացի համար ոչ կարևոր բաժանմունքներից:

Կազմակերպական-ֆինանսական աշխատանքներում դեռևս կան որոշակի թերություններ. ճիշտ է, մուծումները կրկնապատկվել են, սակայն դեռ հեռու են իրական գումարից:

Գլխավոր բժիշկները երբեմն անտարբեր են կլինիկաների աշխատանքները խթանելու ուղղությամբ. այնպիսի տպավորություն է, որ նրանք ունեն իրավունքներ, բայց չունեն պարտականություններ, աշխատանքներ չեն տարվում կոլեկտիվ պայմանագրերի կնքման ուղղությամբ:

Բացի 1-2 դեպքից, կլինիկայի աշխատակիցների կողմից չի ցուցաբերվել որևէ նախաձեռնություն՝ դրսից օգնություն բերելու ուղղությամբ:

Մենք նպատակ ունենք ձեռք բերելու նոր կլինիկա. դժվարություններ, իհարկե, կան, բայց պիտի հասնենք դրան, քանզի դա մեր վաղվա օրն է:

Մենք արդեն մի շատ կարևոր փոփոխություն կատարեցինք, այն է՝ նույնացվեցին կլինիկայի ղեկավարը և բաժնի վարիչը: Արդեն ոչ թե հասարակական կարգով, այլ համապատասխան դրույքաչափերով կլինիկաների ղեկավարներ են նշանակված համալսարանի պրոֆեսորադասախոսական և կլինիկաների անձնակազմից ընտրված առաջատար մասնագետները: Կլինիկաների ղեկավարներին պետք է տալ մեծ արտոնություններ՝ իրենց կլինիկաներում բարձր մակարդակով ապահովել-

լու բուժական, ուսումնական և գիտական աշխատանքների ներդաշնակ կազմակերպումը:

Շտկման կարիք ունի անվճար կոնսուլտացիաների կազմակերպումը:

Յետևողականորեն աշխատանքներ են տարվել՝ վերակառուցելու և վերանորոգելու համալսարանական կլինիկաները և բաժանմունքները: Վերջին մեկ տարում երևան քաղաքի և ոչ մի հիվանդանոցում այդքան ներդրում չի կատարվել, որքան մենք ծախսել ենք մեր կլինիկայում՝ միայն շինվերանորոգման աշխատանքների վրա. այն կազմել է 160 մլն դրամ: Ուղիներ ենք որոնում՝ վերջիններս համալրելու ժամանակակից բժշկական տեխնիկական և ուսումնական միջոցներով:

Շուտով իր աշխատանքները կսկսի համալսարանական պոլիկլինիկան:

Ավարտված են գիտաախտորոշիչ և սիրտանոթային հիվանդությունների ինվազիվ (էնդովասկուլյար) բուժման կենտրոնի աշխատանքները, որի համար Հունաստանի «Օնասիս» հիմնադրամից ստացել ենք 3 մլն դոլարի արժողության բուժիչ և ախտորոշիչ սարքավորումներ (անգիոգրաֆ, անեսթեզիոլոգիական սարքավորում, էլեկտրասրտագրեր, էխոկարդիոգրաֆ, լաբորատոր անալիզատորներ, տրեդմիլ, շտապօգնության մեքենաներ և այլն), առաջիկայում ակնկալում ենք ևս այդքան ստանալ: Համալսարանն իր հերթին վերանորոգման աշխատանքների համար ծախսել է 90 մլն դրամ և 3200 EU (արճճային ապակու համար): Բացի դրանից՝ ֆոնդն ապահովել է բոլոր սարքավորումների տեղադրման ինժեներական ծախսերի վճարումը: Այն լայն հեռանկարներ է խոստանում և մեզ հնարավորություն կտա իրականացնել սիրտանոթային հիվանդությունների (սրտի և բոլոր օրգան համակարգերի անոթների) ախտորոշում և էնդովասկուլյար վիրահատում:

Մտացել ենք նաև 300.000 EU արժողության ստոմատոլոգիական գործիքներ և ռենտգեն սարքավորումներ:



Բժշկական համալսարանի վարչական մասնաշենքի և անատոմիկումի ճեմասրահները

ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՅԱՆՔՈՒՄ

4-րդ մանկական բժշկական կենտրոնը
տրվել է մեզ

«ԱՊԱԳԱ ԲԺՇԿ», 2003 ԹՎԱԿԱՆ, ԹՈՂԱՐԿՈՒՄ N 17

Սա անչափ մեծ նվաճում է, անսահման դժվարությամբ լուծված հարց, որի ուղղությամբ հետևողական և երկարատև աշխատանք է տարվել: Մեծ է եղել խոչընդոտել ցանկացողների թիվը:

Բայց ռեկտորի ջանադիր գործունեության, ՀՀ պաշտպանության նախարարության գործուն միջամտության արդյունքում, հիմնական փաստարկ ընդունելով այն հանգամանքը, որ կենտրոնը տրվում է բժշկական համալսարանին՝ ռազմաբժշկական ֆակուլտետի ուսանողների ուսումնառության վիճակը բարելավելու նպատակադրմամբ, իրականացվեց մի ծրագիր, որը թույլ է տալիս նախաձեռնել հեռահար քայլեր:

«Սա նշանակում է, որ բժշկական համալսարանը փրկվում է: Բացի այդ ԾԻԳ-ը (ծրագրերի իրականացման գործակալությունը) համաշխարհային բանկի միջոցով պատրաստվում է մեզ համար պոլիկլինիկա կառուցել: Արդյունքում՝ մի քանի տարի անց ԲՈՒՀ-ը չի լինի գլխավոր բժիշկներից ոմանց գերին: Մեր ունեցածը հնարավորություն կտա բոլոր հարցերը լուծել: Բացառությամբ մի քանի ամբիոններից՝ բոլորը կարող ենք հավաքել մեր կլինիկաներում», - ավելացրեց ռեկտորը:

Ստացվել է այնպես, որ ԾԻԳ-ի գործունեությունը, որը հիմնականում պետք է նպատակաուղղված լիներ պետական հիմնարկներին օգնության ցուցաբերմանը, հիմնականում ուղղվել է մասնավոր ոլորտին: Ի պատիվ բժշկական համալսարանի ռեկտորի հաստատականության է խոսում այն փաստը, որ կարողացավ մեր պահանջը լսելի դարձնել ոչ միայն հանրապետության նախագահին, այլև՝ համաշխարհային բանկին:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԱՄԲԻՈՆԸ՝ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅՈՒՆ

«ԱՊԱԳԱ ԲԺՇԿ», 2004 ԹՎԱԿԱՆ, ԹՈՂԱՐԿՈՒՄ N 2

Քիչ է ասել, թե օրվա տրամադրությունը տոնական էր: Համալսարանական կլինիկական հիվանդանոցի նոր վերանորոգված ու տեխնիկայի վերջին խոսքով կահավորված բաժանունը էր տեղափոխվել ներքին հիվանդությունների պրոպեդևտիկայի ամբիոնը:

Մեզանում սովորություն է դարձել ուրախանալ օտարների և բարեգործների ներդրումներով: Այս դեպքում ամենից ուրախալիս այն էր, որ թե՛ վերանորոգումը, թե՛ կահավորումը կատարվել էին համալսարանական ներդրումների հաշվին: Ամենից ակնառուն այն հսկայական տարբերությունն էր, որ ամենիցապես աչքի էր զարնվում այս և հարակից այլ բաժանումների համեմատության ժամանակ: Վերջիններս նույնպես կարիք ունեն նման վերանորոգումների և կահավորման. հարց, որը ստիպում է համալսարանի ղեկավարությանը խոշոր ներդրումներ կատարել հանուն բժշկական համալսարանի վաղվա օրվա:

Բաժանմունքի բացմանը ներկա էին կրթության և գիտության նախարար Սերգո Երիցյանը, փոխնախարարներ, բարձրաստիճան պաշտոնատար անձինք, հյուրեր:

Ինչ խոսք, եթե այսպես շարունակվի, շատ շուտ կիրականանա մեր երազանքը՝ համալսարանական ամբիոնների մեծ մասը, որոնք ցրված են քաղաքի ողջ տարածքում, կհավաքվեն համալսարանական կլինիկական բազաներում:

Տա Աստված, որ շուտ գա այդ օրը:

«ՀԻՄԱ ԵՍ ՀԱՆԳԻՍՏ ԵՍ
ՄԵՐ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՄԱՐ ...»,
վերջին ռեկտորատներից մեկում
հայտարարեց համալսարանի
ռեկտոր, ակադեմիկոս
Վիլեն Պարույրի Հակոբյանը,
ուն դերը համալսարանական կլինիկաներ
ստեղծելու գործում անուրանալի է:

ՎԻԼԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ



Ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը 1960-ին: 1978-ին ստացել է բժշկական գիտությունների դոկտորի, 1980-ին՝ պրոֆեսորի, 1994-ին՝ ակադեմիկոսի կոչումներ: Անդամակցել է բժշկական գիտությունների միջազգային, Լեհաստանի բժշկական, ՌԴ բժշկատեխնիկական գիտությունների, ինֆորմատիկայի ակադեմիաներին և Ֆրանսիայի դեղաբանների միջազգային միությանը: Պարգևատրվել է Ալբերտ Շվեյցերի ոսկե, ՀՀ Մխիթար Հերացու անվան, Վերնադսկու անվան ոսկե, Դրաստամատ Կանայանի, ԼՂՀ «Մայրական երախտագիտության», ՌԴ ԲՏԳԱ ոսկե, ՀՀ ոստիկանապետի, Սպարապետ Վ. Սարգսյանի անվան, ՀՀ ՊՆ «Գարեգին Նժդեհ», ԵՊԲՀ ոսկե, ՀՀ ՊՆ Մարշալ Բաղրամյանի անվան մեդալներով, Ֆ.Նանսենի անվան ոսկե, ՀՀ վարչապետի, 2 անգամ ՀՀ ԿԳՆ ոսկե հուշամեդալներով, ՀՀ նախագահի մրցանակով, ՀՀ նախագահի «Սուրբ Մեսրոպ Մաշտոց», Հայոց Կաթողիկոսի «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» և «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշաններով, ՀՀ Երևանի պատվավոր քաղաքացու, «Գիտության վաստակավոր գործչի» կոչումներով: 2000-ից ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ է, իսկ 2006-ից՝ ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: 1971-72 թթ. եղել է Երևանի պետական բժշկական համալսարանի բուժական ֆակուլտետի ղեկավար տեղակալը, 1972-79 թթ.՝ արտասահմանցի ուսանողների ղեկավար, 1979-83 թթ.՝ բուժական ֆակուլտետի ղեկավար, 1986-87 թթ.՝ ուսումնական գծով պրոռեկտոր, 1987-2006 թթ.՝ ռեկտոր: 2010-ից առ այսօր Իզմիրյան (Սուրբ Ներսես Մեծ) գիտաբժշկական կենտրոնի հոգաբարձուների խորհրդի նախագահն է, իսկ 2011-ից առ այսօր՝ ԵՊԲՀ ռեկտորի խորհրդակալը:



Հարցազրույց թիվ 1 կլինիկական հիվանդանոցի գլխավոր բժշկի հետ

ԶԳՏՈՒՄ ԵՆՔ ՊԱՅՊԱՆԵԼ ԱՌԱՋԻՆԻ ՎԱՐԿԱՆԻՇԸ



ԿԱՐԵՆ ՌՈՒԲԵՐՏԻ ՍԱՅԱԿՅԱՆ

2000-ին ավարտել է Երևանի պետական բժշկական համալսարանի բուժական գործ ֆակուլտետը: 2002-ին անցել է կլինիկական օրդինատուրա՝ առողջապահության կազմակերպիչ մասնագիտությամբ: 2002-ին աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական առողջապահական գործակալությունում՝ որպես առաջատար մասնագետ: 2004-ին աշխատել է որպես աշխատակազմի ՊԱԳ-ի վերահսկողության բաժնի առաջատար մասնագետ: 2006-ից աշխատել է աշխատակազմի ՊԱԳ-ի վերահսկողության բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ: 2008–11թթ. եղել է «Մալաթիա» բժշկական կենտրոնի ՓԲԸ տնօրենը, իսկ 2009-10թթ.՝ «Ռաֆայել» բժշկական կենտրոնի տնօրենը: 2011-ից առ այսօր ԵՊԲՀ-ի «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրի գլխավոր բժիշկն է: 2013-ից միաժամանակ աշխատում է որպես ԵՊԲՀ-ի կլինիկական աշխատանքների կազմակերպման վարչության պետ:

- Նախկինում առաջին հիվանդանոց ասելով հասկանում էինք հենց առաջին հիվանդանոցը, ներկայիս 100-ամյա կենսագրությամբ շենքը՝ նրանում տեղակայված բաժանումներով: Ներկայումս ինչպե՞ս է կոչվում հիվանդանոցը: Հիվանդանոցին պատկանող բոլոր օդակները մտնում են այդ կազմի մեջ, թե՞ դրանք առանձին միավորներ են: Դուք բոլոր միավորների գլխավոր բժիշկն եք:

- Այո, այդ բոլոր օդակները մտնում են հիվանդանոցի կազմի մեջ: Ներկայումս շենքը կոչվում է ոչ թե թիվ 1 հիվանդանոց, այլ «Հերացի» հիվանդանոցային համալիր: Տարբերությունն այն է, որ նախկինում առաջին հիվանդանոցը միայն սև շենքն էր, իսկ այժմ հանդես է գալիս որպես հիվանդանոցային համալիր: Ես այս բոլոր կլինիկաների գլխավոր բժիշկն եմ:

- Որո՞նք են այդ կլինիկաները, և ո՞ր թվականից են մտել առաջին հիվանդանոցի կազմի մեջ:

- «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրի կազմի մեջ մտնում են 20-ից ավելի կլինիկաներ և կենտրոններ: Դրանք են՝ թերապիայի (1920), վիրաբուժության (1920), ակնաբուժության (1929), ֆիզիոթերապիայի և ռեաբիլիտոլոգիայի, սպորտային բժշկության (1960), ալերգոլոգիայի և իմունոլոգիայի (1996), պլաստիկ վերականգնողական և միկրովիրաբուժության (1996), վնասվածքաբանության և օրթոպեդիայի (1997), դիմաժնոտային վիրաբուժության և ԼՕՌ (2002), սեքսապաթոլոգիայի (2005), անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի (2010), ընդհանուր և ինվազիվ սրտաբանության (2010), սրտաբանական (2004) կլինիկաները: Այդ կազմի մեջ են մտնում նաև կլինիկական ախտորոշիչ լաբորատորիան՝ (1930), «Հերացի» պոլիկլինիկան՝ (1965), դեղատունը՝ (1965), կլինիկական պաթոլոգիայի լաբորատորիան՝ (2000), ուսանողական հանրակացարանի բուժկետը՝ (2006), թիվ 1 և թիվ 3 ստոմատոլոգիական պոլիկլինիկաները՝ (2006), ռադիոլոգիայի կենտրոնը՝ (2010), անհետաձգելի բուժօգնության ծառայությունը՝

(2010), նյարդավիրաբուժության և գլխուղեղի կաթվածների բուժման մասնագիտացված կենտրոնը՝ (2010), միավորված վիրահատական բլոկը՝ (2012) և կենտրոնական համալիրի բուժկետը:

- Այսօրվա համալսարանական կլինիկայի տեխնիկական վիճակը, ինչ խոսք, համեմատության եզրեր չունի առաջին հիվանդանոցի առաջին գլխավոր բժշկի ղեկավարած օդակի վիճակի հետ: Եթե նշյալ հիվանդանոցի առաջին գլխավոր բժշկի համար մեծ ձեռքբերումներ էին մի քանի դույլի հայթայթումն ու ինքատեղով (самовар) տաքացրած ջրի ապահովումը վիրահատարանում, ապա այսօր խոսում ենք նույն կլինիկայի միջազգային կապերի ամրապնդման, նոր կապերի հաստատման, տեխնիկական վերջին նորություններով վերազինման և դարին ու ժամանակին համահունչ այնպիսի հարցերի մասին, որոնք առաջին գլխավոր բժիշկը լավ երազում անգամ տեսնել չէր կարող:

Հասկանալի է՝ 100 տարի է անցել: Դար է անցել: Այնուամենայնիվ կան համանման խնդիրներ, ինչ խոսք՝ տարբեր ընդգրկումներով:

Կա՞ն այնպիսի խնդիրներ, որ 20-ից 21-րդ դար են եկել, և ինչպե՞ս եք լուծում այդ խնդիրները:

- Հարցադրումը կարող է վերաբերել միայն մարդկային գործոնին, մարդկային հարաբերություններին: Մյուս առումով ամեն ինչ այլ հարթության վրա է:

Ավելի ճիշտ՝ պահանջները նույն են՝ տարբեր ընդգրկումներով: Եթե այն ժամանակ առաջին ռենտգեն սարքի տեղադրումը մեր հիվանդանոցում կարող էր համարվել ժամանակի համար մեծագույն ձեռքբերում, ապա այսօր խոսում ենք սարքերի ձեռքբերման և այնպիսի համակարգերի ներդրման ու տեղակայման մասին, որոնք համապատասխանում են այսօրվա պահանջներին: Դրանք այսօր են համարվում մեծ ձեռքբերումներ: Հասկանալի է, վաղը դրանց մասին մեր հետնորդները կխոսեն որպես ոչ միայն սովորական այլև բարոյապես մաշված, հնացած գիտության վերջին խոսքին չհամապատասխանող:

Սա ժամանակի հարահոս ընթացքն է և ես, և առաջին գլխավոր բժիշկը առկա հնարավորությունների սահմաններում նպատակ ենք ունեցել և ունենք առաջինը պահել առաջինի վարկով ու կոչմանը համապատասխան:

- **Հրաշալի պատասխան: Եվ, այնուամենայնիվ, ինչպե՞ս է կազմակերպվում տեխնիկական վերազինումը:**

- Այդ ամենը կազմակերպվում է բժշկական համալսարանի կողմից՝ նրա հատկացրած միջոցներով:

- **Վերջին ամսամ, երբ ես եղել եմ սև շենքում, այն գտնվում էր բավականին անմխիթար վիճակում: Հատակը արդեն փտած էր, տանիքը՝ նույնպես, առաստաղը ճաք էր տվել: Վերանորոգումը ինչպե՞ս կազմակերպվեց, որ այդ ամենը վերանա: Զե՞ որ դուք իրավունք չունեք այդ շենքը քանդելու կամ փոփոխելու:**

- Պարզապես կատարվել է կոսմետիկ վերանորոգում, անցկացրել ենք ջեռուցում: Հիմնավերանորոգման աշխատանքներ չեն կատարվել: Հիմնանորոգել ենք միայն սինուլիացիոն կենտրոնը, որի բացումը տեղի կունենա օրերս:

- **Զեր դեկավարման ընթացքում կատարվե՞լ են վերանորոգման աշխատանքներ:**

- Աշխատանքների մեծ մասը կատարվել է 2010 թվականից: Այդ ընթացքում վերանորոգվել են վիրաբուժական, դիմածոտային, վնասվածքաբանության, նյարդավիրաբուժության բաժանմունքները:

- **Մեր աչքի առջև նույն տարիքի՝ Երևանի պետական համալսարանի Աբովյանի փողոցի վրա գտնվող սև մասնաշենքը քանդվեց, պահպանվեցին միայն արտաքին պատերը և, ըստ էության, նույն արտաքինով կառուցվեց առավել ամուրը, որը կոյուստի արդեն ոչ թե մեկ, այլ մի քանի հարյուրամյակ:**

Զե՞ք մտածում նախաձեռնել և իրականացնել նման ծրագիր:

Զե՞ որ այդպիսի քայլը ոչ միայն կերկարացնի 100-ամյա շենքի կյանքը, այլև համալսարանական կլինիկայի պատմության մեջ կմտցնի նաև ձեր անունը:

- Ինչ խոսք, փառասիրությունս շոյում է նման հեռանկարը, սակայն դեռևս չեմ դիմել նման մեծ ծավալի աշխատանք կատարելու պահանջով, քանի որ այն կապված է մեծ ծախսերի հետ, սակայն եթե լինեն

հովանավորներ, այդ ամենը կարող ենք իրականացնել:

- **Այսօր կլինիկական հիվանդանոցի գլխավոր՝ 100-ամյա շենքում ի՞նչ կլինիկաներ և ամբիոններ են տեղակայված:**

- Տեղակայված են միկրովիրաբուժության, ալերգոլոգիայի, թերապիայի կլինիկաները, նաև ախտորոշիչ փոքր կենտրոնը, որտեղ տեղադրված է ռենտգեն սարքավորում: Կան նաև տարբեր կլինիկաների ամբիոններ, որոնց հատկացված են դասասենյակներ:

- **Հիվանդանոցը համալսարանական կոչվելուց հետո պացիենտների թիվը ավելացե՞լ է, թե՞ պակասել:**

- Պետք է ասեն, որ ավելացել է, քանի որ այսօրվա պայմանները, գույքը, նորագույն սարքավորումները, ի վերջո՝ առաջին հիվանդանոցի վարկանիշը նպաստում են այն հանգամանքին, որ հիվանդները մեզ շատ են դիմում: Մենք այսօր մեր ազգաբնակչությանը մատուցում ենք բարձրորակ բուժսպասարկում: Բացի դա՝ մեզ մոտ գնալին քաղաքականությունը ավելի հասանելի և մատչելի է: Այսօրվա պայմաններում սա փոքր հանգամանք չէ:

- **Ամբողջ աշխարհում համալսարանական կլինիկաները համարվում են լավագույնները, քանի որ այնտեղ աշխատում են գիտնական-բժիշկներ: Այս իմաստով մեր մասնագետները ճանաչված են հանրապետությունում:**

- Այո, ճանաչված են, քանի որ կլինիկաների համարյա բոլոր դեկավարները նաև մեր ամբիոնների վարիչներ են, գիտությունների դոկտորներ, պրոֆեսորներ, գլխավոր մասնագետներ, ովքեր առողջապահության համակարգում ճանաչված են իրենց գործունեությամբ:

- **Ուսանողների ներկայությունը հիվանդանոցում կամ նրանց հետ կապված գործընթացների ժամանակ արդյոք անհարմարություններ չի՞ առաջացնում:**

- Ոչ, չի խանգարում ընդհանրապես: Քանի որ մենք համարվում ենք համալսարանական կլինիկա, և մեզ մոտ, հասկանալի է՝ անցկացվում են նաև պարապմունքներ ուսանողների հետ, ապա դա նույնիսկ օգնում է ուսանողներին, և մեզ համար նույնիսկ հաճելի է աշխատել նրանց հետ:

- **Իսկ վիրահատությունների դեպքում:**

- Այս դեպքում ուսանողներն ունեն հնարավորություն՝ հետևելու վիրահատության ընթացքին:

Ունենք նոր 8 վիրահատարաններ, որոնք վերակառուցվել են վերջին տարիներին, որտեղ հատուկ էկրանների միջոցով ուսանողները հետևում են վիրահատությունների ընթացքին: Սա շատ հարմար է և՛ ուսանողների, և՛ բժիշկների համար:

- **Ի՞նչ ծրագրեր և մտահղացումներ ունեք՝ կապված հիվանդանոցի 100-ամյա հոբելյանի հետ:**

- Մտադրություն ունենք հիվանդանոցում տարածք հատկացնել հայ բժշկության թանգարանին՝ հաշվի առնելով համալսարանում գործող թանգարանի տարածքի չափազանց փոքր և անհարմարավետ լինելու հանգամանքը: Դա կլինի հիանալի քայլ մեր կողմից: Սակայն այս միտքը դեռևս պետք է քննարկվի:

- **Այնուամենայնիվ՝ չնչեցիք, թե ի՞նչն է այսօր մոռացված նախորդների փորձից: Ո՞րն է կլինիկայի գործունեության մեջ առկա այն լավ նախաձեռնությունը, աշխատաձևը, մոտեցումը, որ մնաց կլինիկայի պատմության տեղում և չեկավ XXI դար: Եվ, ամենագլխավորը, որի համար ափսոսում եք:**

- Անկեղծ ասած՝ շատ կուզենայի, որ այսօր ևս նախկինի նման ունենայինք կոնֆլիկտների հանձնաժողով: Այնպիսի մեծաթիվ աշխատողներ ունեցող կոլեկտիվում, ինչպիսին մերն է, չեն կարող բացառվել կոնֆլիկտները, մարդկային հարաբերություններում խնդիրների առաջանալը, դժգոհությունները միմյանցից նույն օղակում աշխատողների միջև...

Արխիվային փաստաթղթերի փնտրատուքի օրերին ձեռքս ընկավ մի տեղեկանք, հենց նման հանձնաժողովի գոյության և նրա կայացրած որոշման մասին: Ես այնքան կցանկանայի, որ ստեղծվեր նման մի օղակ, որը կազատեր ինձ մարդկանց միջև երբեմն ծագող որոշ խնդիրների լուծման վրա իմ առանց այն էլ սուղ ժամանակի անհարկի վատնումից:

- **Շնորհակալություն հարցազրույցի համար: Հուսով եմ՝ ձեր մտահղացումներն իրականություն կդառնան՝ կապված հատկապես թանգարանի տեղափոխության հետ:**



ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅԻ ՏՆՕՐԵՆ Մ. Մ. ՄԻՐԻԶԱՆՅԱՆԻ ՀԵՏ



- Իր հիմնադրման առաջին օրվանից առաջին հիվանդանոցում գործել է վիրաբուժական բաժանմունքը: Պատմական ակնարկում մանրամասնորեն ներկայացրել ենք վիրաբուժական բաժանմունքը: Այսօր դուք ղեկավարում եք ոչ միայն վիրաբուժական բաժանմունքը, այլև՝ վիրաբուժական կլինիկան: Մեր հարցազրույցի նպատակն է ներկայացնել վիրաբուժական բաժանմունքը այսօրը: Առաջին հարցը, որ կցանկանայի տալ ձեզ՝ որպես առաջին հիվանդանոցում տեղակայված համալսարանական ամբիոնների նախկին ուսանողի՝ խնդրանք է. թվարկեք մեր այն երախտավորներին կամ նրանց աշակերտներին, ովքեր աշխատել են առաջին հիվանդանոցում և ձեզ դասախոսել են: Ինչպիսի՞ անհատականություններ էին նրանք, և ի՞նչ հետաքրքիր հուշեր կարող եք պատմել նրանց մասին:

- Մեր բժշկության լավագույն երախտավորներից են եղել Յ. Քեչեկը, Ս. Շարիմանյանը, Մալխասյանը, Սուրեն Նիկիտիչը, Սուրեն Հովհաննիսյանը, Հովհաննես Վազգենիչը, Վազգեն Սարուխանյանը, Խունունցը, Զարեհ Աբրահամյանը, Կամիս Իվանի Սարտիրոսյանը, Խաչիկ Ար-

շակի Անափիոսյանը: Անձամբ ինձ դասավանդել են Սուրեն Զախարի Հովհաննիսյանը, Խաչիկ Արշակի Անափիոսյանը, Հովհաննես Վազգենի Սարուխանյանը՝ իմ մեծ ուսուցիչը: Նրանք բոլորն էլ մեծ անհատականություններ էին վիրաբուժության բնագավառում ոչ միայն մեր հանրապետության, այլև՝ Խորհրդային Միության մասշտաբով: Բացի դրանից՝ մեծագույն անհատականություններ էին և՛ որպես մարդ, և՛ որպես վիրաբույժ: Ցավոք՝ բոլորը, բացի Հ. Սարուխանյանից, հիմա ողջ չեն:

- Բնականաբար համեմատության եզրեր գտնելը դժվար է ձեր ուսանած տարիների և այսօրվա հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքի պայմանների առումով: Մի քանի խոսքով ներկայացրեք՝ նշելով նախորդ վիճակը և այսօրվա պայմանները: Ի՞նչ լավ բան կար անցյալում, որը, ցավոք, չբերեցինք 21-րդ դար:

- Այո, իրավացի է: Ես այս բաժանմունքում աշխատում եմ 1997 թվականից: Իր ստեղծման առաջին օրերին վիրաբուժական բաժանմունքի պայմանները շատ վատն են եղել: Վատն էին նաև մինչև վերջերս կատարված վերանորոգումները: Այսօրվա ղեկավարության շնորհիվ բա-

ժանմունքը հիմա բավականին լավ վիճակում է գտնվում: Անցյալում այս պայմանները չկային: Այնուամենայնիվ, մենք, անտեսելով այդ վատ պայմանները՝ լավ էինք աշխատում:

Բնականաբար, գիտության զարգացման հետ մեկտեղ զարգացել է նաև վիրաբուժությունը: Եթե նախկինում պերֆորատիվ ապենդիցիտը 90 տոկոսով համարվում էր մահացու, հիմա ոչ միայն պերֆորատիվ ապենդիցիտը, նաև պերֆորատիվ խոցը, մի քանի օրվա բարդություն ունեցող պերիտոնիտները, ծանր պոլիտրավմաները արդեն չեն համարվում կյանքի համար վտանգավոր: Դա կապված է այն հանգամանքի հետ, որ ոչ թե մենք լավ չէինք աշխատում, այլ տեխնիկան այդքան զարգացած չէր, չկային ներկայիս պայմանները:

Հիմա բաժանմունքում մենք ունենք ընդամենը 30 մահճակալ, իսկ այն ժամանակ կար 200 մահճակալ: Եթե մենք հիմա նեղ մասնագիտական վիրաբուժական բաժանմունք ենք, այն ժամանակ բոլորը մեկ բաժանմունքի մեջ էր՝ և՛ կոտրվածքները, և՛ թարախային վերքերը, և՛ անոթային, և՛ խոռոչային, և՛ կրծքային վիրահատություններ: Հիմա կատարում ենք միայն անոթային, որոշ դեպքերում՝ նաև կրծքային վիրահատություններ: Նախկինում հերթապահության ժամանակ մեկ օրում մինչև 20 հիվանդներ էին գալիս, որից 19-ը վիրահատվում էին: Իսկ այժմ 19 վիրահատությունն անյնիսկ մեկ շաբաթում չի լինում:

Նախկինում աշխատելը ավելի հետաքրքիր էր: Այն ժամանակ ամբողջ ուշադրությունն ու ուժերը բժիշկը կենտրոնացնում էր հիվանդների վրա, չկար վճար, իսկ այժմ, բացի բժշկությունից, զբաղվում ենք նաև ֆինանսական հարցերով:

Անցյալի լավ բաներից կարող են հենց դա նշել. կար անվճար բժշկական ծառայություն: Բացի դրանից՝ մարդկային ջերմ հարաբերությունները չբերվեցին 21-րդ դար: Անցյալում կոլեկտիվը մասն էր մի ընտանիքի, հարաբերություններն ավելի ազ-



նիվ էին, ավելի մարդկային, մեկի և՛ ուրախությունը, և՛ տխրությունը բոլորինն էր, ավելի համախմբված էին: Միգուցե այսօրվա սոցիալտնտեսական պայմանները ստիպեցին մարդկանց այդ ամենին կարևորություն չտալ, բայց այն ժամանակ, իմ կարծիքով, ավելի նվիրված էին իրենց գործին: Այն ժամանակ կար երիտասարդների անցման էտապ. երիտասարդը գիտեր իր տեղը, գիտեր՝ ով է իր ավագը. հիմա դա չկա: Քույրական կոլեկտիվը բոլորովին այլ էր. ուսանողական տարիներին մենք քույրերից սարսափում էինք: Գիտեինք, որ եթե անենք որևէ սխալ, կպատժվենք: Հիմա նույնիսկ ավագ քույրը չգիտի իր անելիքը: Իմ ուսանողական տարիներին վիրասրահի ավագ քույրերը, կարելի է ասել, բժիշկներ էին:

- Առաջին հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքի մասին բժշկության պատմաբանները գրում են, որ նույնիսկ գործիքները չէին ստերիլիզացվում, պայմանները վատն էին... Ի՞նչ եք լսել ձեր դասախոսներից, ովքեր աշխատել են այդ ժամանակ:

- Բժշկության զարգացման առաջին տարիներին ստերիլիզացիայի գաղափարը չկար: Հետագայում, երբ անտիսեպտիկան և ասեպտիկան առաջ քաշվեցին, սկսեցին գործիքները ստերիլիզացնել: Նույնիսկ Պիրոգովը իր գործիքները չի ստերիլիզացրել, այլ ախտահանել է դրանք՝ կրակի վրա տաքացնելով: Իսկ հիվանդանոցում դժվար թե նման բան լիներ: Ես նման բան չեմ տեսել և չեմ էլ լսել: Իմ ուսուցիչները այդպիսի բաներ չեն պատմել մեզ: Միգուցե այդ թվերին նրանք չեն աշխատել և չեն լսել այդ մասին: Այստեղ մի ժամանակ տեղակայված է եղել նաև ընդհանուր վիրաբուժության ամբիոնը, որը ղեկավարել է Ս. Շարինյանը: Ցավոք, ես նրան բախտ չեմ ունեցել տեսնելու: Իմ ուսանողական տարիներին՝ 1976-77 թվականներին, մեր դասախոսը Անափիոսյանն էր, իսկ ամբիոնի վարիչը՝ Սուրեն Զաքարի Յովհաննիսյանը, մենք նման բաներ չենք լսել առաջին հիվանդանոցի մասին: Ճիշտ է՝ հիվանդանոցում գործ շատ է եղել, քանի որ առաջինը և միակն է եղել այդ թվերին, հետո արդեն մյուս հիվանդանոցները կառուցվեցին: Նույնիսկ երկրաշարժի ու պատերազմի տարիներին գործիքները ստերիլիզացնում էին:

- Ի՞նչ հետաքրքիր տեղեկություններ ունեք առաջին հիվանդանոցի նույնիսկ վաղ շրջանի պատմությունից, որը կցանկանայիք ներկայացնել մեր ընթերցողին:

- Գիտեմ, որ այստեղ եղել է վիրաբուժության լավագույն կենտրոններից մեկը, այստեղ աշխատել են լավագույն վիրաբույժները՝ Քեչեկը, Յուլյանը, հետո վերջինս գնաց 5-րդ հիվանդանոց, Վազգեն Սարուխանյանը, Ս. Շարինյանը, Մալխասյանը, Սուրեն Յովհաննիսյանը, Սուրեն Գալստյանը, ով գնաց 3-րդ հիվանդանոց: Նրանք հետագայում դարձան առանձին կլինիկաների, ամբիոնների վարիչներ:

Ճիշտ է՝ գիտական աստիճան չեն ունեցել, սակայն Հայաստանում ճանաչված մասնագետներ են եղել Կամիս Մարտիրոսյանը, Օրբել Բունիաթյանը, Զարեհ Աբրահամյանը, Պողոս Սիմոնյանը, Յուրի Կարապետյանը:

- Քանի որ խոսք գնաց Կամիս Մարտիրոսյանի մասին, ում մենք ցանկանում ենք ներկայացնել հորեյանի առիթով, որակեցեք, խնդրեմ, նրան:

- Կամիս Իվանիչը մեծագույն վիրաբույժ, մեծագույն մարդ և լավագույն ընկեր էր: Աշխատել է Խորհրդային Միության տարբեր հանրապետություններում: Բացի բարձր կարգի վիրաբույժ լինելը՝ նաև շատ լավ մարդ էր: Առիթների ժամանակ արտասանում էր բանաստեղծություններ՝ Ֆիրդուսիից մինչև Թումանյան: Երբեք չէր տրտնջում, կոպիտ բառեր չէր օգտագործում, անզամ ձայնը չէր բարձրացնում:

Երևանում հիվանդանոց կառուցելու գործին միջամտել է Նիկոլայ Շուստովը՝ հայկական կոնյակին հոչակ բերած գործարանատերը, ով ընթերցելով խնդրի լրջությունը, Աստաֆյան՝ ներկայիս Արովյան փողոցի սեփական հողատարածքը նվիրաբերում է ապագա հիվանդանոցին:

Լինելով գործի մարդ՝ նա պայմանագիր է ստորագրում Երևանի քաղաքային դրամայի հետ, համաձայն որի՝ 3 տարում շինարարությունը չսկսելու դեպքում հետ էր վերցնելու հողը:

Իհարկե, քայլը շինարարությունը արագացնելու պարտադրող յուրատեսակ, ազդեցիկ կոչ էր:

Քաղաքային իշխանությունները, իրենց երախտագիտությունը հայտնելով Շուստովին, խոստացան բուժարանում մշտապես ունենալ 1 անվճար մահճակալ՝ բարերարի անունով:

Ի դեպ՝ հայկական կոնյակը Եվրոպային ներկայացնելու հետաքրքիր մի պատմություն է շրջանառվում մինչ այսօր:

Ցանկանալով ճանաչել տալ հայկական կոնյակը՝ Շուստովը Եվրոպա է գործուղում երիտասարդների մի մեծ խումբ, ովքեր պետք է շրջեին ճանաչված ռեստորաններում և հայկական կոնյակ պատվիրեին:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ այդ երիտասարդները պետք է «զարմանք արտահայտեին», որ ճանաչված այդ ռեստորանում ոչ միայն չկա հայկական կոնյակ, այլև՝ դրա տերերը անզամ տեղեկություն չունեին այդ կոնյակի գոյության մասին: Բարեկիրք վարքագծով և ճաշակով հագնված երիտասարդների զարմանքը ստիպում էր ռեստորանների տերերին սկսել հայկական կոնյակի փնտրտուրը...



ԱՌԱՋԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԱՄԵՆԱՅԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՄԱՆԿԱԲՈՒՅԺԸ

Վիլեն Արմենի Աստվածատրյանի կենսագրական տվյալների թվարկումը նրա անձին անսխի թերևս որոշակի պատկերացում կարող է տալ չճանաչողներին՝ որպես անվանի գիտնականի, բարձր նկարագիր ունեցող մտավորականի, ճանաչված մանկաբույժի, բարձրագույն կրթական համակարգի իրականացման հմուտ կազմակերպչի:

Սակայն նրա մարդկային նկարագիրն ամբողջացնելու համար անհրաժեշտ կլինի առանձնացնել մի քանի կարևոր ուրվագծեր ևս, որոնք կօգնեն ճանաչելու նրա ամբողջական նկարագիրը:

Երեխաների, հատկապես առողջական խնդիրներ ունեցող երեխաների հանդեպ ցայտուն ընդգծված հոգատարությամբ առեցնում անձնավորությունը, բարձրագույն կրթական բնագավառի առաջնամարտիկը չափազանց բարեկիրթ էր: Ընդգծված վերաբերմունք ուներ տարեցների և կանանց հանդեպ. առաջիններին՝ խորին հարգանք և ակնածանք, երկրորդների հանդեպ՝ կնամեծարության յուրահատուկ վերաբերմունք արժանիներին:

Նրա գրքերից մեկը՝ «Առողջ մանուկ», որը ստացել էմ հեղինակի ընծայագրով, մի քանի հրատարակություն է ունեցել՝ բառիս ամենախսկական իմաստով սեղանի գիրք դառնալով մի քանի սերունդների մայրիկների համար, ովքեր երեխայի խնամքի հանրագիտարանային ընդգրկումներով նրա այդ գրքում նշված ցուցումներով, վստահելի մանկաբույժի խորհուրդներով առաջնորդվելով էին մեծացնում իրենց փոքրիկներին՝ հանոգված, որ ավելի վստահելի օգնական ու խորհրդատու չունեն, քան անվանի մանկաբույժի ցուցումներն են:

Ժամանակին՝ հողված գրելու առիթով ներկա էի նրա համայցերից մեկին և հիվանդների ընդունելությանը: Ամենատպավորիչը ինձ համար այդ պահին թերևս այն էր, որ ճերմակ խալաթավորներից բնածին սարսափ ու ահ ունեցող երեխաները նրանից չէին վախենում: Գուցե առաջին հայացքից աննկատելի թվացող այն ժեստն էր պատճառը, որով նաստետասկոպը երեխայի մարմ-

նին հպելուց առաջ ձեռքերով տաքացնում էր այն: Մանրո՞ք է... Կարծում եմ՝ ոչ: Հաճախ եմ նկատել, մանկաբույժի անփույթ վերաբերմունքը՝ սառած գործիքը հիվանդ երեխային մոտեցնելիս ...

Այդ առիթով լուսանկարների հրաշալի շարք տպագրեցինք, որոնք ավելի խոսուն էին, քան 10 ընդարձակ հողվածներ:

Գնահատում էր գեղեցիկը, արվեստը, բարին, խելացիությունը՝ հատկապես: Չափազանց կարգապահ էր և պահանջկոտ:

Անգամ խորհրդային տարիների ամեն ինչ սահմանափակող, միայն վերևից եկող որոշումներով ղեկավարման պայմանների առկայության պարագայում նրա ղեկավարած ԲՈՒՀ-ում ընդունվում էին որոշումներ և իրականացվում: Այդ տարիների ղեկավարները, ինչ խոսք, չունեին ներկայիս ղեկավարների ազատ գործելու, սեփական որոշումներ կայացնելու և իրականացնելու հնարավորությունները: Բայց և այնպես բժշկականը մնում էր բժշկական... իրեն վերապահելով ժամանակի համար համարձակ համարվող այնպիսի որոշումների կայացում,

որոնք իրենց չէին կարող թույլ տալ մյուս ԲՈՒՀ-երը:

Խորհրդային ժամանակի առաջադրած պահանջներից մեկը համանման օղակների փորձի փոխանակումն էր, փոխադարձ այցելությունները...

Բուհական թերթերի խմբագիրներս պարբերաբար լինում էինք միմյանց ԲՈՒՀ-երում:

Հերթական հավաքը բժշկական ինստիտուտում էր: Ըստ ընդունված կարգի՝ նրանց պետք է ընդուներ նաև ռեկտորը:

Հանդիպումը վերածվեց իրենց ռեկտորների նկատմամբ խմբագիրների դավադրությամբ՝ ինչպե՞ս է, որ բժշկականի խմբագրակազմը այդքան մեծաթիվ է՝ 9 հոգի, աշխատավարձերը իրենց համեմատությամբ ավելի բարձր են, «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻ» խմբագիրը գիտական խորհրդի անդամ է՝ ի տարբերություն իրենց...

Բժշկականի ռեկտորը իրեն հատուկ լիաթոք ու բարձր ծիծաղով ընդհատեց հարցերի շարանը և առաջարկեց խմբագիրներին այդ հարցերով դիմել իրենց ռեկտորներին:

«Դիմել ենք, արդյունք չկա»:

«Այդ դեպքում դիմե՛ք ինքներդ ձեզ: Եղեք այնպիսին, որ ձեր ռեկտորը



վախենա, թե հանկարծ կկորցնի ձեզ, և կընկնի իր թերթի վարկը: Եղեք խելացի, արժանապատիվ և հմուտ լրագրող ու կազմակերպիչ: Այդ դեպքում նա կանի ամեն ինչ, որ դուք չդժգոհեք և ստեղծեք այնպիսի թերթ, ինչպիսին մեր ԲՈւՅ-ի թերթն է»:

... Նրա ռեկտորության տարիներին լրացավ բժշկական ինստիտուտի 50-ամյակը, որը Հանրապետության մակարդակով նշվեց չափազանց մեծ շուքով. այդ հարցում անուրանալի են նաև նրա անձնական հեղինակությունը և ջանքերը, որոնց արդյունքում ինստիտուտը պարգևատրվեց ժամանակի չափազանց պատվավոր պարգևով (կարծեմ՝ ժամանակին ինստիտուտ կոչվող ԲՈւՅ-երի մեջ

միակը) «Աշխատանքային Կարմիր դրոշի» շքանշանով... Եվ չափազանց բարձրահունչ էր մեր կրթօջախի անունը՝ «Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանակիր» Երևանի պետական բժշկական ինստիտուտ:

Հետո պետք է ժամանակներ անցնեին, հասարակարգ փոխվեր, արժեքներ վերահիմաստավորվեին, որ կոչվեինք Մխիթար Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարան, որի ռեկտորները շարունակեին իրականացնել և ավելացնել այն ավանդույթները, որոնք հնարավորություն կընձեռեին բժշկականին շարունակել լինել հանրապետության ԲՈւՅ-երից ամենահեղինակավորը, ամենապահանջվածը, ամենա-

մեծաթիվ և բարձր գիտելիքներով դիմորդներ ունեցողը. վերջինիս առումով մի նկատառում՝ ժամանակին միջնակարգ դպրոցը բարձր առաջադիմությամբ՝ ոսկե և արծաթե մեդալով ավարտածների ավելի քան 80 տոկոսը դիմում էր բժշկական ինստիտուտ...

Այսօր թե՛ բժշկական համալսարանում, թե՛ առաջին հիվանդանոցում, որտեղ երկար տարիներ աշխատել է նա, պահպանվում է նրա հիշատակը, մեծարվում նրա անձը: Վկայություններից մեկը՝ Վիլեն Արմենի Աստվածատրյանի ռեկտորական աշխատասենյակը նրա անվամբ լսարանի վերածելն է:



«Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի երջանիկ մանկության: Մանուկների առողջության պահպանումը պետության առաջնահերթ խնդիրներից մեկն է»:

Սրանք տողեր են մանկաբուժական ֆակուլտետի մանկական հիվանդությունների ամբիոնի վարիչ, ՀՍՍՀ պետական մրցանակի դափնեկիր, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Վիլեն Արմենի Աստվածատրյանի «Առողջ մանուկ» գրքից:





ՆՐԱՆՑ ԿՈՉՈՒՄԸ ՇԱՐՔԱՅԻՆ ԲԺԻՇԿ ԼԻՆԵԼՆ ԷՐ

Առաջին հիվանդանոցում կար գործող բժիշկների մի սերունդ, որը թեև չունեի գիտական տիտղոսներ, սակայն մեծ ճանաչում ուներ հիվանդների և հիվանդատերերի մոտ:

Նրանց անվերապահորեն վստահում էին: Ծանր դեպքերում աշխատում էին անպայման դիմել նրանց՝ համոզված, որ առաջին հիվանդանոցի լեգենդ դարձած այդ բժիշկները կկարողանան անպայման ապահովել հաջող ելքը:

Նրանց մոտ սիրով էին գնում նաև ուսանողները: Ահա ինչու՝ այսօր սիրով ու գնահատանքի բարձր խոսքերով են հիշում նրանց ուսանողները, այսօրվա մեր ճանաչված բժիշկներն ու դասախոսական կազմի այն ստվարածավալ հատվածը, որը բախտ ու երջանկություն է ունեցել անցնել նաև նրանց դպրոցը:

ԴԱՏԵՐ ԴԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Հայրս՝ Կամիս Իվանի Մարտիրոսյանը, ծնվել է 1926 թվականի նոյեմբերին, Կարմիրի շրջանի Թթուջուր գյուղում (ներկայիս՝ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջանի Թթուջուր գյուղում): 5 տարեկանում ընտանիքը տեղափոխվել է Բաքու, որտեղ նա ավարտել է դպրոցը և պոլիտեխնիկ ինստիտուտը՝ ոսկե մեդալով և գերազանցության դիպլոմով: Այնուհետև՝ տեղափոխվել է Երևան և ընդունվել Երևանի բժշկական ինստիտուտ, որը նույնպես ավարտել է գերազանց առաջադիմությամբ:

Այա գործուղվել է Միջին Ասիա, որտեղ հետաքրքիր պատմություն է տեղի ունեցել՝ կապված նրա կատարած առաջին վիրահատության հետ: Կույր աղիքի բորբոքումով շատ ծանր հիվանդ են բերել, սակայն բոլոր բժիշկները զբաղված են եղել: Ավագ բուժքույրը ստիպել է նրան վիրահատել, ասելով. «Եթե չես ուզում, հիվանդը մահանա՝ կատարիր բժշկի քո պարտականությունը»:

Իր հուշերում հայրս միշտ նշում էր, որ երախտապարտ է այդ բուժքրոջը, ով համարձակություն ներշնչեց իրեն: Գործուղման է գնացել նաև Գերմանիա, ինքնուրույն սովորել է գերմաներեն: Տիրապետում էր ռուսերեն, արաբերեն, գերմաներեն լեզուներին, իսկ երբ ինձ տանում էր անգլերեն լեզվի պարապմունքների, սկսեց սովորել նաև անգլերեն:

Գերազանց ասմունքում էր, երգում, նվագում, նկարում քանի որ Բաքվում ավարտել էր նաև երաժշտական դպրոց, հաճախել էր նաև մասնավոր պարապմունքների: Հրաշալի թամադա էր:

Ինչպես և հաճախել էր նաև մասնավոր պարապմունքների: Հրաշալի թամադա էր:

Երբ արձակուրդներին գնում էր իր հայրենի գյուղը հանգստանալու, այնտեղ նույնպես աշխատում էր, կատարում էր վիրահատություններ և այդ ամենը անում էր սիրով, առանց որևէ ակնկալիքի: Չափազանցություն թող չթվա ասածս. իր հայրենակիցները առողջական բոլոր խնդիրները հետաձգում էին ամառվան՝ երբ հայրս կգնա հանգստանալու: Ավելին՝ վիրահատությունից հետո ապաքինված համերկրացի հիվանդները հաճախ էին նրան հրավիրում իրենց տուն: Նման դեպքերում հայրս նվերներ, կոնյակ և շոկոլադ էր գնում և այդ ընծաներով այցելում իր ապաքինված հիվանդներին:

Իմ կարծիքով՝ նա անցած դարավերջի լավագույն վիրաբույժներից մեկն էր:

Միայն շոշափելով՝ հիվանդին ասում էր՝ կույր աղիքն է, փայծաղը, թե՞ ստամոքսի խոցը և կարելի՞ է, արդյոք, վիրահատել, թե՞ ոչ: Եվ միշտ ճիշտ էր արտահայտվում: Ոչ մի մահ չի տվել, բացառությամբ՝ քաղցկեղի մեկ դեպքի: Երբ քաղցկեղով հիվանդ էր գալիս, նա ասում էր, որ այդ դեպքում չի կարելի ձեռք տալ, քանի որ դրանից այդ պրոցեսն ավելի է արագանում, և հիվանդն ավելի է տանջվում:

Երբ հայրս տուն էր գալիս, անպայման իր բոլոր զավակներին պետք է համբուրեր, ապա լվացվեր, հետո առաջին բանը, որ անում էր, գնում էր իր սենյակն ու բացում վիրաբուժության գիրքը, որը դրված էր իր մահճակալի մոտ: Հավանաբար մեկ անգամ ևս ցանկանում էր ստուգել ինքն իրեն՝ արդյո՞ք ամեն ինչ ճիշտ է արել վիրահատության ժամանակ:

Երբ ծանր հիվանդ էր ունենում՝ վիրահատությունից հետո առաջին կրիտիկական օրերին տանը ոչ ոք իրավունք չունեի նույնիսկ ծիծաղելու, բարձր ձայնով խոսելու, քանի որ հայրս տրամադրություն չէր ունենում: Երբ հիվանդը դեպի լավն էր գնում, մենք դա զգում էինք նրա տրամադրությունից, արդեն ուրախանում էինք, բարձրաձայն ծիծաղում, նվագում, երգում: Շատ լավ հայր է եղել,



երբեք վատ խոսք չի ասել իր գավակներին: Երբ աշխատանքից տուն էր գալիս, իր գավակներին նստեցնում էր սեղանի մոտ և հարցնում՝ ի՞նչ ենք ուզում: Եվ հաջորդ օրն արդեն մեր ցանկությունները կատարում էր: Շատ էր սիրում մեզ տանել Սևանա լիճ: Տոնածառը զարդարում էր ինքն անծամբ, բերում էր փոքր տոնածառեր, դրանց ճյուղերով սարքում էր մեծ տոնածառ, տնակ էր սարքում տոնածառի մոտ, լույս էր դնում այդ տնակի մեջ. ուներ հմուտ ձեռքեր ամեն հարցում: Մեզ լողացնում էր, եթե ժամանակ ուներ: Նաև շատ սիրող ամուսին էր:

Երբ առիթների բերմամբ, իսկ այդպիսիք շատ էին լինում, նա սիրում էր ամեն առիթ տոնի վերածել, գառ էր մորթում, միշտ խաչակնքում էր և ներողություն խնդրում գառնուկից: Նույնը անում էր նաև յուրաքանչյուր վիրահատությունից առաջ՝ խաչակնքելու առումով:

Սիրում էր անեկդոտներ պատմել իր հիվանդներին: Մի անգամ, երբ հերթական անեկդոտն է պատմել, հիվանդին անզգայացրել են, և նա չի լսել մինչև վերջ: Յետո, երբ աչքերը բացել է, հորս խնդրել է պատմել՝ թե ինչ՞ով վերջացավ այն:

Մենք՝ երեխաներս, երազում էինք, որ հայրիկս տուն գալուց լինի մի փոքր գինովցած, որ լավ տրամադրություն ունենա և խոսի, քանի որ նա այդքան էլ խոսկան չէր:

Մեր տան դուռը երբևիցե բանալիով գիշերը չենք փակել, քանի որ, երբ ծանր հիվանդներ էին լինում, շտապօգնության մեքենան գալիս էր, մտնում էին տուն, արթնացնում հայրիկիս և տանում: Սա մեզ համար արդեն սովորական էր դարձել:

Հայրս հրաշալի նվագում էր տարբեր զործիքներ, սակայն հատկապես սիրում էր թառ նվագել:

Իսկ ինչու՞ հատկապես՝ թառ, մտածում էի հողվածը կարդալիս, չէ՞ որ այդ զործիքի նկատմամբ մի փոքր վերապահություն կա, առանձնապես չեն հարգում այն: Զուգադիպություն՞ն էր, թե՞ պատահականություն՞ հենց այդ պահին աշխատասենյակիս կից սենյակում իր փորձը սկսեց համալսարանի ուսանողական «Կոմիտաս» վոկալ-զործիքային խումբը, որի ղեկավար Գոռ Մարգարյանին թառի վրա սկսեց կատարել առաջիկա համերգում իր նվագելիք հատվածը:

**Ապա հիշեցի Չարենցի տողերը՝
... Մեր հին սագի ողբանվագ,
Լացակունած լարն են սիրում...**



Խոսում լուսանկար՝ լուսավոր տրամադրությամբ. Կամիս Իվանիչը առաջին շարքում ձախից երրորդն է: Միասին վիրահատում էին, միասին հանգստանում, միասին խնջույքներ սարքում՝ լիցքաթափվում, երգում, ասմունքում, նվագում... Դժվար է ասել՝ իրե՞նք էին ընտիր ընկերներ, թե՞ ժամանակն էր տալիս այդ հնարավորությունը...

«Անուշ» օպերան ես ամբողջությամբ լսել եմ հայրիկիցս և մայրիկիցս, երկուսով այն երգում էին ծայրից ծայր: Ինձ տարել է և՛ պարի, և՛ դաշնամուրի, և՛ գեղարվեստական մարմնամարզության պարապմունքների, քանի որ շատ էր ցանկանում, որ իր երեխաներն ամեն ինչ իմանային:

Թռռիկների հանդեպ սերը աննկարագրելի էր. կանգնում էր պատուհանի մոտ և անհամբեր սպասում, թե ե՞րբ են թռռիկները դպրոցից տուն գալու: Տեսավ նույնիսկ իր ծոռիկներին:

Նա երբեք չի ձգտել բարձր պաշտոնների: Երբ հանրապետական հիվանդանոցը կառուցեցին, կանչեցին նրան: Տարիներ շարունակ կանչում էին արտասահման, նա չգնաց, բայց, անկեղծ ասած, հետագայում զղջում էր, հատկապես, երբ նրան ուղարկեցին «ծերության հանգստի», որից հետո նա գնաց իր հայրենի գյուղը, այնտեղ հիվանդանոցում նրան նշանակեցին բաժնի վարիչ, առանց նրա ոչ ոք վիրահատություն չէր անում: Նրա մոտ արտասահմանից, հատկապես ԱՄՆ-ից շատ ուսանողներ էին գալիս սովորելու: Մութ ու ցուրտ տարիներին ամբողջ առաջին հիվանդանոցի համար նրա անունով իր նախկին շրջանավարտներն ինքնաթիռ էին ուղարկել՝ լի ամեն տեսակ բժշկական



պարագաներով: Հետագայում նրան կանչում էին նույնիսկ ԱՄՆ, սակայն նա, լինելով չափից դուրս հայրենասեր, չափից շատ սիրելով իր երեխաներին ու կնոջը՝ չգնաց:


Նրա սերն անսահման էր, որը նկարագրել հնարավոր չէ: Երբեք ոչ մեկին չէր վիրավորում, ուշադիր էր բոլորի հանդեպ, նաև՝ չափազանց զուսպ էր և համեստության տիպար:

Իր հիվանդությունը նա ձեռք բերեց իր մասնագիտության պատճառով: Երբ վիրահատություններից հետո քրտնած դուրս էր գալիս, սառը ջուր խմում, նրա մոտ առաջացավ ասթմային բրոնխիտ: Երկար տարիներ դեղեր էր օգտագործում, սակայն ոչ մի օգուտ չտվեց: Մահացել է 2008 թվականին:

Թաղված է իր հայրենի գյուղում՝ ըստ իր խնդրանքի:



ՈՐ ԲՆԱԳԱՎԱՌՆ ԷԼ ԸՆՏՐԵՐ՝ ԿԼԻՆԵՐ ԱՄԵՆԱԱՌԱՋԻՆՆԵՐԻ ԹՎՈՒՄ



Սեղանիս նամակներ են, հապճեպ արված գրառումներ, լուսանկարներ և ուսանողական օրերի օրագիրը՝ մարգարտաշար ձեռագրով:

Մասնագիտության բերունով տարբեր առիթներով օրագրեր շատ են անցել ձեռքիս տակով. դրանցից շատերի հեղինակների մասին հողվածներ ու ակնարկներ են գրվել: Դրանք սովորական օրագրեր են եղել՝ կարևոր իրադարձությունների մասին գրառումներով:

Բայց Կամիս Մարտիրոսյանի օրագիրն ուրիշ է: Բացառությամբ եզակի մի քանի օրերի՝ գրառում կատարել է ամեն օր՝ թեկուզ մեկ տողով: Բոլոր գրառումներն ավարտվում են անցնող օրվա հանդեպ ավստասանքի դրսևորմամբ՝ տարբեր ձևակերպումներով. «Այս օրն էլ անցավ: Օրն ինչպե՞ս անցավ՝ չգիտեմ, գնաց մյուս օրերի նման: Այսօր, դու էլ գնացիր: Թռավ այս օրը ևս կյանքիցս: Այսօր, դարձար երեկ, բայց ... Եվ էլի ասեմ՝ գնաց օրը...»:

Հնարավոր չէ թվարկել անցնող օրվա մասին ավստասանքի նրա բոլոր արտահայտությունները, թեև դրանք չափազանց խոսուն են:

Ափսոսանքը անցնող օրվա հանդեպ այնքան մեծ է, որ նրա համար վերածվում է բացահայտ մտահոգության. «Գնում են օրերը միմյանց հետևից, իսկ մենք անտեղյակ այս մեծ կորստին շարունակում ենք ապրել՝ չմտահոգվելով, որ այս օրերը մեր կյանքից են գնում: Եվ ինչու՞ պետք է անցնեն այդպես անիմաստ, մի՞թե հենց միայն նրա համար, որ այս անպիտան դարում ենք ծնվել»:

Դարը բժշկական ինստիտուտի ուսանողը անպիտան է կոչում գուցե այն պատճառով, որ անցկացնում է անիմաստ, առանց որևէ կոնկրետ ծրագրի: Սակայն միայն թվարկումը ուսանողական տարիների նրա ծանրաբեռնվածության, ցույց է տալիս, որ բազմահմուտ երիտասարդը ունեցել է կոնկրետ ծրագրեր, անելիքներ:

Ըստ գրառումների երեկոյան, դասերից հետո, կիրակի օրերին մինչև լուսաբաց մասնագիտական առարկաները պարապել է անատոմիկումում: Եղել է հասարակական ակտիվիստ. «Կուսքարտուղարը խնդրել էր ժողով կազմակերպել, որը պետք է քննարկեր տարբեր հարցեր:

Կուսկոմիտեից կանչեցին՝ անհրաժեշտ է վաղվա հանդիպման համար համերգ կազմակերպել... Առանց մեծ ջանքերի իրականացրինք համերգը, որը անունով էր համերգ, բայց ոչ իմ սրտով»:

Գրառումներում նշում է «Չեմ սիրում կիրակի օրերը: Գնում են անատոմիկ՝ պարապելու: Ինստիտուտից տուն եկա, անելիք չունեի, նորից գնացի, մի քիչ բոքս պարապեցինք»: «Հրանտի հետ գնացինք իրենց ինստիտուտում բասկոտբոլ խաղալու»: Այնուհետև մի քանի տասնյակից ավելի գրառումներ ավարտվում են՝ գնացինք թատրոն, գնացինք օպերա, գնացինք նոր ֆիլմ նայելու, գնացինք կրկես, շրջեցինք խանութներով՝ գնումներ կատարելու:

«Քանի որ Բաբվից փող էին ուղարկել, խնջույք կազմակերպեցինք»: Սիրած աղջկա երևանում գտնվելու օրերին՝ «Գնացինք կինո, մտանք եկեղեցի մոմ վառելու, գնացինք օպերա: Երեկոյան ուշ ժամի գնացի անատոմիկ՝ պարապելու: Ամբողջ գիշեր պարապեցի»:

Հաջորդ հանգամանքը, որ խիստ ցայտուն է, ասույթների, փիլիսոփայական քառյակների օգտագործումն է, հատկապես այն օրերի գրառումներում, երբ անտրամադիր է, երբ սպասում է, երբ հուզված է, երբ կարոտում է, երբ տարակուսում է...

Կարևորն այն է, որ մեջբերումները՝ Թումանյանից մինչև Խայան ու Շեքսպիր, օգտագործում է՝ նշելով հեղինակներին: Օրագրում չափազանց շատ են խորհմաստ մտքերը՝ առանց հեղինակի անվան, որոնք, իմ համոզմամբ և նրա ծանոթների վկայությամբ, հենց իրենն են:

Քանի շնչում ես աշխարհում՝
Ծեծիր սիրո դուռը,
Սերը հեշտացնում է դժվարը,
Անհնարինը դարձնում հնարավոր:

Սիրո մասին նրա ապրումները, հուզումները, սպասումները, ի վերջո սիրելիին հասնելու երջանկությունը կարող է թեմա դառնալ հրաշալի մի գեղարվեստական գործի՝ առանց հեղինակի խոսքում որևէ փոփոխություն կատարելու:

Բազուկովդ հզոր հարթիր քո ուղին,
Որ զոհ չգնաս կյանքի հեղեղին...

Այս կարգի թևավոր խոսքերն ու իմաստավորումները չափազանց դիպուկ են բնութագրում հենց իր՝ ճանաչված մասնագետի ուղին:

Որպես լրագրող՝ օրագրի ընթերցումից հետո եկա այն եզրակացության, որ եթե բժշկ չդառնար, Կամիս Մարտիրոսյանը հրաշալի գրող կարող էր դառնալ, անգամ՝ օժտված նկարիչ, երաժիշտ... Վստահ եմ, որ որ բնագավառն էլ ընտրեր, կլիներ ամենաառաջինների թվում:

Ցավով ծածկում են օրագիրը և ավստում, որ մարդիկ այն կարդալ չեն կարող: Հնարավորության դեպքում կարելի է հրատարակել այն, այն մտայնությամբ, որ մեր ուսանողներին կօգնի ճանաչել այն ժամանակների երիտասարդի հոգեբանությունը, ով դեռևս հեռուստատեսությամբ, այսօրվա տեխնոլոգիաներին չառնչվելու պայմաններում այսքան հարուստ հոգեկան ներաշխարհ ուներ, այսքան գեղարվեստական մտածողություն, այսքան փիլիսոփայական մտածողություն:

Եվս մեկ հանգամանք՝ օրագիրը ճանաչել կտար ոչ միայն հեղինակին, այլև նրա ուսանողական տարիների երիտասարդության կյանքը, նրանց զբաղվածությունը, ապրումները, զգացողությունները...

«Մեր սուրը»

փառքով դրեցինք

պատյան»

ՈՉ ՈՔ ԶԻ ՄՈՌԱՑՎԵԼ, ՈՉԻՆՉ ԶԻ ՄՈՌԱՑՎԵԼ

Յայրենական մեծ պատերազմի օրերին, այն ժամանակ դեռ երիտասարդ բժիշկներ կամ բժշկական ինստիտուտի վերջին կուրսի ուսանողներ, ներկայումս բժշկության երախտավորներ կոչվող շատ անվանիներ մասնակցեցին պատերազմին: Նրանցից շատերը զոհվեցին: Ոմանք ծանր վիրավորվեցին՝ զինվորներին վիրահատելիս կամ բժշկական օգնություն ցույց տալու պահին: Շատերը պատերազմին մասնակցեցին էվակոհոսպիտալներում՝ այդ թվում նաև երևանում տեղակայված: Պատերազմից հետո սկսվեց խաղաղ տարիների կյանքը, որի ընթացքում նորից բժիշկ ու գիտնական դարձան երեկվա զինվորն ու զինվորական բժիշկը...

Նրանց մասին գրքեր գրվեցին, հողվածներ, հրապարակումներ, որոնք ընդգծեցին, որ ամեն ոք, երբ հայրենիքը վտանգի մեջ է՝ յուրօրինակ զինվոր է: Այս միտքն առավելապես վերաբերում է բժիշկներին: Այս մտայնությունը առավել ակնհայտ դրսևորվեց արցախամարտի օրերին:

Եկավ մի պահ, որ արժևորվեցին նոր մոտեցումներ և ինչ-որ տեղ անհիմաստ համարվեցին հայրենական պատերազմի մասնակիցներին հերոսացնելը, ավելին՝ գտան, որ իզուր զոհեր և անհիմաստ հերոսներ դարձան մեր ժողովրդի զավակները:

Նման կարծիքի հեղինակներին առիթ ունեցել են հիշեցնելու, որ նրանցից շատերի արմատները կորուսյալ հայրենիքում էին, և գոնե բարձրաստիճան հայազգի սպաները՝ մարշալները, գեներալները գիտեին, որ այս պատերազմում Թուրքիայի գերագույն նպատակը հայկական հարցը վերջնական նպատակակետին հասցնելն էր՝ կախված Ստալինգրադի ճակատամարտի ելքից, ճակատամարտ, որը արմատական բեկումն մտցրեց հայրենական պատերազմի ընթացքում և ի դերև հանեց Հայաստանի վերջնական գրավմանը միտված մեր հարևան պետության ծրագրերը:

Հողվածը գրելու առիթով ես թերթում էի «Հայաստանի բժիշկները Մեծ Հայրենականում» գիրքը, որի հողվածների գերակշիռ մասը առաջին հիվանդանոցի աշխատակիցներին է վերաբերում, ովքեր մեկնել են ռազմաճակատ կամ աշխատել էվակոհոսպիտալներում:

Եվ քանի որ հողվածը հնարավորություն չի տալիս թվարկել բոլորին անուն առ անուն, որոշեցի արտատպել ընդամենը 3 հոգու մասին «ԱՊԱԳԱ ԲԺՇԿՈՒՄ» նախկինում տպագրված այս հողվածը, քանի որ, ցավոք, այսօր հայրենական պատերազմի վետերաններից ոչ ոք ողջ չէ, ում կարելի էր հանդիպել կամ ում հետ կարելի էր հարցազրույց կազմակերպել:

Նման թվարկում է ենթադրում նաև արցախամարտի մասնակիցների, երկրաշարժի ժամանակ տուժածների օգնություն ցուցաբերած բժիշկների մասին հրապարակումները՝ վկայելով այն հանգամանքը, որ բժիշկը չի կարող անհաղորդ մնալ իր ժողովրդի ճակատագրին:

Սակայն այս մասին մեկ ուրիշ առիթով:

Ի՞նչ է գրել «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԸ» 1985 թվականին Հայրենական Մեծ պատերազմի մասնակից երեք բժիշկ վետերանների մասին

Տարիներ կանցնեն, տասնամյակներ, ու որքան էլ ժամանակը մեզ հեռացնի պատերազմի ահել օրերից, դույզն-ինչ չի խամրի մեր ժողովրդի, նրա յուրաքանչյուր զավակի սխրանքը:

Ծանր, սրբազան ժամանակներ էին, երբ մարդկանց հոգիներում պոռթկուն ատելություն կար թշնամու նկատմամբ ու անասան հավատ, հաղթանակի հավատ...

Այսօր շատերն են անցնում մայրաքաղաքի մի քանի հիվանդանոցների, մեկ տասնյակից ավելի դպրոցների կողքով ու չեն էլ կասկածում, որ Մեծ հայրենականի օրերին այդ շենքերում գործում էին խոշոր հոսպիտալներ, որ այդտեղից ռազմաճակատ էին վերադառնում ապաքինված մարտիկները: Վիրաբույժները չէին բավականացնում, և դասերից հետո այստեղ աշխատելու էին գալիս բժշկական ինստիտուտի ուսանողները, շրջանավարտ աղջիկները: Անքուն գիշերներ, առավոտյան դասախոսություն, տաս ժամ պարապմունքներ, հետո նորից հոսպիտալ...

Ծանր էր: Բայց մի՞թե միայն նրանց համար էր ծանր: Սովետական ժողովրդի գլխին աշխարհակործան մի պատերազմ էին փաթաթել: Պատերազմ, որ հետո սրբազան կոչվեց, հայրենական... Ու ոտքի ելավ մի ողջ ժողովուրդ՝ այդ արհավիրքի դեմն առնելու, նրանց թվում՝ այսօր արդեն ճանաչված վիրաբույժներ, երևանի բժշկական ինստիտուտի վիրաբույժական հիվանդությունների առաջին ամբիոնի վարիչ, պրոֆեսոր **Սուրեն Զախարի Հովհաննիսյանը**, նույն ամբիոնի դոցենտներ **Ավետ Ավետի Միդոյանն** ու **Հարություն Հովհաննեսի Մինասյանը**:

Սեղանին եռանկյունաձավալ նամակներ են՝ գրված ռազմի դաշտից, երիտասարդ տարիների լուսանկարներ, գրառումներ՝ հուշի պատառիկներ, և, իհարկե, շնորհակալական նամակներ՝ լի մեծարանքի սրտաբուխ խոսքերով: Այդքան տարբեր ու բազմաբովանդակ այդ նամակներում, սակայն, ընդհանուրը մի խոսք է՝ «շնորհակալություն, բժիշկ»:

Բժշկի ձեռքերը, վիրաբույժների ձեռքերը... Նրանցից յուրաքանչյուրի ձեռքերի մասին արդեն այնքան օգտագործված «ոսկի ձեռքեր» մակդիրն ինքնին խոսում է նրանց հմտության, փորձի ու նաև՝ անքուն գիշերների մասին:

Այդ ե՞րբ էր: Տարիների մշուշը հետ է գնում, ու յուրա-

քանջուրը հիշում է իր առաջին վիրահատությունը, հիվանդին, որոնք, ճակատագրի բերումով, ռազմաճակատում վիրավորված զինվորներն էին, իսկ վիրահատարանը՝ լավագույն դեպքում գետնափոր հյուղակն էր:

«ԽՆԴՐՈՒՄ ԵՄ ԻՆՁ ԸՆԴՈՒՆԵՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՐՔԵՐԸ...»

Այսպիսի դիմումներ գրվում էին մարտերից առաջ ու հետո, գրվում էին նաև խրամատներում, գնդակների տարափի ներքո. «Եթե մեռնեմ, ինձ կուսակցական համարեցեք»:

Այսպիսին էր նաև հրաձգային գնդի կրտսեր բժիշկ Սուրեն Յովհաննիսյանի դիմումը: Հետագայում երրորդ բելոռուսական ռազմաճակատի սանժառայության պետը հասավ մինչև Քյոնիգսբերգ, հաղթողի փառքով վերադարձավ տուն: Վերադարձավ՝ շարունակելու վիրաբույժի ծանր ու պատվաբեր գործը: Թերթում են նրա կենսագրության էջերը.

«Հաղթանակի օրը գտնվում էինք Պիլաու քաղաքի մոտակայքում, Ֆրիշներունգ կոչվող տեղանքում: Դա մի երկարուկ հողաշերտ է Բալթիկ ծովում՝ մեկուկես կիլոմետր լայնությամբ: Գերմանացիները ռմբակոծում էին ոչ թե նշանառությամբ, այլ ուղղակի յուրաքանչյուր մետրը հեղեղում էին ռումբերով: Ջորացրվել են 1946 թվականին, որպես Հայրենական պատերազմի հաշմանդամ: Պատերազմի ժամանակ պարզևատրվել են «Կարմիր աստղի» շքանշանով, մեդալներով, գերագույն հրամանատարության մեկ տասնյակ պատվոգրերով»:

Եվ էլի հուշեր, հիշողություններ: «... Դեղատան վարիչը և նրա ամուսինը՝ մարտկոցի հրամանատարը, հասել էին պատերազմի վերջին օրվան: Ու բոլորի նման, զգալով հաղթանակի մոտիկությունը, սպասում էին, երազում ու նաև՝ զգուշանում: Վերջին հանդիպման ժամանակ, ամուսնուն ճանապարհելիս, մի պահ միայն նկատեցի նրա կնոջ, մեր սիրելի գործընկերոջ ժպտուն դեմքը, հրաժեշտի համար բարձրացրած ձեռքն ու... պայթող արկից հենց այնտեղ, որտեղ մի րոպե առաջ ես էի կանգնած, կտրած հասկի նման անշշուկ ընկավ...»:

Պատերազմի վերջին օրվա զոհերը... Նրանցից յուրաքանչյուրի համար հուզվում էին յուրովի: Սա, երևի, ավելի ծանր էր նրանով, որ այդքան տառապանքից, հերոսությունից, համբերությունից հետո, երբ մինչև հաղթանակ մի գիշեր էր մնում միայն, ընկնում էին, զոհվում...:

1942 թվականին ստանալով բժշկի դիպլոմ՝ Սուրեն Յովհաննիսյանը զորակոչվում է բանակ: Թիֆլիսում բժշկական անձնակազմի երկամսյա դասընթացներ անցնելուց հետո՝ ուղարկվում է ծառայության 320-րդ դիվիզիայի կազմում՝ որպես 478-րդ գնդի կրտսեր բժիշկ: Ռազմական մկրտությունը ստացել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատում, պատերազմի ճամփաներով հասել մինչև Քյոնիգսբերգ ու ապրել հաղթանակի բերկրալի պահը:

Կարելի է ասել, որ Սուրեն Յովհաննիսյանը բախտավոր աստղի տակ էր ծնվել: Քանի՜-քանի՜ անգամ է հրաշքով փրկվել ռազմի դաշտում, ուր վիրահատություններ էր անում արկերի ու ռումբերի պայթյունների տակ, քանի՜-քանի՜ անգամ է զիվորի կյանքը փրկելու համար վտանգ

գել իր իսկ կյանքը, նույնքան երիտասարդ, նույնպես խանդավառ, նույնչափ կյանքի սիրով լեցուն: Եվ ճակատագիրը ժպտացել է նրան, խնայել, ողջ ու անվնաս վերադարձրել հարազատների գիրկը:

Խաղաղ օրերի բժշկությունը Սուրեն Յովհաննիսյանը սկսել է 1946 թվականի ապրիլին:

... Ավելի քան 130 գիտական աշխատությունների, մեծագրությունների հեղինակ պրոֆեսոր Սուրեն Յովհաննիսյանը հանրապետության բժշկական մտքի համար ստեղծել է մնայուն գիտական արժեքներ: Նա ամենահարգված ու ամենաճանաչված վիրաբույժներից է:

Պրոֆեսորի կենսագրության մեջ շատ հետաքրքիր դիպվածներ կան՝ կապված անվանի մարդկանց հետ: Դրանցից մեկը խիստ ուշագրավ է. «Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը բուժվում էր չորրորդ գլխավոր վարչության հիվանդանոցում: Ինքը՝ պրոֆեսորը, այդ տարիներին ՀՀ ԱՆ գլխավոր վիրաբույժն էր, և կաթողիկոսի բուժումը իրեն էին վստահել: Ու ահա երկար նստել էր կաթողիկոսի մոտ հիվանդասենյակում և երբ պիտի դուրս գար, հրաժեշտի պահին ասում է.

- Դե՛, Վեհափառ, ես գնացի, Աստված Ձեզ հետ...»

Սրբազանը, գուցե կատակով, բայց շատ լրջորեն ընդհատում է նրան.

- Ձե՛, այսօր Աստված ինձ հետ գործ չունի, այսօր իմ աստվածը դու ես...»:

«ԱՆՀԱՅՑ ԶԻՆՎՈՐՆԵՐ ԶԿԱՆ...»

«Պետք է կազմակերպել վիրավորների տեղափոխությունը դեպի Դնեպրի հակադիր ափը և վերադառնալի նրանց տեղ հասցնելուց անմիջապես հետո: Շուրջը մահ էր, ռմբակոծության որոտ, օգնության կանչ, հույսով ու սպասումով լի հայացք, ուղղված ինձ՝ իրենց հասակակից բժշկին: Տեղափոխեցի, պետք է վերադառնալի, հանդիպեցի ընկերներիցս մեկին: Ասաց, որ վիրավորները շատ են, չեն հասցնում վիրահատել: Խնդրեց օգնել: Մտա վիրահատարան: Այնտեղից դուրս գալ չէի կարող: Այն է, ցանկանում էի ասել, որ ժամանակն է գնալ, երբ մայում էի վիրահատվածի փոխարեն սեղանին դրված հերթական ջահել զինվորի օգնություն հայցող հայացքին, կամ ընկերոջս դեմքին, որի յուրաքանչյուր նյարդը կարծես պահանջում էր՝ օգնիր, խնդրում են, նորից վերցնում էի վիրահատական դանակը»:

Հիմա չի հիշում հանրապետության վաստակավոր բժիշկ, ստեղծման օրվանից Հայաստանի ուրուղուների



Վետերաններ, ամրացրեք շքանշանները

գիտաբժշկական կազմակերպության վարչության նախագահ **Ավետ Միղոյանը**, թե այդ օրը քանիսին վիրահատեց: Միայն հիշում է, որ այն իր վիրահատական մկրտության օրն էր, և ինքը գերմարդկային ճիգերով էր կարողանում ուղքի վրա կանգնած մնալ: Վերադարձին, իհարկե, «կարգազանց» կրտսեր բժիշկը պատժեց ուշանալու համար, բայց ցավից տնքացող ուրբերն ու ձեռքերը կարծես շնչում էին՝ ոչինչ:

Հիշողությունները թևեր են տալիս, ու որքան էլ ծանր, անցյալի հիշողությունները հեքիաթի են նման, քանի որ քեզ դեպի քո երիտասարդությունն են տանում, քո սկիզբը, թեկուզ այն զուգադիպի պատերազմի առաջին օրվան:

«Գեղեցկադեմ ընկերուհուն հետ թատրոնից դուրս եկանք: Կեսգիշերն անց ճանապարհեցի՝ հաջորդ օրը՝ հունիսի 22-ին, նրա համերգից առաջ հանդիպման ժամադրությամբ: Հասկանալի է՝ համերգը չկայացավ: Հանձնեցինք վերջին քննությունն ու մեկ ամիս անց արդեն ռազմաճակատ էի մեկնում: Օդեսայից նավը դուրս եկավ այն ժամանակ, երբ թշնամու ռմբակոծիչները առաջին անգամ կրակի հեղեղ էին թափում քաղաքի վրա: Նավից վերջին անգամ նայեցի քաղաքին: Շենքերից մեկն այրվում էր: Եվ այնքան շատ էր նման ջահի, այրվող ջահի: Այդքան ավեր, մահ, հրդեհներ տեսնելուց հետո իմ մեջ չընջվեց ջահի նմանվող առաջին հրդեհի տպավորությունը:

Տարիներ անց շրջում էի Դնեպրի առափնյա այն մասերում, որտեղ մարտնչել ենք թշնամու ու նաև մահվան դեմ: Աշխատում էի հիշել բոլորին, հատկապես նրանց, ովքեր դարձան անհայտ զինվոր: Նրանցից յուրաքանչյուրն ուներ իր անունը, ծննդավայրը... Շատերը քսան տարեկան էլ չկային՝ հոգում սեր ու անսահման երազներ: Եվ այդ անանուն զինվորներից յուրաքանչյուրի անունը այնտեղ, ճակատային գծից հազարավոր կիլոմետրեր հեռու դողացող շուրթերով արտասանում էին մայրը, սիրած աղջիկը: Յուրաքանչյուրը սիրում էր կյանքը անհագ մի սիրով, և հենց այդ կյանքի համար էլ զոհվեցին՝ երբեմն կորցնելով սեփական անունը: Անանուն զինվորներ չկան»:

«ԵՆ ՈՂՋ ԿՄՆԱՍ, ՄԱՅՐԻԿ...»

Դասախոսություն էր, երբ ներս մտան լսարան ու ասացին, որ պատերազմ է: Առջևում ամառային արձակուրդներն էին, որ այդպես էլ արձակուրդ չդարձան: Այսպես սկսվեց պատերազմը չորրորդ կուրսի ուսանող **Հարություն Մինասյանի** համար: 1942 թվականին ավարտեց ինստիտուտը և հունվարի 1-ին արդեն զինկոմիսարիատում էր: Ռազմի ճամփաները նրան Կովկասյան ռազմաճակատ տարան: Մինչև առաջին ռմբակոծությունը, առաջին վիրավորը, մի տեսակ չէր պատկերացնում՝ ի՞նչ է պատերազմը իրականում:

«Ուղղակի գիտեիք, որ մեր գործն արդար է, և հաղթանակը մերն է լինելու: Եվ որքան էինք համոզված, և այդ ի՞նչ ուժ էր մեզ թևեր տալիս»:

Հայրենասիրություն: Յուրաքանչյուրիս մեջ արմատներ ունի այս զգացումը: Ու երևի միայն հայրենիքը վտանգի մեջ տեսնելու պահին է այն մեր մեջ ահագնանում ու դրդում սխրանքների: Ծովային ճամփաները Մալայա Ջեմլայա էին տանում մեր ռազմիկներին, նրանց մեջ նաև գնդի կրտսեր բժշկին: Առաջին վիրավորները... Որքան տարբեր են այս հիվանդները նրանցից, որոնց տեսել էր կլինիկաներում ուսանողական տարիներին:

«Մալայա Ջեմլայա... Այնպիսի դժոխային ռմբակոծու-

թյուն էր, որ թվում էր, եթե անգամ չվիրավորվենք՝ կխեղդվենք շնչահեղձությունից: Օր ու գիշեր վիրահատում էինք: Վիրավոր բերեցին: Անհրաժեշտ էր հեռացնել ուղքը: Վերցրի վիրահատման դանակը «... հանկարծ աչքիս առաջ այնքան հստակ, այնքան լուսավոր, ժպտուն, բարի երևաց մայրս, ես այնպես էի կարոտել նրան, ցանկացա հանգստացնել, ասել, որ չվախենա, ես դեռ ողջ եմ, կվերադառնամ: Այդ ամենը ինչքան տևեց՝ չգիտեմ, միայն մի պահ թվաց, թե կանչում են ինձ: Աչքերս բացեցի: Պարզվեց՝ վիրավորվելուս երրորդ օրն է, արթնացնում են»:

1941 թվականին զորակոչված՝ նախ որպես գնդի կրտսեր, այնուհետև՝ ավագ բժիշկ, ապա բուժսանմասի պետ Հարություն Մինասյանը հենց վիրահատության պահին էլ ծանր վիրավորվում է և 1945 թվականի վերջին զորացրվում բանակից:

Տարիներ առաջ Մալայա Ջեմլայում էր: Վերհիշելու, վերապրելու շատ բան ուներ «Աշխատանքային Կարմիր դրոշի» շքանշանակիր, հանրապետության վաստակավոր բժիշկ Հարություն Մինասյանը:

Երեք կենսագրություն, երեքն էլ այնքան նման միմյանց: Ավարտել են դպրոցը, ընդունվել բժշկական ինստիտուտ: Պատերազմի կապակցությամբ ժամկետից շուտ՝ գերազանցության դիպլոմով ավարտել են ինստիտուտը, մեկնել ռազմաճակատ: Հազարավոր կյանքեր են փրկել, վիրավորվել են, ապաքինվել, նորից մեկնել գործող բանակ, վերադարձել շքանշաններով, մեդալներով, պատվոգրերով: Հաղթանակից հետո կուսակցության 15-րդ համագումարի կոչին արձագանքելով՝ երիտասարդ բժիշկները մեկնել են հանրապետության հեռավոր շրջաններ, կազմակերպել ու ղեկավարել բնակչության բուժապասարկման գործը: Այնուհետև՝ տարիներ անց, նրանք նորից եկել են Երևան, իրենց սիրելի ուսուցչի՝ պրոֆեսոր Յուլյանի մոտ: Պաշտպանել են գիտական դիսերտացիաներ, և մինչև այսօր էլ շարունակվում է Հայրենական մեծ պատերազմի վետերաններ, հանրապետության անվանի վիրաբույժներ Սուրեն Հովհաննիսյանի, Ավետ Միղոյանի և Հարություն Մինասյանի մարտական ընկերությունն ու համատեղ աշխատանքը:

Նրանցից առաջինը՝ Ս. Հովհաննիսյանը 320-րդ դիվիզիայի 478-րդ գնդի, այնուհետ՝ 10-րդ հրետանային դիվիզիայի 158-րդ գնդի կազմում Սոզոկից հասել է մինչև Քյոնիգսբերգ:

Ա. Միղոյանը 74-րդ Չապայան դիվիզիայում սկսեց իր մարտական ուղին, մասնակցեց Դնեպրի գետանցին, Ստալինգրադի ճակատամարտին:

Իսկ Հ. Մինասյանի մարտական մկրտության վայրը Մալայա Ջեմլայան էր:

Մենք զրուցում էինք, ու ես նրանց խանդավառ հայացքներում երիտասարդ օրերին առնչվելու երջանիկ պահեր էի տեսնում: Այդ պահերին նրանք այնպես տարբեր էին այն պահերից, երբ յուրաքանչյուրը մի պահ վերադառնում էր իր այսօրվան, դառնում ավելի մտախոհ, փոքր-ինչ հոգնած, տարիների բեռն ուներին: Ժամանակը չի խնայել երեկվա կրտսեր բժիշկներին և դարձրել է վետերաններ:

Հենց միայն այն, որ մեր զրույցի ընթացքում նրանցից յուրաքանչյուրը մի քանի անգամ մոտեցավ հեռախոսին ու տեղեկացրեց, որ շուտով կգա, խոսում էր այն մասին, որ նրանց սպասում են, սպասում են միշտ, սպասում են անհամբերությամբ:

Հողվածս ավարտում եմ՝ ներողամտություն հայցելով բոլոր նրանցից, ում անունները չնշեցի: Սակայն նրանցից յուրաքանչյուրը հերոս է՝ զոհված՝ թե վերադարձած...

ԱՊՊԱԿ ԲԺԻՇԿ

1985 թ. ապրիլի 16, թիվ 14

Ս. ԹՈՐՈՍՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՄԵԾԱՐՎԵՑԻՆ

Վերջերս Երևանի Մ.Յերացու անվան պետական բժշկական համալսարանի գիտական խորհրդի հերթական նիստին մեծարում էին ԵՊԲՀ բազմավաստակ հոբելյարներին, ինչպես նաև՝ վերջերս պետական բարձր պարգևների արժանացած աշխատակիցներին:

Գիտակրթության և գործնական առողջապահության ոլորտում ունեցած նշանակալի ավանդի և...



... ծննդյան 75-ամյակի կապակցությամբ Երևանի Մխիթար Յերացու անվան պետական բժշկական համալսարանի ոսկե շքանշանով պարգևատրվեց ԵՊԲՀ կենսաքիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Միխայիլ Իոսիֆի Աղաջանովը:




... ծննդյան 70-ամյակի կապակցությամբ Երևանի Մխիթար Յերացու անվան պետական բժշկական համալսարանի ոսկե հուշամեդալով պարգևատրվեց ԵՊԲՀ թերապիայի թիվ 2 ամբիոնի պրոֆեսոր Էդուարդ Եղիշի Նազարեթյանը:



... ծննդյան 85-ամյակի կապակցությամբ Երևանի Մխիթար Յերացու անվան պետական բժշկական համալսարանի ոսկե հուշամեդալով պարգևատրվեց ԵՊԲՀ ախտաբանական անատոմիայի և կլինիկական մորֆոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր Ջանիբեկ Ղազարի Գևորգյանը:



Ռազմական բժշկության ոլորտում և ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի կայացման գործում ունեցած մեծ ավանդի համար ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «Դրաստամատ Կանայան» մեդալով պարգևատրվեց պրոֆեսոր Բենիկ Նիկոլայի Հարությունյանը:



... ծննդյան 90-ամյակի կապակցությամբ Երևանի Մխիթար Յերացու անվան պետական բժշկական համալսարանի ոսկե հուշամեդալով պարգևատրվեց նախկինում ԵՊԲՀ լատիներեն և օտար լեզուների ամբիոնի դոցենտ Հակոբ Թորոսի Առաքելյանը:

Բոլոր պարգևատրվածները շնորհակալական խոսքեր ասացին և հավաստիացրին, որ այսուհետ էլ իրենց ողջ եռանդն ու կարողություններն են ներդնելու սիրելի ԲՈՒՀ-ի և գիտության զարգացման կարևորագույն գործում:

ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՀՈՒԲԵԼՅԱՐՆԵՐԸ

Գիտական խորհրդի անդամները շնորհավորեցին նաև Հայաստանի Հանրապետության անկախության 23-րդ տարեդարձի կապակցությամբ պատվավոր կոչումների արժանացած մեր աշխատակիցներին՝ վիրաբուժության թիվ 4 ամբիոնի վարիչ, «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրի վիրաբուժական կլինիկայի ղեկավար, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուշեղ Միսակի Միրիջանյանին, ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր միկրովիրաբույժ, պլաստիկ վիրաբուժության ամբիոնի վարիչ, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ Արտավազ Բագրատի Սահակյանին, «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի մանկական սրտաբան, բժշկական գիտությունների թեկնածու Հովհաննես Գևորգի Ջոհրաբյանին և գինեկոլոգիայի ամբիոնի վարիչ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Արտաշեսի Բեգլարյանին, ինչպես նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցած արարողության ընթացքում պարգևատրված՝ բժշկական համալսարանի առաջատար մասնագետներին:

Այս մասին առավել մանրամասն «ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿԸ» ներկայացրել է իր հոկտեմբերյան թողարկման մեջ:

Ստորև տպագրվող մեջբերումը «Քրիստոնյա Հայաստան» թերթից է:



... Հայրենանվեր ու ազգօգուտ ծառայության, ինչպես նաև գիտական և առողջապահական ոլորտում ունեցած ձեռքբերումների համար Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշան է շնորհվել հայտնի բժիշկ-դեղագետ, հանրապետության դեղաբանության դպրոցի հիմնադիր, մանկավարժ և հասարակական գործիչ, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, ԵՊԲՀ նախկին ղեկավար, այժմ՝ ԵՊԲՀ ղեկավարի խորհրդական, ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, միջազգային ակադեմիկոսների և գիտական ընկերությունների պատվավոր անդամ,


բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վիլեն Պարույրի Հակոբյանին:

Շքանշանի հանձնման առիթով ակադեմիկոս Վիլեն Հակոբյանին ուղղված Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի հայրապետական կոնդակում մասնավորապես նշված է՝ հղումը. «...Աստվածապարզ Ձեր կյանքը Դուք ապրում եք Հայրենի մեր երկրի հանդեպ որդիական սիրով՝ միշտ ձգտելով Ձեր կարողությունները ծառայեցնել հավատավոր մեր ժողովրդին: Երկար տարիներ Դուք ղեկավարեցիք Երևանի Մ. Հերացու անվան բժշկական համալսարանը, հեղինակեցիք բազմաթիվ գիտական ուսումնասիրություն-

ներ ու աշխատություններ՝ զնահատարժան վաստակ բերելով ի նպաստ մեր երկրում առողջապահության բնագավառի զարգացման:

Այսօր առիթ ունենք առանձնակի գոհունակությամբ անդրադառնալու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդեպ որդիական Ձեր անկեղծ սիրուն ու նվիրումին: Տարիներ շարունակ, որպես Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, Դուք նախանձախնդիր ջանքեր եք բերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելության առավել արդյունավորմանը, նույն անսպառ եռանդով Ձեր հարուստ փորձառությունը ծառայեցնում Մայր Աթոռի «Իզմիրյան» հիվանդանոցի գործունեությանը՝ ի սպասավորություն մեր ժողովրդի զավակների: Մեզ համար ուրախություն է մշտապես ականատես լինել Ձեր էջմիածնասիրությանը, որ արտահայտում եք Ձեր եկեղեցանվեր ընթացքով ու ստանձնած աստվածահաճո հանձնառություններով:

Երկարամյա մեր ծանոթության ընթացքին սրտի բերկրանոք բազմիցս առիթ ենք ունեցել տեսնելու Ձեր բարի ու անկեղծ ոգու անվերապահ նվիրումը և անսակարկ հավատարմությունը՝ հանդեպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին և առ Ամենայն Հայոց կաթողիկոսությունը»:





ՀՄՏԱՆԱԼ ՎԱՐԺԱՍԱՐՔԵՐԻ ՎՐԱ

- Թե՛ ո՞րն է կենտրոնի ստեղծման նպատակը, արդեն պարզ է: Ի՞նչ կասեք նրա դերի մասին:

- Սիմուլիացիոն կենտրոնը չափազանց կարևոր դեր է ունենալու մեր ուսանողներին լավ բժշկներ պատրաստելու գործընթացում: Ուսանողներն այս մուլյաժների վրա կատարելու են այն նույն գործողությունները, որոնք նախկինում և հիմա կատարվում են իրական մարդկանց ու հիվանդների վրա: Եթե հիվանդների վրա փորձեր անելու ժամանակ կարող են լինել սխալներ կամ նրանց կյանքին վտանգ սպառնացող դեպքեր, ապա այս դեպքում այդ ամենը կատարվում է արդեն մի քանի անգամ, և կարիք չկա վախենալու, որ կլինեն սխալներ: Մուլյաժների վրա ուսանողները կարող են փորձեր կատարել նույնիսկ 5-10 անգամ և, արդեն հմտացած՝ այդ ամենը կարող են կիրառել իրական հիվանդների վրա:

- Ի՞նչ եք կարծում, որքանով կենտրոնը կնպաստի ուսանողների կողմից կլինիկական առարկաների յուրացմանը:

- Ես համոզված եմ, որ դա այդպես է լինելու: Պետք է ասեմ, որ ուսանողության մեջ արդեն մեծ արձագանք կա, բոլորը հետաքրքրվում են, թե ե՞րբ է բացվելու կենտրոնը: Ես վստահ եմ, որ նրանց մեծ մասը, եթե ոչ բոլորը, ակտիվ կերպով հաճախելու են և պարապելու են այս մուլյաժների վրա:

- Դա կփոխարինի, արդյո՞ք, իրական հիվանդներին:

- Այո, միանշանակ կփոխարինի: Կան բազմաթիվ հիվանդություններ և վիճակներ, որոնց այս մուլյաժները լիովին փոխարինում են: Ռեանիմացիոն բոլոր վիճակները, նույնիսկ կրիտիկական պաթոլոգիկ վիճակները մենք կարող ենք ստեղծել մուլյաժների վրա և ուսանողներին ցույց տալ, թե ինչպես պետք է այդ վիճակներից դուրս գան:

- Խոսեք մի փոքր կենտրոնի ստեղծման պատմությունից:

- Կենտրոնը ստեղծվել է համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ: Բժշկական համալսարանը շահել է համաշխարհային բանկի գրանտ, և 1 տարվա ընթացքում կազմակերպվել են բոլոր աշխատանքները սիմուլիացիոն կենտրոն

Փաղտնիք չէ, որ բժշկական կրթությունը անհնար է իրականացնել առանց հիվանդի, հիվանդության հետ շփվելու: Միշտ էլ ծառայել է այն բարդությունը, որ բժշկական բուհերի ուսանողները հնարավորություն չունեն աշխատել հիվանդի հետ, քանի որ հիվանդներն իրենք համաձայն չեն լինում հայտնվել փորձարկվողի դերում: Եվ շարունակում է հարատևել այս մտահոգությունը՝ ինչպե՞ս կազմակերպել ապագա բժշկների մասնագիտական ուսուցումը:

21-րդ դարը, իր գիտատեխնիկական նվաճումներով ընձեռեց այն հնարավորությունը, որ վերջնականապես լուծվի տարիների տևողությամբ այս հիմնահարցը: Մուլյաժները, մարդուն և նրա օրգաններին նմանեցված դիդակտիկ վարժասարքերը հնարավորություն են տալիս նյութը ուսումնասիրել առավել առարկայական տեսքով:

Օրերս կգործարկվի համալսարանական սիմուլիացիոն կենտրոնը, որի առիթով է մեր հարցազրույցը կենտրոնի ղեկավար, բժշկական գիտությունների դոկտոր Սուրեն Հովհաննիսյանի հետ:



ստեղծելու նպատակով: Կազմակերպվել են բազմաթիվ գործուղումներ, որպեսզի մեզ համար ավելի հասկանալի լինեի այդ ամենը ստեղծելու և կազմակերպելու նրբությունները: Բացի այդ՝ գնվել են մուլյաժներ, որոնք բավականին թանկարժեք են՝ 400-500 հազար դոլար արժողությամբ: Այս մուլյաժները մեծ հնարավորություն կտան ուսանողներին սովորել գործնական հմտություններ՝ սկսած ռեանիմացիայից մինչև գինեկոլոգիա և վիրաբուժություն: Համարյա բոլոր բնագավառներից մենք ունենք մուլյաժներ:

- Կենտրոնը հենց սկզբից տեղակայվել է առաջին հիվանդանոցում:

- Երբ կայացվեց կենտրոնի ստեղծման որոշումը, միանգամից որոշվեց այն կենտրոնացնել առաջին հիվանդանոցում: Այս կենտրոնի բացումը համընկնում է հիվանդանոցի 100-ամյակի հետ, և բազմաթիվ ուսանողների համար հիվանդանոցը էլի կմնա «կադրերի դարբնոց»: Ես վստահ եմ, որ այս ամենը կծառայի իր նպատակ



կին, և առաջին հիվանդանոցը կշարունակի իր ավանդույթները:

- Շնորհակալություն հարցազրույցի համար: Հուսով եմ՝ ձեր բոլոր սպասելիքները կիրականանան:

ՎԵՐԵԼՔ ԱՐԱՐԱՏ

Չերթական անգամ որոշեցի բարձրանալ Արարատ: Ամեն տարի Արարատի գագաթը բարձրանալու ցանկություն եմ ունենում: Այս անգամ վերելքիս հիմնական նպատակն այն էր, որ այն նվիրեի Յանո Սահյանի, Յովհաննես Շիրազի, մեր հիվանդանոցի 100-ամյակներին և Ջորավար Անդրանիկի 150-ամյակին: Այդ վերելքի արդյունքում մեր երեք մեծ հայրենասեր հայրենակիցների լուսանկարները դրվեցին Արարատի գագաթին՝ եռագույնի ներքո:

Վերելքը բավականին հաջող էր: Մասնակիցներս 5-ն էինք՝ 3 հայ, 1 գերմանացի և 1 բելգիացի, ով ազնվական ընտանիքից էր: Երբ նա տեղեկացավ, թե այդ վերելքն ինչին էր նվիրված, ջերմորեն ողջունեց այդ ամենը:

Ես արտասանեցի Յ. Շիրազի «Ինձ էլ բերեք Մասսի ձյունից», Յ. Սահյանի «Տարիներս, տարիներս» և «Ախր ես ինչպե՞ս վեր կենամ, գնամ» բանաստեղծությունները: Նաև հնչեցրի մեծ Անդրանիկի խոսքերից՝ «Երբ իրիկունը գլուխներդ բարձին կղնեք, որ քնանաք, մի քիչ մտածեցեք ձեր ազգի մասին»:

Բնականաբար, սա ցուցադրական բան չէր, ես այն արել եմ իմ խղճի, մեր հայրենասերների համար, որտեղ չեմ մոռացել նշել մեր ֆիդայիների անունները, իմ լավ ընկերներից մեկի՝ Թաթուլ Կրպեյանի անունը նույնպես չեմ մոռացել, ով



«Այս վերելքս նվիրված էր նաև «Չերացի» թիվ 1 համալսարանական հիվանդանոցի 100-ամյակին: 100 տարիների ընթացքում հիվանդանոցում բուժվել են միլիոնավոր հիվանդներ, սակայն այսօր հենց հիվանդանոցն ունի «բուժման կարիք»:

Խոսքերի հեղինակը ի պաշտոնեղեկավարում է առաջին հիվանդանոցում իրականացվող վերանորոգման աշխատանքները:



եղել է ուսանողական տարիների իմ ընկերը:

Վերելքը 3-օրյա արշավ էր, որը անցկացվեց օգոստոս ամսին: Սա իմ 8-րդ վերելքն էր, և ես նպատակ ունեմ ամեն տարի բարձրանալ սարի գագաթը:

Ամենահետաքրքիրն այն էր, որ Արարատի գագաթն այս տարի փոխվել էր: Այն բարձրացել էր, քանի որ դրոշի ձողն անցյալ տարի գագաթին հավասար էր, իսկ այս տարի այդ ձողը 50-60 սմ ներքև էր մնացել:

Գագաթ էին բարձրացել նաև տարբեր ազգերի ներկայացուցիչներ, ովքեր մնացին այնտեղ 1 ժամից ավելի: Նրանք ջերմագին խոսքերով ընդունեցին մեր դրոշը, իմ ձեռքից վերցրին ցուցանակը, որի վրա մեր մեծերի նկարներն էին, նկարվեցին ինձ հետ, քանի որ վերնաշապիկիս վրա պատկերված էին Յայաստանի Յանրապետության գերբն ու դրոշը:

- Այս արշավը ձեր նախաձեռնությունն էր, և միայն դու՞ք էիք բժշկական համալսարանից մասնակցում, թե կային նաև այլ մասնակիցներ:

- Բժշկական համալսարանից մասնակցում էի միայն ես, նախաձեռնությունը նույնպես իմն էր: Պետք է անկեղծ լինեմ՝ կարծես մի ժանր քար վար գցած լինեմ ուսերիցս, քանի որ պատանի տարիներին, երբ երագում էի բարձրանալ Արարատ, ես ոգևորվել էի մեծն Շիրազի հայրենասիրությամբ և նվիրվածությամբ իր պապերի երկրին: Նրա այս հայրենասիրության շնորհիվ էր, որ ես կարողացա իրագործել իմ երազանքը և պարտավոր էի այս տարի նրա 100-ամյակի առթիվ իր նկարը բարձրացնել Արարատի գագաթ, որտեղ հանգչում է նրա սիրտը:

Արարատի գագաթից ես ձյուն էի վերցրել, բերեցի այն և արդեն ջուր դարձած ձյունը լցրեցի Շիրազի գերեզմանին՝ ինչպես ամեն տարի: Այդ ջրից լցրեցի նաև Յ. Սահյանի գերեզմանին:

Ինձնագրերի Կարգը

ՕԵՄՁ ԵՄՁ ՄՄՕԾ

ՀՀ առողջապահության «Կոչումով բժիշկ» նախագծի չորրորդ և հինգերորդ անդրադարձերը նվիրված են Մինասյանների և Մալայանների բժշկական ընտանիքներին:



Մինասյանների բժշկական ընտանիքի հարուստ կենսագրության առաջին էջը բացում է Հարություն Մինասյանը: Նա ծնվել է 1920-ի փետրվարի 27-ին, Գյումրիում:

Մինչև 7-րդ դասարանը, Հարություն Մինասյանը սովորել է Հայաստանի երկրորդ մայրաքաղաքի երկաթգծի թիվ 1 դպրոցում, ապա՝ տեղափոխվել Երևան, որտեղ և ավարտել է Մ. Գորկու անվան դպրոցը: 1937-ին ընդունվել է Երևանի պետական բժշկական ինստիտուտ, որն ավարտելուց հետո՝ 1941-ի դեկտեմբերին, գորակոչվել է բանակ: Մասնակցել է Կովկասի պաշտպանական մարտերին, սկզբում որպես գնդի կրտսեր բժիշկ, հետագայում՝ որպես ավագ բժիշկ և բուժսան դասակի հրամանատար: Ռազմաճակատում Հարություն Մինասյանն ամեն օր տասնյակ կյանքեր էր փրկում, սակայն թշնամու գնդակը չէր խնայում նաև նրան: 1943-ին Հարություն Մինասյանը վիրավորվեց, սակայն մինչև կյանքի վերջը երիտասարդ բժիշկը հավատարիմ մնաց երդմանը, ծառայեց մարդուն, փրկեց հազարավոր մարդկանց կյանքեր, դարձավ մարդկանց սիրելի բժիշկը: Նա իր նշանակալից ներդրումն ունեցավ բժշկագիտության զարգացման մեջ: Մալայա Ջենյա փոքրիկ հողում պատերազմի տարիներին փրկելով հազարավոր մարդկանց կյանքեր՝ բժիշկն իր նվիրական գործով ապացուցեց, որ ծնողներն իզուր չէին իրեն Հարություն կոչել:

«Ընտրելով բժշկի մասնագիտությունը՝ նա մեկնել է ռազմաճակատ, որտեղ անհրաժեշտ էր փրկել հայրենիքի համար մարտնչող զինվորների կյանքը: Եվ որով-

հետև ռազմաճակատում ռուս ընկերները չկարողացան սովորել Հարություն Հովհաննեսովիչ կոչել նրան, այդպես էլ նա մնաց Հարություն Իվանիչ»,-ներկայացնելով իրենց բժշկական մեծ ընտանիքի պատմությունը՝ նշում է Հարություն Մինասյանի թողած բժիշկ Հարություն Մինասյանը:

Անվանի վիրաբույժի արխիվում այժմ ոչ միայն նրա մասնագիտական բեղուն ու նվիրական գործունեությունը փաստող լուսանկարներն ու փաստաթղթերն են, այլև՝ նրա փրկած բազմաթիվ հիվանդներից բժիշկ Մինասյանին ուղղված սրտառուչ ու ջերմագին նամակները:

«Մեծարգո Հարություն Հովհաննեսի, Դուք եթե բանաստեղծ, գեղանկարիչ կամ երգահան ծնվեիք, հավասարի իրավունքով կարող էիք կանգել Եղիշե Չարենցի, Արամ Խաչատրյանի և Մարտիրոս Սարյանի կողքին: Դուք այն հազվագյուտ մարդկանցից եք, որոնք չեն վազում փառքի հետևից, այլ հակառակը՝ փառքն է կրկնակիս հետևում նրանց: Ձեր բարի անունը, մեծ համբավը տարածված են ամենուրեք: Թանկագին ու պաշտելի Հարություն՝ որդի Հովհաննեսի, կուռք դալար»: Մեկ այլ նամակում երկարամյա ուսուցչուհի Մարուսյա Առաքելյանը գրում է. «Պատվարժան բժիշկ, միշտ չէ որ հաջողվում է վարձահատույց լինել այնպես, ինչպես մարդ ցանկանում է: Հարգելի բժիշկ, ցանկանում եմ, որ Ձեր մեծ խելքը, հմուտ ու ոսկի ձեռքերը երկար երկար տարիներ ծառայեն մարդկանց: Ես հպարտանում եմ, որ Դուք հայ եք, որովհետև մարդ եք՝ այս բառի կատարյալ իմաստով»:

1944-ին Հարություն Մինասյանը վերադարձել է Երևան, աշխա-



տանքի անցել առաջին հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքում: 1950-ին նա Հայաստանի հեռավոր շրջաններից մեկում՝ Վայքում, աշխատելով որպես բուժմիավորման գլխավոր բժիշկ, միաժամանակ նաև վիրաբուժական բաժնի ղեկավարն էր: Մեկ տարի անց, նա աշխատել է Երևանի 3-րդ հիվանդանոցում՝ պրոֆեսոր Յուլյանի մոտ ֆակուլտետային վիրաբուժության ամբիոնում՝ որպես ասիստենտ, հետագայում՝ նույն ամբիոնի դոցենտ: Ինքնուրույն աշխատանքի ընթացքում կուտակած մեծ փորձի և նյութերի հիման վրա նա ստեղծել է գիտական մեծարժեք աշխատանք՝ լեղուղիների վերականգնողական վիրահատությունների մասին, որը նրա թեկնածուական թեզն էր:

Հարություն Մինասյանը 1953-54 թթ. աշխատել է 3-րդ բուժմիավորման պետի բուժական գծով տեղակալ, քաղխորհրդի պատգամավոր: Անվանի բժիշկի ծառայությունները մեծ են հայրենի բժշկագիտության զարգացման գործում: Նա առաջիններից մեկը կիրառեց ինտուբացիոն նարկոզը, առաջինը կատարեց կերակրափողահատում, որը և, որպես բացառիկ երևույթ, ցուցադրվեց Հայաստանի վիրաբուժական ընկերության Միստում: Նա առաջինը կատարեց սելեկտիվ պրոքսիմալ վագոտոմիա ստամոքսի և 12-մատյա աղիքի խոցային հիվանդության ժամանակ և ներդրեց ՀՍՍՀ վիրաբուժական պրակտիկայում: Մինասյանը բազում հիվանդությունների վիրաբույժ էր, սակայն նրա հիմնական աշխատանքը լյարդ-լեղապարկի, լեղուղիների բուժումն էր, ինչպես նաև էնդոկրին վիրաբուժությունը:

Մանկավարժական ու վիրաբուժական գործունեությանը զուգընթաց, Հարություն Մինասյանը հինգ տարի շարունակ զբաղեցրել է բուժական ֆակուլտետի ղեկանի տեղակալի պաշտոնը՝ այդ ֆակուլտետում կատարելով ուսումնադաստիարակչական արդյունավետ աշխատանք:

1954-56թթ., այնուհետև 1963-76 թթ. բժիշկը եղել է Երևանի գլխավոր վիրաբույժը, համատեղության կարգով աշխատել նաև բժիշկների վերապատրաստման ինստիտուտում՝ որպես ղեկան: Մեծ են հայաստանյան բժշկագիտությանը Հարություն Մինասյանի նատուցած ծառայու-

թյունները: Գրեթե կես դար նվիրվելով բժշկությանը՝ նա միշտ բարձր է պահել բժշկի վեհ անունն ու պատիվը: Իր գործունեությամբ ու վարքագծով օրինակ ծառայել թե՛ ուսանողության, թե՛ գործընկերների համար: Հարություն Մինասյանը մոտ 100 գիտական աշխատությունների հեղինակ է: Նա պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով», «Առողջապահության գերագանցիկ» կրծքանշանով, բազմաթիվ մեդալներով ու պատվոգրերով: 1963-ին արժանացել է վաստակավոր բժշկի կոչմանը: 1965 -ին հիմնել է «Մալաթիա» հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքը և այնտեղ զբաղեցրել է ինստիտուտի ֆակուլտետային վիրաբուժության ամբիոնի մասնաճյուղի ղեկավարի պաշտոնը: Իր երկարամյա գործունեության ընթացքում հազարավոր կյանքեր, տասնյակ հազարավոր հույսեր է փրկել հանրապետության վաստակավոր բժիշկը:

Հարություն Մինասյանը մասնակցել է «Էրեբունի» հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքի հիմնադրմանը, որտեղ տեղափոխվել էր բժշկական ինստիտուտի ֆակուլտետային վիրաբուժության ամբիոնի մասնաճյուղը հիվանդանոցի բացման առաջին օրվանից: Մինչև 1988-ը, նա աշխատել է՝ որպես ինստիտուտի ֆակուլտետային վիրաբուժության ամբիոնի մասնաճյուղի և վիրաբուժական կլինիկայի ղեկավար: Հարություն Մինասյանը գործի հանդեպ մեծ սերը փոխանցեց որդուն, ապա նաև թոռանը, նրա գործը շարունակելը խոսում է այն մասին, որ նշանավոր բժիշկը թողել է մեծ ժառանգություն:

«Ցավոք, չեն աշխատել ոչ մեծ հորս՝ Հարություն Մինասյանի, և ոչ էլ հայրիկիս՝ Լեոնիդ Մինասյանի հետ: Ուսանող էի, երբ հայրս մահացավ, դպրոցում էի, երբ մեծ հայրս մահացավ: Բայց ամեն անգամ, երբ հիվանդներս այցելում են ինձ, տեսնելով՝ Մինասյան ցուցանակը, կարդում և հարցնում են՝ Դուք կապ ունե՞ք Հարություն Մինասյանի, Լեոնիդ Մինասյանի հետ, և իհարկե ես մեծ հպարտություն եմ և ուրախություն եմ ապրում»,-իրենց բժշկական մեծ գերդաստանի պատմությունը շարունակելով՝ նշում է Հարություն Մինասյանի թողը՝ վիրաբույժ Հարություն Մինասյանը:





Ինքնաշարժի Վերջ Օ՞ր Է՞ր Կ՞ր Կ՞ր Կ՞ր Կ՞ր



Մալայանների ակնաբուժական հայտնի տոհմի հիմնադիրը Թբիլիսիում մեծ համբավ ունեցող ակնաբույժ, պրոֆեսոր Արտաշես Գրիգորի Մալանն է: Մալայանների ազգատոհմի մեջ ընդգրկված են թե՛ Մալայանները, և թե՛ Մալանները, ովքեր միասին ծնունդ են տվել ակնաբույժների միանգամից մի քանի սերունդների:

Մալայանների բժշկական ընտանիքի առաջին սերնդի ներկայացուցիչը Արտաշես Մալանն է: «Նա իմ պապիկի հորեղբայրն էր, ով պրոֆեսոր էր: Մալանը Թբիլիսիում հայտնի էր որպես բժշկական համալսարանի երկու ամբիոնների պրոֆեսոր, ղեկավարում էր ակնաբուժության ամբիոնը, ինչպես նաև տոպոգրաֆիկ անատոմիայի և պլաստիկ վիրաբուժության ամբիոնի վարիչն էր: Արտաշես Մալանը Թբիլիսիում սեփական մեծ ակնաբուժական հիվանդանոց ուներ, մասնավոր գործունեությանը զուգահեռ նաև դասավանդում էր ԲՈՒՅ-ում: Ակնաբույժ էր նաև Արտաշես Մալանի հորեղբորորդին՝ Անդրանիկ Մալանը, ով աշխատում էր առաջնային բուժօղակում: Նրանք մեր բժշկական ընտանիքի առաջին սերունդն են», - ներկայացնելով իրենց բժշկական ընտանիքի պատմությունը՝ նշում է բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի Մալայանի անվան ակնաբուժական կենտրոնի տնօրեն, Երևանի Մ. Զեթացու անվան բժշկական համալսարանի աչքի հիվանդությունների ամբիոնի վարիչ, ԶԶ առողջապահության նախարարության գլխավոր ակնաբույժ Ալեքսանդր Մալայանը:

Պրոֆեսոր Արտաշես Մալանը գավակներ չունեի, նրա եղբորորդին՝ Ալեքսանդր Մալանը, Թբիլիսիի պետական բժշկական համալսարանը ավարտելուց հետո տեղափոխվել է Մոսկվա, որտեղ աշխատել է Զելմիոլցի անվան գիտահետազոտական ինստիտուտում: Բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսորը ԲՈՒՅ-ի բաժնի ղեկավարն էր, Մոսկվայում ճանաչված ակնաբույժ: «Նա և հայրս՝ Սերգեյ Վարդանի Մալայանը, ներկայացնում են բժշկական մեր ընտանիքի երկրորդ սերունդը: Քանի որ Արտաշես Գրիգորիչը գավակներ չունեի, կարելի է ասել

հայրս և Ալեքսանդր Մալանը նրա հոգեգավակներն էին: Զորաքույրս՝ Վարվառա Մալայանը, ևս ակնաբույժ էր, նա ապրում էր Թբիլիսիում», - պատմում է Ալեքսանդր Մալայանը:

Սերգեյ Մալայանը 1953 թվականին տեղափոխվել է Երևան և ընդունվել օրդինատուրա՝ բժշկական ինստիտուտի աչքի հիվանդությունների ամբիոնում: Թեկնածուական դիսերտացիան պաշտպանել է 1958 թվականին: Նա հեղինակել է տեսողության ստուգման հայերեն աղյուսակը: Բժշկի մասնագիտությունն ընտրելով՝ Սերգեյ Մալայանը հրաժարվեց Թբիլիսիում մնալու գալթակալից հնարավորությունից և իր հորեղբայր Արտաշեսի՝ ժամանակակից սարքավորումներով հագեցած կլինիկայում աշխատելուց: Կարդալով հայաստանյան «Կոմունիստ» թերթի հայտարարությունը, որտեղ մրցույթ էր հայտարարվում ակնաբուժության գծով ասպիրանտուրա ընդունվելու համար, նա ուղևորվեց Երևան: «Զայրս, թեև մեծ հեռանկարներ ուներ Թբիլիսիում, բայց նախընտրեց բժշկական գործունեությունը շարունակել Երևանում: Նա, թողնելով Թբիլիսիում պապիկիս պատկանած այդ ամբողջ մասնագիտական և նյութական ժառանգությունը, որոշեց գործել ինքնուրույն և ամեն ինչ սկսեց զրոյից: Պապիկս՝ Վարդան Մալայանը, զոհ գնաց 1937 թվականի ստալինյան ռեժիմին: Բոլորը՝ այդ թվում հարազատները, ծանոթներն ու ընկերները երես էին թեթել: Այդ էր պատճառը, որ 14-ամյա Սերգեյ Մալայանը սկսեց աշխատել, որպեսզի պահեր ընտանիքը: Սեր ընտանիքի խնամքը իր վրա վերցրեց պրոֆեսոր Արտաշես Մալանը, տատիկս, հորաքույրս և հայրս փրկվեցին հենց նրա շնորհիվ: Սերգեյ Մալայանը ակնաբուժական գործունեությունը սկսեց Բայազետից, ներկայիս Կամոյի շրջանից, որտեղ նա աշխատում էր որպես ակնաբույժ: Զայրս երկու-երեք տարի աշխատեց այնտեղ, զուգահեռ՝ նաև ակնաբուժական առաջին հիվանդանոցում, որը հիմա համալսարանական կլինիկան է: Այն հիմնադրվել է Նուբար փաշայի կողմից՝ ի հիշատակ իր կույր դստեր», - շարունակում է պատմությունը Ալեք-

սանդր Մալայանը:

Աշխատելով Երևանի Մխիթար Զերացու անվան բժշկական ինստիտուտում՝ Սերգեյ Մալայանն անցել է երկար ճանապարհ՝ ուսանողից մինչև աչքի հիվանդությունների ամբիոնի ղեկավար: Ս. Մալայանը ռուս-լատինական եզակի բառարանի, հիսուն գիտական աշխատանքների, ինչպես նաև «Ֆիզիոլոգիական օպտիկայի և աչքի անատոմիա» դասագրքի հեղինակն է: Մեծ է Սերգեյ Մալայանի ներդրումը Հայաստանում ակնաբուժության զարգացման գործում: Երևանի ակնաբուժական կենտրոնը կազմավորվել է 1978 թվականին Հայաստանի գլխավոր ակնաբույժ Սերգեյ Մալայանի գլխավորությամբ՝ հանրապետական տրախոմատոզ-գլաուկոմատոզ դիսպանսերի բազայի վրա (1952 թ.): Այդ իսկ պատճառով ակնաբուժական կենտրոնը 1998 թվականից կրում է առաջադեմ գիտնականի և բժշկի անունը: Այսօր Հայաստանում այն ամենախոշոր ակնաբուժական կենտրոնն է, որտեղ աշխատում են 200-ից ավելի աշխատակիցներ:

Մալայանների ակնաբուժական մեծ ընտանիքի երրորդ սերունդը ներկայացնում է Ալեքսանդր Սերգեյի Մալայանը, ով 1975-77թթ. սովորել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի աչքի հիվանդությունների կլինիկական օրդինատուրայում: 1977-78թթ.-ին աշխատել է ակնաբույժ՝ Երևանի 5-րդ բուժմիավորումում: Ալեքսանդր Մալայանը 1978 թվականից աշխատում է ԵՊԲՀ-ի աչքի հիվանդությունների ամբիոնում, սկզբում՝ որպես ասիստենտ, իսկ առ այսօր՝ պրոֆեսոր, ամբիոնի վարիչ: Ալեքսանդր Մալայանը 1982 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը: 1978 թվականից մինչ այսօր Ս. Մալայանը աշխատում է Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոնում: Սկզբում, որպես բաժանմունքի վարիչ, այնուհետև՝ բուժական գծով տնօրեն, իսկ այժմ՝ տնօրեն: Ալեքսանդր Մալայանը 90-ականների սկզբին զարկ տվեց հայ ակնաբուժության զարգացմանը՝ ներդրելով միջազգային նոր գիտելիքներ և փորձ հետխորհրդային Հայաստանում: Չզնահատել և չտեսնել այս զարգացումը անհնար է: Առաջին անգամ Հայաստանում կլինիկական պրակտիկայում նա ներդրել է հետևյալ միկրովիրաբուժական մեթոդները՝ կատարակտի հեռացում արհեստական ոսպնյակի տեղադրմամբ, ֆակոէմուլսիֆիկացիա:

«Ես երրորդ սերունդն եմ՝ ակնաբույժների մեծ ընտանիքի վեցերորդ ներկայացուցիչը: Ճակատագրից հեռու չես գնա, քանի որ մանկական տարիքից պապիկիս տանն եմ եղել՝ մասնագիտական գրականություն, բժշկական սար-

քավորումներ, մի խոսքով մեծացել եմ այդ մթնոլորտում: Դպրոցական տարիներին չէի ուզում բժիշկ դառնալ: Մեր դասարանում էր սովորում Վիգեն Մալխասյանը, ում հայրը հայտնի վիրաբույժ էր: Նա գնում էր հոր մոտ վիրահատության, 10-րդ դասարանում էինք, ինձ ևս տարավ իր հետ, հայրը ստամոքսի ռեզեկցիա պետք է աներ: Գնացինք վիրահատարան, մարդ չկար, վիրաբուժական թիմն էր և մենք երկուսով, այն ժամանակ հասկացա, որ իմ ճակատագիրը դա է: Ուսումնառության առաջին տարիներին չէի կողմնորոշվում՝ ակնաբույժի, թե վիրաբույժի նեղ մասնագիտությունն ընտրեմ: Հատկապես որ հանդիպել էի փայլուն վիրաբույժների, ի դեմս Հարություն Մինասյանի, Վիգեն Մալխասյանի...

Մալայանների բժշկական գերդաստանի չորրորդ սերնդի ներկայացուցիչը էլենա Ալեքսանդրի Մալայանն է: Նա դեկավարում է Ս. Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոնի նորագույն ակտորոշման և լազերային բուժման բաժանմունքը: «Ինձ մոտ երբեք կասկած չի առաջացել, թե ինչ մասնագիտություն ընտրեմ: Ինձ համար հստակ էր, որ պետք է բժիշկ դառնամ: Հենց ակնաբույժ դառնալը, թե մեկ այլ մասնագիտություն ընտրեմ, միանշանակ, պայմանավորված էր միջավայրով, ընտանեկան ավանդույթներով: Ինձ համար մեծ հպարտություն ու երջանկություն է իմ ծնողների գործը շարունակելը: Մեծ պատասխանատվություն է «Մալայան» ազգանունը կրելը», - նշում է էլենա Մալայանը: «Իմ ավագ դուստրը՝ Ջառա Մալայանը, բժիշկ չէ մասնագիտությամբ, սակայն մեծ դեր է խաղում մեր ակնաբուժական ընտանիքում: Լինելով մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի գծով իմ տեղակալը՝ նա կարևոր աշխատանք է կատարում մեր կենտրոնի աշխատանքների առաջնման գործում ոչ միայն Հայաստանում, այլև մեր երկրի սահմաններից դուրս», - ասում է Ալեքսանդր Մալայանը, ում գնահատմամբ՝ գործունեության այս տեսակն առանձնակի արդիական է մեր օրերում:

Ակնաբույժների այս մեծ ընտանիքի հինգերորդ սերնդի ներկայացուցիչը Սուսաննա Նահապետյանն է՝ էլենա Մալայանի դուստրը, ով սովորում է Մ. Զերացու անվան պետական բժշկական համալսարանի 4-րդ կուրսում: Հինգերորդ սերնդի ներկայացուցիչներից է նաև պրոֆեսոր Մալայանի դստեր՝ Ջառա Մալայանի որդին՝ Էդվարդ Բաբայանը, որը ևս բժշկական համալսարանի ուսանող է՝ Մալայանների բժշկական տոհմի առաջին ամենաերիտասարդ բժիշկ-շարունակողը:

